

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ
ՄԱՐԻԱՄ ՍԱՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՈՔԻ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ
ՎՐԱ**

ԵՐԵՎԱՆ 2017



Հրատարակվում է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ



Հետազոտությունն իրականացվել է և հրատարակվում է ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի «Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն» ծրագրի շրջանակներում (Պայմանագիր 10-19/1-2)

Հրատարակվում է ՀՀ Սփյուռքի նախարարության աջակցությամբ

ՀՏԴ 32.001

ԳՄԴ 66.0

Թ 822

Թորոսյան Տիգրան, Սարադյան Մարիամ

Թ 822 Հայկական սփյուռքի հնարավորությունները և ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-քաղաքական գործընթացների վրա/ Տ. Թորոսյան, Մ. Սարադյան. -Եր.: Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն, 2017թ., 183 էջ:

ՀՏԴ 32.001

ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-0-2540-7

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	5
ԳԼՈՒԽ 1. ՍՓՅՈՒՌՔԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ	13
1.1. Սփյուռքների ձևավորման հիմնական նախադրյալները	
1.2. Սփյուռքների տեսակներն ու դրանց բնութագրիչ տարրերը	17
ԳԼՈՒԽ 2. ՍՓՅՈՒՌՔԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ	39
2.1. Ինքնություն և ինտեգրում. հակասող արժեքներ, թե՞ համադրելի շահեր	
2.2. Ինքնության պահպանման հիմնախնդրի ազգային և բաղադրակրթական բաղադրիչները	43
2.3. Քաղաքական ինտեգրման նշանակությունը	51
ԳԼՈՒԽ 3. «ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ-ԸՆԴՈՒՆՈՂ ԵՐԿԻՐ» ԵՌԱՆԿՅԱՆ ԳԱԳԱԹՆԵՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	61
3.1. «Հայրենիք-սփյուռք» փոխգործակցություն. հայրենիքի խնդիրների լուծման արտաքին լծակը	
3.2. «Սփյուռք-ընդունող երկիր» հարաբերություններ. արդյունավետ ձևեր և մեխանիզմներ	76
3.3. «Հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» հարաբերություններ. հրեական, իռլանդական, չինական սփյուռքների օրինակով	82
ԳԼՈՒԽ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՊԵԸ	111
4.1. Ձևավորման փուլերն ու առանձնահատկությունները	
4.2. Ինստիտուցիոնալ ներուժը	129
4.3. Հիմնախնդիրների լուծման վրա հայկական սփյուռքի ազդեցության հնարավորություններն ու արդյունավետությունը	143
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	165
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	171

ՆԱԽԱԲԱՆ

Հսկայական փոփոխություններ առաջ եկան, ուշագրավ երևույթներ: Եվ հանրաժանոթ իրողություն է, որ այս դեպքերը զարգացան բոլորովին հակառակ մեր տրամադրություններին՝ արտաքին իրողությունների թելադրությամբ: Մենք անգոր եղանք ուղղություն տալ նրանց: Այս նշանակում է, որ ներքուստ մենք պատրաստ չէինք դեպքերի իմաստը հասկանալուն, դրանք մեր քաղաքական ձգտումներին համընթաց դարձնելուն:

Գարեգին Նժդեհ

Մտածիր, որքան ուզում ես, գալարվիր, քանի դեռ ցավ ես զգում, աղոթիր, եթե հավատում ես գերբնական ուժերին – կքամվես, կչորանաս, կմոխրանաս, եթե չգիտես ճիշտ ժամանակին կենտրոնանալ որպես ինքնափրկումի կամք:

Հայկ Ասատրյան

Վերջին տասնամյակներում մեծապես աճել է հետաքրքրությունը սփյուռքների ուսումնասիրության նկատմամբ: Պատճառը միայն այն չէ, որ այդ էթնիկ համայնքներում ապրողների ընդհանուր թիվն աշխարհում շարունակաբար կտրուկ մեծանում է. եթե 1960թ. աշխարհում կար մոտ 75,5 միլիոն մարդ, որ ապրում էր ոչ իր հայրենիքում, ապա 2000թ.՝ 176,6 միլիոն, իսկ 2009թ.՝ 213,9 միլիոն:¹ Արմատապես փոխվում է նաև սփյուռքների դերակատարությունը: Մի քանի տասնամյակ է, ինչ սփյուռքների ինքնակազմակերպման գլխավոր խնդրին՝ ազգային ինքնության պահպանմանն ընդունող երկրում, ավելացել են ևս մի քանիսը, որոնք շատ ավելի բարդ են: Դա հնարավոր է դարձել գլոբալացման գործընթացի կտրուկ արագացման ու ընդլայնման, ինչպես նաև հեռահաղորդակցման տեխնոլոգիաների սրընթաց զարգացման

¹ Trends in total migrant stock: The 2005 revision, <http://esa.un.org/migration>

շնորհիվ, ինչը գրեթե վերացրել է տարածության ու ժամանակի որոշիչ ազդեցությունը իրադարձությունների վրա: Սփյուռքների ուսումնասիրություններն այսօր ծավալվում են ոչ թե երկու երկկողմ (հայրենիք-սփյուռք, սփյուռք-ընդունող երկիր) մոդելների՝ միմյանցից տարանջատված ուսումնասիրությունների, այլ ավելի բարդ ու գրեթե բոլոր ոլորտները ներառող եռակողմ (հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր) մոդելի ուսումնասիրությունների շրջանակում: Ընդ որում, սովորաբար որևէ ժողովրդի սփյուռքի ուսումնասիրությունը ներառում է մի քանի՝ երբեմն միմյանցից արմատապես տարբերվող, ընդունող երկրներ և դրանցում բնակություն հաստատած նույն ծագումն ունեցող, սակայն միանգամայն տարբեր իրավիճակներում ու պայմաններում հայտնված սփյուռքյան համայնքներ: Եթե ի նկատի առնվի նաև այն հանգամանքը, որ բազմազան են դարձել նաև ժամանակակից սփյուռքների ձևավորման նախադրյալներն (ոչ միայն ցեղասպանություններ, էթնիկ զտումներ, բռնաճշումներ, այլև աշխատանքի որոնում, կայսրություններների փլուզումներ և այլն), ապա պարզ կդառնա, որ պահանջվում են բարդ և, հաճախ, միջգիտակարգային ուսումնասիրություններ:

Վերոհիշյալ հանգամանքներից զատ սփյուռքների ուսումնասիրությունը կտրուկ զարգացել է նաև այն պատճառով, որ ներկայումս գրեթե չկան ժողովուրդներ, որոնք սփյուռքներ չունենան: Իսկ ուսումնասիրությունները վկայում են, որ մի շարք երկրների զարգացման կարևոր գործոնը եղել է սփյուռքների նկատմամբ արդյունավետ քաղաքականությունը, հետևաբար սփյուռքը կարելի է դիտարկել որպես երկրի զարգացման կարևոր ներուժ՝ հարաբերությունների ճիշտ կազմակերպման դեպքում:

Կառուցվածքային և բովանդակային առումով ևս սփյուռքներն էական փոփոխություններ են կրել: Ժամանա-

կակից սփյուռքների էությունն իրենից ներկայացնում է սոցիալական, էթնիկական և քաղաքական գործոնների համադրման դեռևս թերի ուսումնասիրված մի երևույթ, որի հետևանքով առաջանում են գլոբալ էթնիկական անկլավներ, որոնք հատում են մշակութային և պետական սահմանները:² Ժամանակակից սփյուռքների ակնառու առանձնահատկություններից է քաղաքական գործոնի ամրապնդումն, իսկ դրա արդյունավետության ցուցանիշը՝ սփյուռքի ինստիտուցիոնալ ներուժը: Շատ հետազոտողներ (մասնավորապես, Խ. Թուրյանը, Տ. Պոլոսկովան, Ա. Աշքենազին և ուրիշներ) համակարծիք են, որ արդի սփյուռքի բնութագրիչ ցուցանիշը ինստիտուտների և կազմակերպությունների ձևավորումն է, որոնց գործունեությունն ուղղված է էթնիկ և դավանական ինքնության պահպանմանն ու զարգացմանը, արդյունավետ սոցիալիզացիային:³ Այդուհանդերձ, ինստիտուտների առկայությունն առանց արտասփյուռքյան հաղորդակցման ֆունկցիաների և դրանց իրացման ենթակառուցվածքի, սահմանափակում է սփյուռքի ինքնաբավությունն ու դատապարտում է մեկուսացման:

Ժամանակակից շատ սփյուռքներ պատմական հայրենիքից պահանջում են ճանաչել իրենց կարգավիճակը՝ որպես կարևորությամբ հավասարազոր սուբյեկտի, որի ազդեցությունից է կախված երկրի դիրքը միջազգային կապերի համակարգում:⁴

² Попков В. Д., Феномен этнических диаспор. М., 2003.

³ Мыльников М.А., Современные диаспоры в глобальном коммуникационном пространстве. Вестник московского университета, серия 18, 2, 2007.

⁴ Полоскова Т. В., Современные диаспоры (внутриполитические и международные аспекты). М., 2002, с. 199.

Վերջին տասնամյակների այս միտումները բնորոշ են նաև հրեականի հետ դասական կամ մոդելային համարվող հայկական սփյուռքին, թեև այն ունի նաև մի շարք առանձնահատկություններ: Հայկական սփյուռքի դեպքում, ինչպես իռլանդականի և հրեականի, հայրենի երկրում ավելի քիչ է տիտղոսակիր էթնոսի ներկայացուցիչների թիվը:⁵ Մի քանի այլ գործոնների հետ (մասնավորապես, հայրենի պետության սփյուռքյան քաղաքականության արդյունավետություն, սփյուռքի կարևոր դերակատարություն ընդունող երկրում, ազգային ինքնության արդյունավետ պահպանում և այլն) նաև այս գործոնն է եղել որոշիչ՝ այս ուսումնասիրության շրջանակներում, որպես սփյուռքների գործունեության և հայրենի պետության սփյուռքյան քաղաքականության արդյունավետ դեպքեր, դիտարկելու նաև հրեականն ու իռլանդականը: Ներկայացված երրորդ՝ չինական սփյուռքի դեպքն ունի մի շարք էական տարբերություններ հայկական սփյուռքի համեմատ, սակայն, միաժամանակ, ունի նաև հետաքրքիր լուծումներ՝ տարբեր խնդիրների համար:

Հայկական սփյուռքի կարևոր առանձնահատկություններից է նաև այն հանգամանքը (որով այն տարբերվում է նաև հրեականից ու իռլանդականից), որ հայրենի պետությունը վերջին երեք տասնամյակների ընթացքում, անկախության վերականգնումից հետո գտնվում է մարդկության պատմության ընթացքում նախադեպը չունեցող բարդ և դեռևս լիարժեքորեն չուսում-նասիրված հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացքում:⁶ Վերջինս էական ազդեցություն է ունեցել

⁵ Арутюнов С.А., Козлов С. Я., Диаспоры: скрытая угроза или дополнительный ресурс, *Независимая газета*, 23 ноября, 2005.

⁶ Թորոսյան Ս., Հայաստանի համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա: Եր., Գիտություն հրատ., 2006թ.:

ինչպես հայկական սփյուռքի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության վրա: Այդ ընթացքում սփյուռքը զգալիորեն համալրվել է Հայաստանի Հանրապետությունից բարդ իրավիճակի հետևանքով հեռացած և բռնաճնշումների ու էթնիկ զտումների արդյունքում Ադրբեջանից բռնագաղթած հայերով, որոնց վերաբերմունքը հայրենի պետության նկատմամբ էականորեն տարբերվում է մինչ այդ զոհ-սփյուռք կարգավիճակն⁷ ունեցող հայկական սփյուռքի ավանդական վերաբերմունքից: Հետխորհրդային տրանսֆորմացիայի ազդեցության երկրորդ կարևոր գործոնը Հայաստան-հայկական սփյուռք հարաբերությունների վրա պայմանավորված է այն հանգամանքով, որ պետականության կառուցման ու կայացման վերաբերյալ փորձի ու գիտելիքների գրեթե իսպառ բացակայության պայմաններում Հայաստանն, ի տարբերություն հետխորհրդային մյուս պետությունների, ուներ այդ բացը լրացնելու բացառիկ հնարավորություն՝ սփյուռքահայերի փորձն ու գիտելիքներն օգտագործելով բարդ իրավիճակում արդյունավետ լուծումներ գտնելու համար: Ընդ որում, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ դիտարկվող ավելի քան քառորդ դարի ընթացքում նաև չլուծված մնաց դարաբաղյան հակամարտությունը: Հայկական սփյուռքի ներուժի օգտագործման հնարավորությունների հնարավորությունը գրեթե չօգտագործվեց՝ այս ուսումնասիրության 4-րդ գլխում բացահայտված պատճառներով: Մփյուռքի հնարավորությունների օգտագործման արդյունավետությունն այսօր էլ մնում է ցածր, հատկապես՝ առասպելականացված պատկերացումների, անհարկի հուզական մոտեցումների, և, որ ամենակարևորն է, խնդրո առարկային նվիրված գիտական

⁷ Cohen R., *Global Diasporas: An Introduction*, Global Diasporas/ Ed. R. Cohen. - Second Edition. -N.Y., 2008.

մոտեցումների ու գիտական հետազոտությունների գրեթե իսպառ բացակայության պատճառով:

Մփյուռքների ուսումնասիրության ժամանակ առանձնահատուկ նշանակություն ունի հայրենադարձության հարցը: Չբացառելով դրա ձևակերպումը՝ որպես հեռահար ռազմավարական նպատակ, պետք է հաշվի առնել, որ զանգվածային իրականացումը չափազանց բարդ խնդիր է, այն էլ՝ սահմանափակ հնարավորություններ ունեցող պետության համար: Նախ հարկ է, համադրելով հայրենիքի և սփյուռքի կարողություններն ու հնարավորությունները, հայրենիքում վերացնել այն իրավիճակն ու խնդիրները, որոնք արտագաղթի պատճառներ են դարձել: Առանձնահատուկ խնդիր է, թե ինչն է ավելի արդյունավետ՝ «հայրենիքի-սփյուռք-ընդունող երկիր» արդյունավետ հարաբերությունների ձևավորումն ու օգտագործումը՝ հայրենադարձությունը թողնելով որպես անհատական որոշումների հնարավորություն, թե այն դարձնելով զանգվածային երևույթ՝ որպես հսկայական միջոցներ և ջանքեր պահանջող պետական քաղաքականության նպատակ: Ընդ որում, խնդրի համապարփակ ուսումնասիրությունը պետք է հաշվի առնի ինչպես խորհրդային տարիների հայրենադարձության փորձը՝ ինչքան էլ ներկայիս շատ պայմաններ էականորեն տարբերվում են այն շրջանում եղած պայմաններից, այնպես էլ մի շարք երկրների՝ նոր ժամանակներում իրականացրած փորձը, ինչպես նաև վերջին տասնամյակների ընթացքում արագորեն խորացող գլոբալացման արդյունքներն ու հեռանկարները: Ավանդական մոտեցումների վերանայման անհրաժեշտություն կա նաև ներդրումների հետ կապված: Եթե դիտարկվում են ներդրում-ները տնտեսության մեջ, ապա այն սփյուռքի հետ կապելը դժվար թե լավ հեռանկարներ ունի, իսկ եթե հարցը վերաբերում է մարդկային կապիտալին առնչվող

ներդրումներին, որոնք ժամանակակից աշխարհում արվում են կրթության և գիտության ոլորտներում, ապա սփյուռքի դերակատարությունը կարող է կարևոր լինել, քանի որ դա ռազմավարական նշանակություն կունենա հայրենիքի համար:

Կատարված ուսումնասիրությունը, որի արդյունքները ներկայացված են այս աշխատության մեջ, ցույց տվեց, որ այն կարելի է համարել համապարփակ ուսումնասիրությունների ներածություն, որը ձևակերպում է ինչպես սփյուռքների ուսումնասիրության արդի հիմնախնդիրներն ընդհանրապես, այնպես էլ, մասնավորապես, հայկական սփյուռքին բնորոշ հիմնախնդիրները բոլոր երեք հարթություններում՝ ներսփյուռքյան հարաբերություններ, հայրենիք-սփյուռք հարաբերություններ, սփյուռք-ընդունող երկիր հարաբերություններ: Հետևաբար, առջևում սպասում են լայնածավալ ուսումնասիրություններ, որոնք այս աշխատանքում ընդհանուր գծերով դիտարկվել են տարբեր ուղղությունների վերաբերյալ: Ընդ որում, սպասվող աշխատանքը կարևոր նշանակություն ունի ոչ միայն սփյուռքի, այլև Հայաստանի Հանրապետության և համազգային նշանակության հիմնախնդիրների լուծման արդյունավետության տեսակետից:

ԳԼՈՒԽ 1

ՍՓՅՈՒՌՔԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ

1.1. Սփյուռքների ձևավորման հիմնական նախադրյալները

Սփյուռք եզրույթը ծագել է հունարեն «diaspeiro» բառից, որը թարգմանաբար նշանակում է սփռել: Մ.թ.ա. 3-րդ դարում արված աստվածաշնչի հունարեն թարգմանության մեջ սփյուռքի (diaspeiro-diaspora) ընկալումը նույնացվում էր Աստծո կամքին չենթարկվելու դեպքում հրեաներին սպառնացող **սփռման** անխուսափելիության հետ: Փաստորեն, ի սկզբանե սփյուռքն ուներ բացառապես աստվածաբանական իմաստ, քանի որ, ըստ Սուրբ գրքի, Աստված է **սփռում** մեղսավորներին (տվյալ դեպքում՝ հրեաներին) և համախմբում՝ հետագայում⁸: Թեև հավանաբար հնդեվրոպական ծագում ունեցող սփռ/spr արմատով (ունի սփռել, տարածել իմաստները) են կազմավորվել սփյուռք եզրը և դրան առնչվող մի շարք այլ բառեր (diaspora-սփյուռք, spread-սփռել/տարածել և այլն)⁹:

Ակնհայտ է, որ թեև տևական ժամանակ սփյուռքի ընկալումը սերտորեն առնչվում էր հրեաների դեպքի հետ, սակայն գոյություն ունեն լայնածավալ պատմագրական փաստեր, որոնք վկայում են նաև հայկական, հունական և աֆրիկյան սփյուռքների նշանակալի վաղեմության մասին¹⁰: Այդ պատճառով ձևավորվեցին սփյուռքի վերաբերյալ երեք հիմնական մոտեցումներ՝

⁸ Dufoix S., *Diasporas. The Regents of the University of California*, 2008, pp.4-5.

⁹ Cohen R., *Seeds, roots, rhizomes and epiphytes: botany and diaspora. Diasporas Reimagined Spaces, Practices and Belonging. Oxford Diasporas Programme* 2015, p. 3.

¹⁰ Butler K. D., *Defining Diaspora, Refining a Discourse, Diaspora*, **10**, 2, 2001, 189-219.

1. Հրեական համայնքի պարտադրված բնակեցում հայրենիքի սահմաններից դուրս՝ պարտադիր վերադարձի հեռանկարով:

2. Որոշակի էթնիկ խմբի (ոչ միայն հրեական) կամավոր կամ ստիպողաբար բնակեցում այդ խմբի ծագման աշխարհագրական սահմաններից դուրս և նախնիների հայրենիքի՝ կենտրոնի հետ կապերի և համագործակցության պահպանում:

3. Կրոնական, քաղաքական, մշակութային ընդհանրություններ ունեցող հանրույթ, որն ընդունում է ծագման սրբազան հայրենիքի առկայությունը (օրինակ, Երուսաղեմի դեպքը):¹¹

Նոր ժամանակներում սկսեց լայնորեն քննարկվել սփյուռքի ներքին կազմակերպվածության խնդիրը, որը դարձավ ժամանակակից սփյուռքի բնութագրիչներից մեկը: Շեֆերը մասամբ է ընդունում այն կարծիքը, ըստ որի՝ կազմակերպված էթնոազգային սփյուռքը սկիզբ է առել միայն 19-րդ դարի երկրորդ կեսից և այն բացառապես ժամանակակից երևույթ է: Կան որոշ պատմական անցումային իրադարձություններ, որոնք մեծ ազդեցություն են թողել ժամանակակից աշխարհում կազմակերպված սփյուռքների ձևավորման հարցում: Մասնավորապես, եվրոպական երկրներում քաղաքական և տնտեսական պայմանների վատթարացմամբ պայմանավորված և 19-րդ դարում ազգային հեղափոխությունների ձախողումից հետո, էթնիկ խմբերը սկսեցին բնակություն հաստատել առավել ազատական պայմաններ ապահովող երկրներում: Նման կերպ ձևավորվեցին իռլանդական կամ լեհական

¹¹ Лошкарёв И.Д., Эволюция понятия «диаспора» в политической науке, *Этносоциум и межнациональная культура*, 2017, **106**, 4, 70-78.

սփյուռքները: Ըստ Քլիֆորդի, արտագաղթին և կազմակերպված սփյուռքի ձևավորմանը նպաստել է նաև արդյունաբերական հեղափոխության հետևանքով առաջացած աշխատուժի կարիքը, ինչը ժամանակի ընթացքում Ֆրանսիայում, Բրիտանիայում, Հոլանդիայում, Բելգիայում և հատկապես Միացյալ Նահանգներում հանգեցրեց կազմակերպված էթնիկ խմբերի ձևավորմանը¹²:

Ակնհայտ է, որ վերջին 150 տարիները մեծ ազդեցություն են թողել «սփյուռք» երևույթի, վերջինիս բնույթի, ինչպես նաև սփյուռքի կառուցվածքի ու գործունեության շրջանակների տրանսֆորմացիայի վրա: Սակայն, Գ. Շեֆֆերը կարծում է, որ եթե սփյուռքը դիտարկվի առավել ընդգրկուն ժամանակային համատեքստում, ապա այն այնքան էլ ժամանակակից երևույթ չէ: Որոշ երկրներ ունեն պատմական սփյուռք, որը գոյություն է ունեցել նույնիսկ միջնադարում և պահպանում է այդ գոյությունը մինչ օրս:¹³

Սփյուռքի ձևավորման նախապատմության հիմքում ընկած է մարդկության՝ ավելի ապահով և բարեկեցիկ կյանք գտնելու մշտական մղումը: Մարդկության պատմության ողջ ընտացքում մարդիկ ստիպողաբար և/կամ կամայականորեն հեռացել են իրենց հայրենիքից՝ առավել ապահով ապաստանի փնտրտուքներով: Ժամանակի ընթացքում զանգվածային տեղաշարժերը հանգեցրել են ընդունող երկրներում տարբեր համայնքների ձևավորմանը, որոնք տարիներ շարունակ ապրել

¹² Clifford J., *Diasporas, Cultural Anthropology*, 1994, 9, 3, 302-338.

¹³ Sheffer G., *Diaspora Politics: At Home Abroad*. Cambridge: Cambridge University Press, 2003, p. 33.

են այդ երկրներում՝ այս կամ այն չափով յուրացնելով տեղի քաղաքական և քաղաքակրթական ավանդույթները:

Ընդգրկվելով մարդկային գործունեության ամենատարբեր ոլորտներում՝ հյուրընկալող համայնքները ընդունող երկրում իրենց քաղաքական և մշակութային ազատությունների շրջանակներում ծավալել են բազմամակարդակ գործունեություն՝ հյուրընկալող երկրի համար ձեռք բերելով ուրույն նշանակություն: Սփյուռքը ընդունող երկրում դառնում է էթնիկ հավաքական միավոր՝ առանձնահատուկ բնութագրիչ տարրերով:

Պատմական զարգացումները ցույց են տվել, որ գոյություն ունի սփյուռքի ձևավորման երկու հիմնական նախադրյալ՝

1. Հայրենիքում արտաքին ազդեցությունների անմիջական դրսևորմամբ ստեղծվում են կեցության համար անտանելի պայմաններ և մարդիկ արտաքսվում են հայրենիքից կամ հարկադրաբար լքում այն: Տվյալ պարգայում հայրենիքը դառնում է անբարենպաստ և վտանգավոր վայր կենսագործունեություն ծավալելու տեսանկյունից: Հայրենիքց օտարված էթնիկ խմբերը հաստատվում են այլ երկրներում՝ ձևավորելով էթնիկ համայնք: Այդ համատեքստում կարելի է դիտարկել հայկական և հրեական սփյուռքները: Երկու դեպքերում էլ ժողովուրդների զգալի հատվածները հարկադրաբար լքել են իրենց հայրենիքները՝ ձևավորելով համայնքներ հյուրընկալող երկրներում: Ժամանակի ընթացքում հայկական և հրեական սփյուռքները ձեռք են բերել քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային կարևոր նշանակություն՝ ընդունող երկրների համար:

2. Սոցիալ-մշակութային առավել բարենպաստ պայմանների ակնկալիքով մարդկանց խմբերը զանգվածաբար

հեռանում են հայրենիքից՝ աստիճանաբար տարբեր երկրներում ձևավորելով իրենց սփյուռքները: Հարկ է նշել, որ նման պարագայում հայրենիքից հեռանալու որոշումը ընդունվում է կամայականորեն և առանց արտաքին միջամտության: Կամայականության սկզբունքով սփյուռքի ձևավորմանը մեծապես խթանում է հաղորդակցման ուղիների հասանելիությունը և գլոբալացման խորացումը, որոնք ինքնաբերաբար նպաստում են միգրացիոն հոսքերի ուժգնացմանը: Սփյուռքի նմանօրինակ ձևավորման տարբերակ է չինական սփյուռքը: Չինացիները հարկադրված չեն եղել լքել իրենց հայրենիքը և մշտապես հնարավորություն են ունեցել վերադառնալու իրենց ծագման երկիր: Փոխարենը եղել է «ավելին վաստակելու» և վաստակածը հայրենիք բերելու տնտեսական մղումը:¹⁴

Հաշվի առնելով սփյուռքի ձևավորման վերոնշյալ երկու նախադրյալները՝ հարկ է նշել, որ սփյուռքի դասակարգման, բնութագրիչների առանձնացման և սահմանման համար անհրաժեշտ է դիտարկել կոնկրետ սփյուռքի ձևավորման պատմական, քաղաքական և սոցիալ-մշակութային համատեքստը:

1.2. Սփյուռքների տեսակներն ու դրանց բնութագրիչ տարրերը

Սփյուռքի վերաբերյալ հիմնական ուսումնասիրություններն ու քննարկումները սկիզբ առան նախորդ դարի 80-90-ական թվականներին: Այդ շրջանում և՛ արևմուտքում, և՛ հետխորհրդային տարածքում մեծ հետաքրքրություն առաջացավ սփյուռքի՝ որպես ուսումնասիրության առարկայի

¹⁴ Chun A.J., Pariah Capitalism and the Overseas Chinese of Southeast Asia: Problems in the Definition of the Problem, *Ethnic and Racial Studies*, 1989, 12, 233-256.

նկատմամբ: Արևմուտքում և հետխորհրդային տարածքում սփյուռքների վերաբերյալ ստեղծված հետաքրքրությունների դրդապատճառները տարբեր էին: Արևմուտքում սկիզբ առավ պատմական իրողությունների, զանգվածային ճնշումների և վտարումների վերաբերյալ լայնածավալ ուսումնասիրությունների գործընթաց, ինչը համընկավ միջազգային միգրացիայի հոսքերի ծավալների և արևմուտքում բազմամշակութային հասարակությունների թվի աճի հետ: Հետխորհրդային տարածքում «սփյուռք» հասկացության նկատմամբ առաջացած հետաքրքրությունը միանգամայն այլ պատճառ ուներ: Այն կապված էր ԽՍՀՄ անկման հետ, ինչի արդյունքում արդիականացավ փոքրամասնությունների և էթնիկ խմբերի խնդիրը: Երկու դեպքում էլ անհրաժեշտ էր մշակել տեսական մոդել՝ ստեղծված իրավիճակի սահմանման և հետագա զարգացումների կանխատեսման նպատակով¹⁵: Թեև սփյուռքին առնչվող տեսական խնդիրներին նվիրված բազմաթիվ քննարկումներ ու բանավեճեր են տեղի ունեցել անցած երեք տասնամյակների ընթացքում և ակտիվորեն շարունակվում են նաև այսօր, սակայն դեռևս չկա անգամ «սփյուռք» եզրույթի վերաբերյալ ձևակերպված այնպիսի սահմանում, որն անվերապահորեն ընդունվի ամբողջ գիտական հանրություն:

Սփյուռքի սահմանման և բնորոշման մոտեցումները կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝¹⁶

1. Դասական (Սաֆրան, Շեֆֆեր, Կոհեն),
2. Կոնստրուկտիվիստական (Բրուբերքեր, Թոլլյան),
3. Պոստմոդեռնիստական (Գիլրոյ, Քլիֆորդ):

¹⁵ Авдашкин А.А., Проблема диаспор в зарубежной и отечественной литературе: вторая половина XX – начало XXI в., *Вестник Южно-Уральского Профессионального Института*, 2013, 12, 3, 4-12.

¹⁶ Лошкарёв И.Д., նշվ. աշխ.:

Դասական մոտեցման պարագայում շեշտը դրվում էր սփյուռքի էտալոնային մոդելով ուսումնասիրությունների վրա: Այդ ուսումնասիրությունների շրջանակում կիրառվում էր էտալոնային սփյուռքի ձևավորման պատմական փորձը: Դասական մոտեցման գերխնդիրը երևույթի ճշգրիտ բնորոշումն ու սահմանումն է, սակայն տեսական տարակարծությունների արդյունքում այդպես էլ չձևավորվեց սփյուռքի ամբողջական և բոլորի համար ընդունելի սահմանում:

Երկրորդ՝ կոնստրուկտիվիստական մոտեցումը շեշտը դնում է ազգի և ազգայնականության, ինչպես նաև՝ սփյուռքի ձևավորման գործընթացի ուսումնասիրության վրա: Ուսումնասիրությունների հիմքում ընկած է սփյուռքի ինքնությունն ու դրա դինամիկ բնույթը: Մասնավորապես, ըստ Խ. Թոլոյանի, սփյուռքը ժամանակային կոնկրետ, հատուկ պահին ձևակերպված ինքնությունն է, որը կարող է այլ կերպ ձևակերպվել որևէ այլ պահի¹⁷: Հետևաբար, կարելի է ասել, որ կոնստրուկտիվիստական մոտեցումը հիմնվում է կոնկրետ ժամանակային համատեքստում մասնավոր դեպքի ուսումնասիրության վրա, որն արտացոլում է էթնիկ խմբից դեպի սփյուռք անցումային իրավիճակը:

Վերջին՝ պոստմոդեռնիստական մոտեցումը, թերևս, ամենամոտն է երևույթի՝ արդի վիճակից բխող սահմանմանը: Ըստ այդ մոտեցման՝ սփյուռքը կրողն է մի շարք հակասությունների՝ կենտրոնացում և գլոբալացում, արմատավորվածություն և վերաբնակեցում, փոփոխականություն և կայունություն: Այս մոտեցման համաձայն, սփյուռքը կապող օղակ է անցյալի և ներկայի, ծագման երկրի և ընդունող երկրի միջև: Պոստմոդեռնիստական ուղղության շրջանակներում այս

¹⁷ Tölölyan K. Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment, *Diaspora: A Journal of Transnational Studies.*, 5, 1, 1996, 3-36.

հակասություններն ընդունվում են որպես չափանիշներ՝ սփյուռքը բնորոշելու համար:¹⁸

Այդուհանդերձ, թեև առկա են սփյուռքի վերաբերյալ լայնածավալ ուսումնասիրություններ և շարունակվում են ակտիվ տեսական քննարկումները, սակայն դեռևս չի ձևավորվել որևէ ձևակերպում, որը համակողմանիորեն կրնորոշի երևույթը՝ իր բոլոր առանձնահատկություններով, վերապահումներով և բացառություններով: Գոյություն ունեն սփյուռքի ընդհանրական և առանձնահատուկ սահմանումներ, որոնք միայն մասամբ են արտահայտում երևույթը: Դրա գլխավոր պատճառներից մեկն այն է, որ սփյուռքի ընդգրկման իմաստաբանական շրջանակը շարունակաբար ընդլայնվում է գլոբալացման, հաղորդակցման միջոցների հնարավորությունների անսահմանափակ մեծացման ու միգրացիոն հոսքերի աննախադեպ ծավալման հետևանքով՝ ընդգրկելով մարդկային խմբերի բազմաթիվ կատեգորիաներ: Լայն իմաստով «սփյուռք» հասկացության ընկալումը ներառում է քաղաքական հալածյալների, փախստականների, օտարերկրացի բնակիչների, էթնիկ և ռասսայական փոքրամասնությունների և այլն¹⁹:

Բավական ընդգրկուն սահմանում է տվել Ու. Կոննորը: Ըստ նրա՝ սփյուռքը մարդկանց այն հատվածն է, որն ապրում է հայրենիքի սահմաններից դուրս²⁰: Այս տեսանկյունից սփյուռք կարող են համարվել կուբացիները Մեքսիկայում և Միացյալ

¹⁸ Gilroy P., *The Black Atlantic: Modernity and Double Consciousness*. London: Verso, 1993, pp. 190-193.

¹⁹ Safran W., *Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return*, *Diaspora*, No.1, 1991, pp. 84-99.

²⁰ Connor W., *The Impact of Homelands upon Diasporas*, *Modern Diasporas in International Politics*, Ed. Sheffer G., New York: St. Martin's, 1986. 16-46.

Նահանգներում, պակիստանցիները Բրիտանիայում, մադրիբները Ֆրանսիայում, թուրքերը Գերմանիայում, չինացիների համայնքները հարավարևելյան Ասիայում, հունական և լեհական փոքրամասնությունները և նույնիսկ ֆլամանդախոս բելգիացիները, որոնք ապրում են Վալոնիայի համայնքային անկլավներում²¹: Նման, բայց խնդիրն այլ տեսակետից դիտարկող ձևակերպում է առաջարկել Ս. Լուրյեն, համարելով, որ սփյուռքը ընդգրկուն հասկացություն է և այն բնորոշում է օտար երկրի սոցիալ-մշակութային միջավայրում ապրող այլազգի ներկայացուցիչներին²²: Նման սահմանումները, միգրացե, ձևականորեն փակում են ճշգրիտ սահմանում որոնելու անհրաժեշտությունը, սակայն բարդացնում են սփյուռքների տեսակների ուսումնասիրությունը՝ այդ հարթություն տեղափոխելով նաև այն քաղաքացիների խմբերին, որոնք չունեն հաջորդ բաժնում քննարկվող սփյուռքներին բնորոշ մի շարք հատկանիշներ:

Ըստ Խ. Թոլոյանի, եթե «սփյուռք» եզրը նախկինում օգտագործվում էր հրեաների, հայերի, հույների՝ ամբողջ աշխարհով ցրվածությունը նկարագրելու համար, ապա՝ հիմա սփյուռքը ենթադրում է ավելի լայն իմաստաբանական դաշտ՝ ներառելով այնպիսի խմբեր, ինչպիսիք են ներգաղթյալները, ոչ տիտղոսակիր քաղաքացիները, փախստականները, ժամանակավոր աշխատուժը, աքսորյալները, առևտրային և եթնիկ համայնքները և այլն²³:

Եթե այդ խմբերը ի նկատի առնվեն սահմանումներում, ապա դրանց ընդհանրացման մեջ կանհետանան «սփյուռք»

²¹ Safran W., նշվ. աշխ.:

²² Лурье С.В., Историческая этнология. М.,Аспект Пресс, 1997, с.86.

²³ Tölölyan Kh., The Nation States and Its Others: In Lieu of a Preface, *Diaspora*, 1991, 1, 1, 3-7.

հասկացության իմաստային բնորոշիչները: Մասնավորապես, եթե նույնացվում են սփյուռքը և այլազգի քաղաքացիների համախումբը: Գոյություն չունի տարբերակիչ չափանիշ, որը հնարավորություն կտա դրանք միմյանցից առանձնացնել: Ձևավորվում է պարադոքս. ըստ վերոնշյալ պնդումների՝ բոլորը սփյուռքաբնակ են, հետևաբար ոչ ոք սփյուռքաբնակ չէ: Այդ տեսանկյունից «սփյուռք» հասկացությունը կորցնում է իր տարբերակիչ ուժը, ինչը հնարավորություն չի տալիս բնորոշել երևույթն իր բոլոր առանձնահատկություններով: Ուստի, սփյուռք հասկացության համընդհանրայնացումն ինքնաբերաբար հանգեցնում է երևույթի «անհետացմանը»²⁴:

Մի խումբ այլ փորձագետներ կարևորում են սփյուռքի ինքնակազմակերպական կողմը: Մասնավորապես՝ Տոչչենկոն և Չապտիկովան համարում են, որ սփյուռքը միևնույն էթնիկ ծագման և իրենց պատմական միջավայրի սահմաններից դուրս՝ այլ էթնիկ միջավայրում, ապրող մարդկանց կայուն ամբողջություն է և ունի հասարակական որոշակի ինստիտուտներ, որոնք անհրաժեշտ են տվյալ էթնիկ խմբի զարգացման և գործունեության համար:²⁵ Նման մեկ այլ մոտեցման համաձայն, նույնպես կարևորվում է սփյուռքի կազմակերպվածությունը՝ դիտարկելով սփյուռքը որպես տվյալ ազգի էթնիկ ամբողջության նշանակալի մաս, որն ապրում է իր հայրենիքի սահմաններից դուրս, ունի բարձր կազմակերպվածություն և

²⁴ Brubaker R., The 'diaspora' diaspora, *Ethnic and racial Studies*, 2005, **28**, 1, 1-19.

²⁵ Тощенко Ж.Т., Чаптыкова Т.П., Диаспора как объект социологического исследования, *Социс*, 1996, 12, 33-42.

կայունություն ու դարձել է անհրաժեշտ միավոր ընդունող երկրի համար²⁶:

Ներքին կազմակերպվածությունից զատ հատկանշական է նաև սփյուռքի սոցիալաշակութային համատեքստը: Այս առումով Լեվինն այն կարծիքին է, որ սփյուռքն իր ծագման երկրի սահմաններից դուրս ապրող էթնիկ հատված է, որը գոյություն կունենա իր էթնաշակութային յուրահատկության պահպանմանը զուգընթաց:²⁷

Առաջանում են մի շարք հարցեր. արդյո՞ք ընդունող երկրի տիտղոսային ժողովրդից զատ ցանկացած այլ էթնիկ խումբ համարվում է սփյուռք, եթե ոչ, ապա որո՞նք են այն չափանիշները, որոնց վրա հիմնված է «սփյուռք» հասկացությունը և ո՞րն է զարգացման այն ուղին, որի արդյունքում էթնիկ միավորը կարող է համարվել սփյուռք: Թերևս, մինչ այժմ այս հարցերին սպառիչ պատասխաններ չեն տրվել, այդուհանդերձ, որոշ հեղինակներ փորձել են սահմանել մի շարք չափանիշներ, որոնք օգնում են որոշ չափով հստակեցնել սփյուռքի ընկալումը:

Սաֆրանն առանձնացրել է սփյուռքի վեց բնութագրիչներ՝

1. Տվյալ ժողովուրդը կամ նրանց նախնիները հեռացվել են սկզբնական «կենտրոնից»՝ հայրենիքից, դեպի երկու կամ ավելի «ծայրամասային»՝ օտար շրջաններ:

2. Նրանք պահպանում են հայրենիքի վերաբերյալ հավաքական հիշողությունը՝ հայրենիքի աշխարհագրական

²⁶ Колосов В. А., Галкина Т. А., Куйбышев М. В., География диаспор на территории бывшего СССР, *Общественные науки и современность*, 1996, 5, 34-46.

²⁷ Левин З. И., Менталитет диаспоры (системный и социокультурный анализ). М., Издательство "Крафт+", 2001, с. 5.

տեղակայումը, սեփական պատմությունը, հայրենի երկրի ձեռքբերումները և այլն:

3. Նրանք հավատում են, որ երբեք ամբողջությամբ ընդունված չեն լինի ընդունող հասարակության կողմից, ուստի իրենց զգում են կիսով չափ օտար կամ մեկուսացված:

4. Նրանք իրենց նախնիների հայրենիքը համարում են միակ ճշմարիտ տունը՝ այն նպատակակետը, որտեղ պետք է վերադառնան իրենց հետնորդները, երբ պայմաններն առավել բարենպաստ լինեն:

5. Նրանք հավատում են, որ հավաքական կերպով պետք է նվիրված լինեն իրենց հայրենիքի վերականգնմանն ու պահպանմանը, ապահովությանն ու բարգավաճմանը:

6. Նրանք անձնապես կամ միջնորդավորված շարունակում են կապ պահպանել իրենց հայրենիքի հետ, քանի որ նրանց էթնոհամայնքային գիտակցությունն ու համախմբվածությունը մեծապես բացատրվում է հայրենիք-սփյուռք կապի գոյությամբ:²⁸

Սաֆրանը համարում է, որ նման չափանիշներով կարելի է բնութագրել հայերին, մաղրիբներին, հույներին, թուրքերին, պաղեստինցիներին, կուբացիներին: Դրանց համապատասխանում են նաև չինական և լեհական սփյուռքները: Մակայն, ըստ հեղինակի, սփյուռքի իդեալական տարբերակ է միայն հրեական սփյուռքը: Ռ. Բրուբեյքերն էլ համարում է որ հրեաների դեպքը սփյուռքի հարացուցային²⁹ տարբերակ է: Հրեական սփյուռքի հարցում կարելի է որոշ առումով համաձայնվել այս հեղինակների հետ՝ հաշվի առնելով

²⁸ Safran W., նշվ. աշխ.:

²⁹ Brubaker R., նշվ. աշխ.:

պետականակերտման և հայրենիք վերադառնալու հրեական փորձի յուրահատկությունը, սակայն առանձին դեպքի ներկայացումը որպես մոդել, խոցելի է գիտական ուսումնասիրության տեսակետից:

Կոհենը համարում է, որ Սաֆրանի առաջարկած բնութագրիչներն ամբողջական կլինեն ևս չորսի ավելացմամբ: Ըստ այդմ, սփյուռքի սահմանումը պետք է

1. ներառի թե՛ կամավորությամբ, թե՛ ազդեսիայի, հետապըն-դման կամ ծայրահեղ հալածանքների արդյունքում տարածված էթնիկ խմբեր: Դրանով սփյուռքի նախաստիպային և դասական ընկալմանն ավելացվում է նաև առևտրային և աշխատանքային նպատակների իրացման արդյունքում ստեղծված սփյուռքը:

2. հաշվի առնի այն անհրաժեշտ ժամանակային անցումը, որի ընթացքում տվյալ էթնիկ համայնքը վերածվում է սփյուռքի: Համաձայն Կոհենի՝ անդրազգային համայնքը ամուր կապերով պետք է կապված լինի անցյալի հետ, ինչը այդ համայնքին կպաշտպանի ձուլման վտանգից:

3. ներառի սփյուռքի և վերջինիս շրջանակներում ձևավորված ինքնության առանձնահատկությունները: Մասնավորապես, ազգային, էթնիկ և անդրազգային ինքնությունների միջև եղած տարբերությունների բացահայտումն ու դրանց սինթեզը կարող են հանգեցնել առավել կառուցողական և ստեղծարար զարգացումների: Բնակություն հաստատելով այլ երկրում և ձևավորելով սփյուռք՝ էթնիկ համայնքը կարող է ընդունող երկրում մեծ ձեռքբերումներ ունենալ գիտական, մշակութային, տնտեսական և այլ ոլորտներում:

4. ընդունի, որ սփյուռքը ոչ միայն հավաքական ինքնություն է ձևավորում բնակության տվյալ վայրում, այլև ունի

ընդհանուր ինքնություն այլ երկրներում ապրող նույն էթնիկ խմբերի հետ:³⁰

Այս լրացուցիչ բնութագրիչները սահմանազատում են արտագաղթի արդյունքում ձևավորված համայնքն ու սփյուռքը և, հավաքական ինքնությանն ու կազմակերպվածությանը վերաբերող բնութագրիչների հետ, ամբողջացնում են բնութագրիչների համակազմը: Այդուհանդերձ, բոլորը չէ, որ համամիտ են այդ մոտեցմանը: Մասնավորապես, Վ. Տիշկովը համարում է, որ սփյուռքը պարզապես ժողովրդագրական կամ էթնիկ իրողությունն չէ: Այն կենսագործունեության ձև է, որով տարբերվում է արտագաղթի արդյունքում հայրենիքից դուրս հայտնված այլ խմբերից, քանի որ, ըստ Տիշկովի, սփյուռքը քաղաքական երևույթ է, իսկ արտագաղթը՝ սոցիալական: Նա կարծում է, որ պատմությունը և մշակութային առանձնահատկությունը հիմնաքարային նշանակություն ունեն սփյուռքի ձևավորման համար, որի տարբերակիչ հատկանիշը հայրենիքի հանդեպ ռոմանտիկ հավատն է: Այդ հավատը հայրենիքը դարձնում է միակ իրական և իդեալական տունը, ուր, ի վերջո, պետք է վերադառնան սփյուռքի ներկայացուցիչները կամ նրանց սերունդները: Վ. Տիշկովի կարծիքով, սփյուռքի ավանդական սահմանումները հաշվի չեն առնում պատմական իրավիճակայնությունը և անհատական ինքնանույնացման խնդիրը, որոնք հիմք են «սփյուռք» երևույթի առաջացման համար: Պատմական իրավիճակայնության և անհատական ինքնանույնացման հետ նա որպես հիմք ընդունում է նաև ծագման երկրի հասարակության հետ կապերի առկայությունը:

³⁰ Cohen R., *Global Diasporas: An introduction*. Second edition, Routledge, 2008, pp. 7-8.

Ընդհանրացնելով այս բոլոր գործոնները՝ Տիշկովը սահմանում է սփյուռքը որպես մշակութային առանձնահատկություններով տարանջատվող համայնք, որն ունի հայրենիքի վերաբերյալ հավաքական պատկերացում, որի հիման վրա են ակնհայտորեն զարգանում հայրենիք-սփյուռք կապերը: Եթե բացակայում են նշված բնորոշիչները, ապա բացակայում է նաև սփյուռքը³¹:

Ձ. Քլիֆորդը քննադատում է Մաֆրանի և այն հետազոտողների առաջարկած սահմանումները, որոնք ներառում են հայրենիք վերադարձի գաղափարը, համարելով դրանք այդ գաղափարի վրա «կենտրանացած» կադապարներ: Ըստ նրա՝ ապակենտրոն կապերը նույնքան կարևոր են, որքան վերադարձի նպատակի վրա կենտրոնացած կապերը: Նա այս կարծիքը հիմնավորում է այն պնդմամբ, որ սփյուռքի նպատակը կարող է լինել ոչ միայն արմատներին վերադառնալը, այլ նաև տարբեր աշխարհագրական վայրերում մշակույթի վերստեղծումը: Նմանօրինակ փորձ կարելի է նկատել աֆրիկյան սփյուռքի պարագայում, երբ սփյուռքաբնակների առաջնային նպատակն ամենևին հայրենադարձությունը չէ: Ըստ Քլիֆորդի՝ սփյուռքի դասական տարբերակներ են հրեական, հունական և հայկական սփյուռքները: Նա համարում է, որ պետք է հաշվի առնել, թե ինչպիսի ազդեցություն է թողել հրեաների պատմությունը «սփյուռք» հասկացության վրա՝ չդիտարկելով այն որպես բացարձակ մոդել: Հեղինակը կարծում է, որ նոր, գլոբալ պայմաններում գոյատևման և հիբրիդացման

³¹ Тишков В. А., Исторический феномен диаспоры, *Национальные диаспоры в России и за рубежом в XIX-XX вв. Сб. ст. под ред. Ю.А. Полякова и Г.Я. Тарле*. М., 2001, сс. 9-44.

համատեքստում հրեական, հունական և հայկական դեպքերը կարող են համարվել ոչ նորմատիվային սկզբնակետեր³²:

Հայրենիք վերադարձի նպատակը անվերապահ չի համարում նաև Գ. Շեֆֆերն, ով առանձնացրել է երեք բնորոշիչներ³³, որոնք կարող են ընկալվել սփյուռքի սահմանման ներքո: Դրանք են՝

1. սփյուռքի հավաքական ինքնության պահպանում և զարգացում,

2. հայրենիքի և ընդունող երկրի ինստիտուցիոնալ միավորներից զատ ներքին կազմակերպվածության առկայություն,

3. հայրենքի հետ իրական և նշանակալի փոխհարաբերությունների առկայություն:

Հետազայում Շեֆֆերը տվեց մեկ այլ, առավել համակողմանի սահմանում: Ըստ նրա՝ էթնոազգային սփյուռքը կամավոր կամ պարտադրված արտագաղթման արդյունքում ստեղծված սոցիալ-քաղաքական կազմավորում է, որի անդամներն ընդունում են, որ իրենք ունեն միևնույն էթնոազգային ծագումը և համարվում են փոքրամասնություններ մեկ կամ մի քանի ընդունող երկրներում: Նման էթնիկ միավորի անդամները կապ են պահպանում իրենց հայրենքի և այլ երկրներում բնակվող իրենց ազգակիցների հետ: Միաժամանակ, սփյուռքի ներսում գոյություն ունի ընդունող երկրից չհեռանալու, սակայն ընդհանուր ինքնությունը պահպանելու ձգտում: Դրանով սփյուռքը ցուցաբերում է համախմբվածություն իր ներսում և ամբողջ ազգի հետ: Սփյուռքը նաև կազմակերպված և ակտիվ գործունեություն է

³² Clifford J., *Diasporas, Cultural Anthropology*, 1994, 9, 3, 302-338.

³³ Шеффер Г., *Диаспоры в мировой политике, Диаспоры*, 2003, 1, 162-184.

ծավալում մշակութային, հասարակական, տնտեսական և քաղաքական ոլորտներում: Տարբեր ոլորտներում սփյուռքը ստեղծում է գործունեության վերաբերյալ ցանցային համակարգ, որն անդրադառնում է հայրենիքի, ընդունող երկրի և այլ երկրներում իրենց ազգակիցների հետ բազմակողմանի փոխհարաբերությունների վրա:³⁴ Հասկանալի է, որ թեև Շեֆֆերի առաջարկած սահմանումը բավական համակողմանիորեն նկարագրում է սփյուռքը, այդուհանդերձ, այն հակասում է այլ հեղինակների մոտեցումներին ովքեր հայրենիք վերադարձի նպատակն անվերապահ նախապայման էին համարում: Մինչդեռ, ըստ Շեֆֆերի, սփյուռքը ընդունող երկրում մշտական բնակություն հաստատելու նպատակ ունի: Թեև նա կարևորում է հայրենիք-սփյուռք կապերը, այնուամենայնիվ, ժխտում է հայրենիք վերադարձի անվերապահությունը:

Ջ. Արմսթրոնգն առանձնացնում է սփյուռքի բնորոշման հետևյալ չափանիշները՝

1. Ժողովուրդը սփռված է աշխարհի տարբեր վայրերում և գոյություն ունեն հայրենիք-էթնիկ խումբ-ընդունող երկիր եռակողմ փոխհարաբերություններ,
2. Հայրենիքին մշտապես պատկանելու զգացողությունը, ինչպես նաև էթնիկ խմբի պատմության և ինքնության մասին հավաքական գիտակցությունը սփյուռքը բնորոշող կարևորագույն գործոններից են,
3. Շարունակական բնույթ ունեն հայրենիք վերադառնալու ցանկությունը և վերջինիս իդեալականացումը,

³⁴ Sheffer G., նշվ. աշխ., էջ 10.

4. Տվյալ էթնիկ միավորի համայնքների ներսում տեղի է ունենում անդրազգայնացման գործընթաց և ցանցային համագործակցություն,

5. Հայրենիք – սփյուռք փոխհարաբերությունների համատեքստում ուժգնանում են կապերն ու համագործակցությունը:³⁵

Ռ. Բրուբեյքերն առաջարկել է սփյուռքի բնորոշիչ երեք առանցքային չափանիշներ³⁶, որոնք իմաստաբանական և հայեցակարգային առումներով ամփոփ ներկայացնում են մի շարք հեղինակների³⁷ առաջարկած բնութագրիչները՝

1. *Միտվածություն*. այս չափանիշը լայնորեն ընդունվում և առավել հաճախ ընկալվում է որպես հարկադիր տեղահանության արդյունքում առաջացած իրավճակ,

2. *Հայրենիքի հանդեպ նվիրվածություն*. ենթադրում է, որ ցանկացած սփյուռքաբնակ ունի հայրենադարձման ներքին մղում, նպատակ ունի բարեկարգելու սեփական հայրենիքը և պահպանելու հայրենիք-սփյուռք արդյունավետ փոխհարաբերություններ,

3. *Ինքնության պահպանում*. ենթադրում է ինքնության պահպանման կարևորությունը ընդունող հասարակության մեջ:

Սփյուռքի վերաբերյալ տեսական քննարկումները բազմազան են, քանի որ տարբեր ուսումնասիրողներ առանձնացնում են մի շարք բաղադրիչներ և բնորոշիչներ, որոնք ոչ միայն որոշ չափով միմյանցից տարբերվում են, այլև երբեմն անգամ միմյանց հակասում են: Սակայն դժվար չէ

³⁵ Armstrong J., Mobilized and Proletarian Diasporas, *The American Political Science Review*, **70**, 2, 1976, 394-408.

³⁶ Brubaker R., նշվ. աշխ.:

³⁷ Safran 1991, Clifford 1994, Tölölyan 1996, Cohen 1997, Sheffer 2003.

նկատել, որ որոշ բաղադրիչներ ընդհանուր են բոլոր մոտեցումներում:

Ավելին, օրինակ, սփյուռքի բնորոշման Ջ. Արմսթրոնգի վերոհիշյալ չափանիշների ու Կ. Բաթլերի առաջարկած մոտեցման տարբերությունները պայմանավորված են միայն նրբություններով: Վերջին դեպքում ևս մոտեցումը հիմնված է նույն երեք չափանիշների վրա՝ տարածվածություն, հայրենիքի հետ հարաբերություններ, ինքնություն: Տարածվածության պարագայում Բաթլերը համարում է, որ էթնիկ խմբերը պետք է սփռված լինեն նվազագույնը երկու ուղղությամբ: Երկրորդ բնորոշիչը՝ հայրենիքի հետ փոխհարաբերությունները, Բաթլերը կարևորում է սփյուռքի ինքնության պահպանման և զարգացման տեսակետից: Երրորդը՝ խմբային ինքնություն, ըստ նրա, էթնոագգային խմբի պատկանելության ինքնագիտակցությունն է: Արմսթրոնգի մոտեցումից Բաթլերի տարբերակը առանձնանում է նաև նրանով, վերջինս առաջարկում է նաև չորրորդ՝ պատմաժամանակագրական չափանիշը: Ըստ Բաթլերի՝ էթնոագգային խումբը, որը բավարարում է վերոնշյալ երեք չափանիշներին, կարող է համարվել սփյուռք միայն այն դեպքում, երբ նվազագույնը երկու սերունդ գոյություն ունենալուց հետո խումբը նպատակաուղղված է հայրենիք վերադառնալուն:³⁸

Ինչպես ցանկացած այլ օբյեկտի, այնպես էլ սփյուռքի ուսումնասիրության պարագայում առանցքային նշանակություն ունի ոչ միայն այդ օբյեկտի նույնականացումն, այլև, տարբեր դրսևորումների դեպքում, դրա դասակարգումն ու այդ նպատակով կիրառվող բնութագրիչ տարրերի ճշգրտումը: Դասակարգման խնդրի լուծումը հնարավոր է երկու ձևով՝ մեկ

³⁸ Butler K. D., նշվ. աշխ.:

ընդհանուր դասակարգում մի խումբ չափանիշների հիման վրա կամ, երբ ուսումնասիրվող երևույթը բավական բարդ է, տարբեր դասակարգումներ տարբեր չափանիշների հիման վրա: Մփյուռքի պարագայում երկու մոտեցումներն էլ կիրառվել են: Մասնավորապես, Վ. Պոպկովն առաջարկել 8 չափանիշի վրա հիմնված դասակարգում: Այդ չափանիշներն են՝

1. Պատմական ճակատագրի ընդհանրություն. այս դեպքում առանձնացվում է երկու խումբ՝ 1) համայնքներ, որոնք ապրում են իրենց նախորդ պետության տարածքում, բայց ոչ իրենց անջատված հայրենիքում, 2) համայնքներ, որոնք նախկինում կապ չեն ունեցել ընդունող երկրի հետ,
2. Իրավական կարգավիճակ՝ ընդունող երկրում օրինական կարգավիճակով գտնվողներ կամ հիմնականում անօրինական կարգավիճակով գտնվողներ,
3. Մփյուռքի ձևավորման հանգամանքները՝ մարդկանց կամ սահմանների տեղափոխություն,
4. Տեղափոխության մոտիվացիա՝ կամովին տեղափոխություն կամ դուրսմղում,
5. Նոր վայրում բնակության բնույթը՝ մշտական բնակության ձգտում ունեցողներ, տրանզիտային բնակության մտադրություն, հայրենիքի և ընդունող երկրի միջև շարունակական տեղաշարժեր,
6. «Բազայի» առկայություն ընդունող երկրում,
7. Ընդունող ժողովրդի հետ մշակութային նմանություն,
8. Հայրենիքում պետական կազմավորման առկայություն:³⁹

³⁹ Попков В.Д., Некоторые основания для типологии диаспор,
<http://lib.socio.msu.ru/1/library?e=d-000-00--0kongress>

Այս չափանիշները գրեթե լիովին բնութագրում են սփյուռքի զարգացումներն ու գործունեությունը, սակայն դրանց բոլորի միաժամանակյա կիրառումը սփյուռքների դասակարգման նպատակով էապես դժվարացնում է հետագա ուսումնասիրությունները: Այդ պատճառով ուսումնասիրությունների սկզբնական շրջանում փորձ էր արվում սփյուռքները բաժանել երկու խմբի: Մասնավորապես, հիմք ընդունելով սփյուռքի կառուցվածքային միասնականության ու դինամիկության աստիճանը՝ Մեղամն առաջարկել է տարբերակել սփյուռքի «բյուրեղացած» և «հեղուկ» տեսակները⁴⁰: Ենթադրելի է, որ «բյուրեղացած» սփյուռքի ներքո նա նկատի է ունեցել անդրազգային ամուր ցանցային համագործակցության արդյունավետությամբ աչքի ընկնող համայնքները: Ինչ վերաբերում է սփյուռքի «հեղուկ» տեսակին, ապա այն առանձնանում է փոփոխականությամբ և չի կարելի բնորոշել անդրազգային զարգացած համագործակցությամբ:

Մեկ այլ տարբերակ է առաջարկել Մ. Բրյունոն՝ դասակարգման հիմք ընդունելով սփյուռքի գործունեության գերակշռող ոլորտը, ըստ դրա առանձնացնելով երեք տեսակ .

1. Ձեռնարկատիրական (Չինաստան, Լիբանան),
2. Կրոնական (Իսրայել, Հունաստան),
3. Քաղաքական (Պաղեստին, Տիբեթ)⁴¹:

Գ. Շեֆֆերը, դիտարկելով խնդրի քաղաքական չափումը, առանձնացրել է սփյուռքի երկու տեսակ՝ սփյուռք, որն ունի ազգային պետություն և սփյուռք, որը պահպանում է գոյությունն

⁴⁰ Medam A., Diaspora / Diasporas. Archétype et typologie, *Revue Européenne des Migrations Internationales*, 1993, 9, 1, 59-66.

⁴¹ Bruneau M., *Diasporas*, Montpellier, GIP Reclus, 1995.

առանց ազգային պետության⁴²: Այս բաժանումը թույլ է տալիս հաշվի առնել սփյուռքի պատմական զարգացումն՝ ազգային պետության առկայության կամ բացակայության պայմաններում: Շեֆֆերն առաջարկել է սփյուռքի դասակարգման մեկ այլ չափանիշ՝ սփյուռքները բաժանելով անդրազգային և անդրպետական տեսակների, որոնք տարբերվում են ինքնության պահպանման աստիճանով, կազմակերպվածությամբ, հարաբերություններով, մարտահրավերներով և ինքնապահպանման համար ստեղծած մեխանիզմներով:

Անդրազգային սփյուռքը բաղկացած է մեծ խմբերից, որոնց ներկայացուցիչների մեծամասնությունը նպատակաուղղված է համաձայնեցված և միասնական սփյուռք ստեղծելուն: Մակայն այն անդամները, որոնք միասնական սփյուռք ստեղծելու նպատակ ունեն, չեն պատկանում միևնույն էթնոազգային ծագմանը: Փոխարենը, նրանք ունեն այլ առանցքային ընդհանրություններ՝ իրենց և ընդունող հասարակությունների ընկալմամբ: Այդ ընդհանրությունները բնորոշվում են առավել լայն ընդգրկում ունեցող երևույթներով: Այս խմբերը կարող են ունենալ միևնույն դավանանքը, անդամակցությունը նույն եկեղեցուն կամ աղանդին, պատկանելությունը միևնույն տարածաշրջանին, ընդհանուր լեզու կամ գաղափարախոսություն: Որպես անդրազգային սփյուռքի դրսևորումներ կարելի է դիտարկել մուսուլմաններին, բուդդիստներին, կաթոլիկներին, աֆրիկացիներին, արաբներին և այլն:

Երկրորդ՝ անդրպետական սփյուռքի անդամները ունեն բացառապես նույն էթնոազգային ծագումը (հայեր, հրեաներ,

⁴² Anteby-Yemini L., Berthomière W., Diaspora: A Look Back on a Concept, *Bulletin du Centre de recherche français à Jérusalem*, 2005, 16, 262-270.

հույներ և այլն) : Հենց այդ բնութագրիչ տարրով էլ տարբվում են սփյուռքի անդրազգային և անդրպետական տեսակները: Անդրպետական սփյուռքի անդամներն ունեն միևնույն ազգային, էթնիկ նախապատմությունը, ինքնագիտակցությունը, որը համընկնում է իրենց վերաբերյալ ունեցած այլոց՝ ընդունող հասարակության անդամների պատկերացմանը: Հատկանշական է, որ այս բնութագրիչները անվերապահորեն պետք է կիրառելի լինեն ոչ միայն սփյուռքի առաջին սերնդի, այլև վերջինիս հաջորդող սերունդների համար՝ անկախ այն փաստից, ունի տվյալ սփյուռքը միասնական կենտրոն՝ ազգային պետություն, թե՛ ոչ⁴³:

Շեֆֆերն առաջարկել է սփյուռքների դասակարգման ավելի ամբողջական տարբերակ ևս՝

- խոր պատմական արմատներ ունեցող սփյուռքներ (հայեր, հրեաներ, չինացիներ),
- «ննջող» սփյուռքներ (ամերիկացիներ Եվրոպայում և Ասիայում, սկանդինավներ ԱՄՆ-ում),
- «երիտասարդ» սփյուռքներ (լեհեր, թուրքեր, հույներ),
- ծնվող սփյուռքներ (կորեացիներ, ֆիլիպինցիներ, ռուսներ նախկին խորհրդային հանրապետություններում),
- «անտուն»՝ հայրենի պետություն չունեցող սփյուռքներ (գնչուներ, քրդեր, պաղեստինցիներ),
- Էթնազգային սփյուռքներ՝ ամենատարածվածները, որոնք ունեն «իրենց» պետությունը,

⁴³ Sheffer G., *The Diaspora Phenomenon in the 21st Century: Ideational, Organizational and Behavioral Challenges. : Opportunity Structures in Diaspora Relations: Comparisons in Contemporary Multi-level Politics of Diaspora and Transnational Identity*, Center for Basque Studies, University of Nevada, 2007, pp. 192-193.

- սփռված և հավաք ապրող սփյուռքներ:⁴⁴

Հեշտ է նկատել, որ առաջին չորս տեսակներն ըստ պատմական դասակարգման տարատեսակներ են, մյուս երկուսը՝ ըստ ազգային պետության առկայության, իսկ վերջինը՝ ըստ սփռվածության:

Ձ. Արմատրոնգը, սփյուռքի դասակարգման հարցում միանգամայն յուրահատուկ մոտեցում է ցուցաբերել՝ հիմք է ընդունելով սփյուռքի փոխգործակցությունը բազմաէթնիկ պետության հետ: Նա առանձնացրել է սփյուռքի «մոբիլիզացված» և «պրոլետարական» տեսակները: «Մոբիլիզացված» սփյուռքն աչքի է ընկնում բազմադարյա պատմական հիմքով և ունի ընդունող հասարակությունում հարմարվելու կարողություն: Դրա շնորհիվ «մոբիլիզացված» սփյուռքն իր գործունեությամբ խորապես արմատավորվում է ընդունող երկրում՝ նյութական և մշակութային նշանակալի ներդրմամբ: Նման օրինակներ են հայկական և հրեական սփյուռքները: Մյուս տեսակը՝ «պրոլետարական» սփյուռքը, համապատասխանում է նոր ձևավորվող էթնիկ համայնքներին, որոնք Արմատրոնգը համարում է ժամանակակից քաղաքականության անհաջող արդյունք⁴⁵:

Կոհենը առաջարկել է սփյուռքի հինգ տեսակ, որոնք նա անվանել է սփյուռքի «իդեալական» տարբերակներ: Դասակարգման համար Կոհենը հիմք է ընդունել սփյուռքի ձևավորման նախադրյալները: Ըստ նրա՝ սփյուռքը լինում է

1. Զոհի կարգավիճակ ունեցող (հրեական, հայկական, պաղեստինյան, աֆրոամերիկյան),
2. Աշխատանքային (հնդկական),

⁴⁴ Шеффер Г., Диаспоры в мировой политике, *Диаспоры*, 2003, 1, 162-184.

⁴⁵ Armstrong J. A. Mobilized and proletarian diasporas. *American political science review*, 1976, 70, 2, 393 – 408.

3. Առևտրային (չինական),
4. Կայսերական,
5. Մշակութային:⁴⁶

Զոհի կարգավիճակ ունեցող սփյուռքի հիմքում ընկած է ստիպողաբար և պարտադրված սեփական երկիրը լքելու նախապատմությունը, ինչը պայմանավորված է հայրենիքում կեցության համար անտանելի պայմաններով, մասնավորապես՝ զանգվածային կոտորածներով, խոշտանգումներով և այլն: Զոհի կարգավիճակ ունեցող սփյուռքի դեպքեր են հայկականը, հրեականը, աֆրիկյանը:

Աշխատանքային սփյուռքի ձևավորումն՝ ի տարբերություն նախորդ տեսակի, իրագործվում է էթնիկ խմբի կամավորության սկզբունքով, որը կենսակերպի առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու մտադրությամբ աշխատանք է որոնում է այլ երկրներում, ինչի արդյունքում աստիճանաբար ձևավորվում է աշխատանքային սփյուռքը: Որպես օրինակ կարող է ծառայել հնդկական սփյուռքը Մեծ Բրիտանիայում, որը ձևավորվել է 1830-ականներից սկսած:⁴⁷

Երրորդը՝ առևտրային սփյուռքը, ձևավորվում է առևտրային հանգույցների և կապերի ստեղծման, ամրապնդման արդյունքում: Ապրանքափոխանակման նպատակով առևտրականները տեղափոխվել են երկրից երկիր, հարմարվել տեղի առևտրային ավանդույթներին և ստեղծել հատուկ արևտրային ցանցային համակարգ՝ առևտրային սփյուռք (Չինաստան, Լիբանան):

Կայսերական սփյուռքը ենթադրում է տիտղոսային էթնոսի առկայություն, որը ինքնագիտակցական մակարդակում

⁴⁶ Cohen R., *Global Diasporas: An introduction* Second edition, Routledge, 2008, pp.16-18.

⁴⁷ Նույն տեղում, էջ 61:

իրեն համարում է «ընտրված» էթնոս և առանձնանում իր ընդհանրական և կայսերական նպատակներով: Նման օրինակներ կարող են համարվել բրիտանկան, ֆրանսիական, իսպանական, պորտուգալական սփյուռքները:

Վերջին տեսակը՝ մշակութային սփյուռքը, ձևավորվում է այն պարագայում, երբ որևէ էթնիկ խմբի մտավորականներ, արվեստի ներկայացուցիչներ մեծ ակտիվություն են ցուցաբերում ընդունող երկրի հասարակական կյանքում: Որպես մշակութային սփյուռքի օրինակ Կոհենը դիտարկում է կարիբյան սփյուռքը⁴⁸:

⁴⁸ Նույն տեղում:

ԳԼՈՒԽ 2

ՍՓՅՈՒՌՔԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

2.1. Ինքնություն և ինտեգրում. հակասող արժեքնե՞ր, թե՞ համադրելի շահեր

Որևէ երկրում ոչ տիտղոսակիր էթնիկ միավորի ինքնության պահպանումը մշտապես արդիականություն ունեցող հիմնախնդիր է: Սփյուռքի համար այն էլ ավելի բարդ է, քանի որ համադրվում է ընդունող երկրում լիարժեք կենսագործունեություն ունենալու նպատակով այդ երկրի հասարակական կյանքում ինտեգրման հրամայականի հետ: Ինքնության պահպանումը և ինտեգրումը, որոշ առումով, հակոտնյա, գուգահեռաբար ընթացող գործընթացներ են, որոնց համադրելիության արդյունքից կախված կլինի հյուրընկալող երկրում սփյուռքաբնակների գործունեության արդյունավետությունը: Այդ տեսակետից առանցքային նշանակություն ունի «ինքնության պահպանում-ինտեգրում» մրցակցող գործընթացների համադրելիության մակարդակը, որը, կախված ինտեգրման միջավայրից, կարող է բնորոշվել որպես համադրելի կամ հակադիր: Որոշիչ գործոնը ինտեգրման միջավայրի քաղաքակրթական պատկանելությունն է, որն առանցքային նշանակություն ունի ընդունող հասարակության մեջ էթնիկ միավորների արդյունավետ ինտեգրման տեսակետից:

Ակնհայտ է, որ ինտեգրման միջավայրի և ինտեգրվող էթնիկ համայնքի ինքնությունների համադրելիության բարձր մակարդակը՝ հակասող արժեքների սակավությունը կամ բացակայությունը, բարենպաստ պայման է արդյունավետ ինտեգրման համար, սակայն մեծացնում է ինքնության պահպանման մարտահրավերները: Մյուս կողմից, ինտեգրման միջավայրի և ինտեգրվող համայնքի քաղաքակրթական,

արժեքային հիմքերի խիստ ընդգծված տարբերությունները թեև շատ հաճախ նպաստում են ինքնության պահպանմանը, սակայն նվազեցնում են ինտեգրման շրջանակները, որոնք կարող են սահմանափակվել սոցիալական, տնտեսական ոլորտներով: Հետևաբար, սփյուռքի կենսունակությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է գտնել հետևյալ հարցերի պատասխանները.

- Արդյո՞ք էթնիկ խմբի համար առավել նպատակահարմար կլինի բնակություն հաստատել միևնույն քաղաքակրթական հիմք ունեցող երկրում, և, եթե այո, ապա ինչպե՞ս խուսափել ազգային ինքնությունը կորցնելու վտանգից:

- Արդյո՞ք ազգային ինքնության պահպանման հեռանկարն առավել հավանական կլինի, եթե էթնիկ խումբը բնակություն հաստատի սեփական ազգային ինքնությունից արմատապես տարբերվող քաղաքակրթական միջավայրում: Եթե այո, ապա ինչպե՞ս կանխել ընդունող հասարակության մեջ չընդունված փոքրամասնություն դառնալու հեռանկարը:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ, ինչպես նշվել է 1-ին գլխում, սփյուռքաստեղծ հոսքերը ձևավորվում են ոչ միայն այն կազմող մադրկանց կամովին ընդունված որոշումների արդյունքում, այլև պարտադրաբար՝ ցեղասպանության, էթնիկ գտումների, տեղահանումների, հալածանքների ու բռնաճնշումների հետևանքով: Եթե առաջին դեպքում այդ անձինք հնարավորություն ունեն ընտրելու իրենց նոր միջավայրն, ապա երկրորդ դեպքում, որպես կանոն, այդ միջավայրը պարտադրված է: Հետևաբար, վերոնշյալ երկու հանգամանքներում էլ էթնիկ խումբը պետք է ստեղծի վերջինիս կայունությունն ապահովող գործուն մեխանիզմներ և համակարգեր, որոնք կօգնեն հաղթահարել ինտեգրմամբ և, հետևաբար՝ ինքնության պահպանմամբ առաջացած մարտահրավերները:

Մփյուռքի կայուն գործունեության և զարգացման առավել իրատեսական հեռանկարների տեսանկյունից նպատակահարմար կլինի ընտրել այնպիսի ինտեգրման միջավայր, որտեղ չկան հակասող արժեքներ: Ի վերջո, ինտեգրումը որոշակի արժեքների տեղայնացումը և յուրացումն է որևէ հասարակության և երկրի կողմից՝ զարգացման առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով, ինչն ընդհանուր քաղաքական նախահիմքի պարագայում ավելի հեշտ է իրականացնել⁴⁹: Պատահական չէ, որ ինչպես նշում է Ս. Հանթինգտոնը, հասարակության անցումը մեկ քաղաքակրթությունից մյուսը հեռանկար չունի⁵⁰: Միևնույն քաղաքակրթական նախահիմքով ինտեգրումը թույլ կտա ինտեգրվող էթնիկ խմբին վերահիմաստավորել և արդիականացնել ինքնությունը և, միաժամանակ, նվազագույնի հասցնել ընդունող հասարակության կողմից մերժված լինելու հավանականությունը:

Սակայն, երբ չկան հակասող արժեքներ և «մենք»/-«նրանք» ընդգծված տարանջատում, ապա ձուլվելու վտանգը դառնում է մարտահրավեր, որը պետք է հաղթահարել էթնիկ համայքի մշակած մեխանիզմներով և ազգային ինքնագիտակցության պահպանման նպատակով այն փոխանցել հաջորդ սերունդներին: Հակառակ պարագայում առանց ազգային ինքնության տարբերակիչ հատկանիշների սփյուռքը կկորցնի իր էությունը՝ վերածվելով պարզապես էթնիկ խմբի, որի հետագա սերունդներն անխուսափելիորեն կլինեն ընդունող երկրի ազգային և քաղաքակրթական արժեքների կրողը: Տվյալ դեպքում ինքնության պահպանման և ընդունող հասարակու-

⁴⁹Թորոյան Ս., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, Գիտություն հրատ., 2006թ., էջ 181:

⁵⁰ Huntington S. P. The clash of civilizations and the remarking of world order, New York, 1996.

թյան մեջ ինտեգրման գործընթացները համադրելի են, սակայն մեծ է ազգային տարբերակիչ գծերը կորցնելու վտանգը:

Մյուս կողմից, եթե դիտարկվի էթնիկ համայնքի ինտեգրումն այլ քաղաքակրթական միջավայրում, ապա ինտեգրումն ու ինքնության պահպանումը մեծ հավանականությամբ կարող են ընթանալ հակառակ ուղություններով, սակայն քաղաքակրթական հակադրությունների պայմաններում կպահպանվի ազգային ինքնությունը: Նման իրավիճակում մարտահրավերը ոչ թե ձուլվելու վտանգն է, այլ չինտեգրվելու հեռանկարը, ինչի արդյունքում տվյալ էթնիկ խումբը տիտղոսային էթնոսի միջավայրում կվերածվի փոքրամասնության, որն ընդունող երկրի հասարակության հետ կունենա փոխշահավետ համագործակցության նվազագույն եզրեր:

Այնուամենայնիվ, սփյուռքը ցանկացած քաղաքակրթական միջավայրում պետք է կարողանա գտնել համադրելիության եզրեր այդ միջավայրի հետ: Այդ դեպքում պետք է կարողանալ հասնել ինտեգրում/ինքնության պահպանում հարաբերակցության այնպիսի մակարդակի, որը թույլ կտա պահպանել ազգային դիմագիծը և, միաժամանակ, համագործակցել ընդունող երկրի տիտղոսակիր ժողովրդի հետ: Երբ չկան համընկնող արժեքներ, պետք է որոնել համընկնող շահեր, որոնք ցանկացած արժեհամակարգային համատեքստում կարող են իրացվել ի օգուտ սփյուռքի և ընդունող երկրի:

Երկու դեպքերում էլ ինտեգրումը պետք է սկսվի առավել չեզոք, օրինակ, տնտեսական կամ գիտական ոլորտից, ինչը թույլ կտա փոխշահավետ համագործակցություն ծավալել և աստիճանաբար մեծացնել սփյուռքի դերակատարումը ընդունող երկրում: Այդ դեպքում սփյուռքը կարևորություն կունենա ընդունող երկրի համար և ժամանակի ընթացքում կարող է ընդլայնել գործունեության ոլորտներն՝ առավել մեծ

հնարավորություններ ուենալով իրականացնելու ինքնության պահպանմանն ուղղված միջոցառումներ: Ընդունող երկրում ազդեցիկ դիրք ունեցող սփյուռքը հանդես է գալիս որպես ինքնուրույն միավոր իրեն հատուկ գործունեությամբ և համակարգային մոտեցմամբ, ինչը, անկախ արժեհամակարգային ընդհանրություններից և հակասություններից, ավելի մեծ հնարավորություն է տալիս պահպանել սեփական էթնիկ համայնքի առանձնահատկությունները՝ ինքնության պահպանմանն ուղղված արդյունավետ մեխանիզմների և միջոցառումների առկայության պայմաններում: Թե՛ համադրելի, և թե՛ հակադիր արժեհամակարգերի պայմաններում սփյուռքը պետք է գտնի ընդունող երկրի քաղաքական և հասարակական համակարգերի հետ համագործակցության այն բոլոր փոխշահավետ եզրերը, որոնք կբացառեն արժեհամակարգային բախումները և իրատեսական հնարավորություն կստեղծեն ազային դիմագծի պահպանման համար:

2.2. Ինքնության պահպանման հիմնախնդրի ազգային և քաղաքակրթական բաղադրիչները

Տեղահանումները, վերաբնակեցումները, զանգվածային արտագաղթերն ու շարունակական գլոբալացումը մարտահրավեր են նետել ազգ-պետություն հասկացության ավանդական ընկալմանը, իսկ միևնույն ազգային պատկանելությունն ունեցող էթնիկ միավորների մշակութային փոփոխություններն ուղղակիորեն անդրադառնում են ինքնության բնույթի և կառուցվածքի վրա, ինչը պետք է հաշվի առնել, եթե խոսքը վերաբերում է սփյուռքի ինքնության պահպան-

մանը⁵¹: Սփյուռքը նոր միջավայրում և նոր քաղաքակրթական և հասարակական պայմանների թելադրմամբ պետք է վերածնակերպի ինքնությունը՝ պահպանելով հավաքական և ընդհանրական ազգային և քաղաքակրթական արժեքները: Որոշ հեղինակներ սփյուռք համարվող համայնքի ինքնությունը համարում են անդրազգային ինքնություն⁵², որն առաջանում է պատմական ծագման տարածքից դուրս մեկ այլ միջավայրում՝ ներառելով և՛ նոր միջավայրի գործոնները, և՛ ընդհանուր պատմական հիշողությունը՝ հայրենիքին աջակցելու և/կամ հայրենիք վերադառնալու վերջնական միտմամբ: Հոլը համարում է, որ սփյուռքը ձևավորում է այնպիսի ինքնություն, որը մշտապես ստեղծում և վերստեղծում է նորը՝ վերափոխման կամ հակադրման միջոցով⁵³: Նրա կարծիքով ինքնության վերածնակավորման գործընթացում էթնիկ խմբերն օգտագործում են պատմական հիմքերն ու լեզվամշակութային առանձնահատկությունները: Այս պարագայում կարևորվում է ոչ միայն «ո՞վ ենք մենք» հարցադրումը, այլև «որտեղի՞ց ենք եկել, ի՞նչ կարող ենք դառնալ և ինչպե՞ս կարող ենք ներկայացնել ինքներս մեզ»⁵⁴: Կարելի է ասել, որ սփյուռքի ինքնության ձևավորումը հասարակական, քաղաքական գործընթաց է, որը ենթադրում է «ո՞վ ենք մենք» հարցադրման պատասխանի որոնմանն ուղղված քննարկումներ և բանակցություններ:

⁵¹ Chiang Chih-Yun, Diasporic Theorizing Paradigm on Cultural Identity, *Intercultural Communication Studies* XIX: 1 2010, 29-46.

⁵² Ahmed, S., Castaneda, C., Fortier, & Sheller, M. (Eds.), Introduction. *Uprootings/regrounds: Questions of home and migration*, 2003, New York: Berg, pp. 1-19

⁵³ Hall S., Cultural identity and diaspora. *J. Rutherford (Ed.), Identity: Community, culture, difference*, London 1990, pp. 222-237.

⁵⁴ Hall S., *New ethnicities*. 1996; Chen K. H., Morley D. (Eds.), *Critical dialogues in cultural studies* London: Routledge, 2005, pp. 441-449.

Էթնիկ համայնքը վերածվում է սփյուռքի՝ սփյուռք լինելու վերաբերյալ առկա ինքնագիտակցության և մոբիլիզացման արդյունքում⁵⁵:

Ինքնությունը, որպես ազգի ինքնագիտակցության և ինքնանույնացման ամբողջական, հավաքական դրսևորում, կազմված է ազգային և քաղաքակրթական բաղադրիչներից: Ընդ որում, ինքնության ազգային բաղադրիչը հաստուկ է միայն տվյալ ազգին և համարվում է այդ էթնոսի կերպատու տարրերի ամբողջությունը: Մինչդեռ քաղաքակրթական բաղադրիչը կարող է պարունակել տարբեր ազգերի համար ընդհանրական տարրեր⁵⁶: Ավելին, ժամանակի ընթացքում հնարավոր է այս կամ այն տարրի վերափոխումն ու տեղափոխումը քաղաքակրթական բաղադրիչից ազգայինի կամ հակառակը: Մասնավորապես, քրիստոնեական դավանանքը Հայաստան է եկել որպես քաղաքակրթական տարր, բայց ժամանակի ընթացքում, կրելով որոշ փոփոխություններ և ձեռք բերելով ազգային առանձնահատկություններ, վերափոխվել է ազգայինի:

Ինքնությունն արդիականացում և վերածնակերպում պահանջող դինամիկ երևույթ է, քանի որ այն ձևավորող երկու տարրերը՝ ազգը և հայրենիքը, ժամանակի ընթացքում ենթակա են փոփոխման: Նշանակում է, որ թեև ինքնությունը յուրահատուկ է ցանկացած ազգի համար, այնուամենայնիվ այն կարող է ենթարկվել որոշ այլափոխումների՝ չկորցնելով իր էությունը⁵⁷: Ինքնության այլափոխումների խնդիրը մեծ հրատապություն ունի սփյուռք համարվող էթնիկ համայնքների պարագայում,

⁵⁵ Tsagarousianou R., Rethinking the concept of diaspora: mobility, connectivity and communication in a globalised world, *Westminster Papers in Communication and Culture*, 2004, 1, 1, 52-65.

⁵⁶ Թորոպյան Ս., նշվ. աշխ., էջ 188:

⁵⁷ Թորոպյան Ս., նույն տեղում:

քանի որ մեծ հավանականություն կա յուրացնելու և կիրառելու տեղի քաղաքակրթական արժեքները, ինչն անխուսափելիորեն կհանգեցնի ինքնության քաղաքակրթական տարրերի այլափոխմանը և/կամ համալրմանը: Կարելի է ասել, որ որևէ էթնիկ խմբի ինքնության պահպանումն ու զարգացումը, կապված լինելով տարածաշրջանային և աշխարհագրական գործոնների հետ, ենթադրում է ինքնակազմակերպման և հասարակական փոխգործակցության շարունակական գործընթաց⁵⁸:

Այնուամենայնիվ, ազգային դիմագծի պահպանման տեսակետից առանցքային է ինքնության ազգային բաղադրիչի պահպանումը և փոխանցումը հաջորդ սերունդներին: Կարելի է ասել, որ ինքնության ազգային բաղադրիչի պահպանման համատեքստում դրսևորվում է սփյուռքի էությունը՝ հայրենիքի հետ կապերի, ազգի և հայրենիքի կերպարի վերաբերյալ հավաքական պատմական հիշողության և ընդունող երկրում ազգային այլ տարբերակիչ հատկանիշների առկայությամբ:

Մակայն, բնակություն հաստատելով քաղաքակրթական այլ միջավայրում, անկախ համընկնող և հակասող արժեքներից, սփյուռքը պետք է իր ուրույն տեղն ունենա ընդունող երկրի հասարակական, մշակութային և քաղաքական համակարգերում, ինչը հնարավոր է ազգային ինքնության պահպանման պարագայում: Մակայն, հարկ է նշել, որ սփյուռքի պարագայում ձևավորվում է երկակի գիտակցություն, ինչը փոխում է պատկանելության գաղափարը տվյալ էթնիկ խմբի շրջանում: Պատկանելության զգացումը կրում է երկմակարդակ բնույթ: Ներքին մակարդակում դրսևորվում է պատկանելությունը պատմական հայրենիքին, իսկ արտաքին մակարդակում

⁵⁸ Gilroy P., *Against Race: Imagining Political Culture beyond the Color Line*, Cambridge, MA: Harvard University Press, 2000, p. 103.

դրսևորվում է պատկանելությունն այն միջավայրին, որտեղ բնակություն է հաստատել տվյալ էթնիկ միավորը: Վերջինս պայմանավորում է սփյուռքի ինքնության դինամիկ բնույթը, որը հանգեցնում է նեքին մակարդակում ազգային և քաղաքակրթական արժեքների այլափոխմանը:

Ընդծելով սփյուռքի ինքնության պահպանման կարևորությունը՝ Շեֆֆերը համարում է, որ այն բարդ և բազմամակարդակ երևույթ է, ինչը հանգեցնում է զանազան մեկնաբանությունների: Ինքնության բարդությունը կապված է վերջինիս սոցիալ-հոգեբանական բնույթի հետ, քանի որ դրա հիմքում ընկած է էթնիկ գիտակցության և, այնուհետև, սփյուռքի ինքնագիտակցության ձևավորումը: Շեֆֆերը նշում է, որ թեպետ պատմության ընթացքում եղել են դեպքեր, երբ սփյուռքը ստեղծվել և գոյատևել է առանց ինքնությունը հստակ ձևակերպելու, սակայն, ինքնության պահպանումը անհրաժեշտ է եղել սփյուռքի հետագա զարգացման համար⁵⁹:

Ըստ Հոլլի՝ սփյուռքի ինքնությունը չի վերաբերում միայն սփռված էթնիկ խմբերին, որոնք պահպանում են իրենց ինքնությունը միայն հայրենիքի հետ կապերի միջոցով և որոնց վերջնական նպատակը հայրենիք վերադառնալն է: Հոլլը համարում է, որ էթնիկության վերաբերյալ նման մոտեցումը կայսերական և գերիշխանական բնույթ ունի: Սփյուռքի փորձը միշտ չէ, որ բնորոշվում է միանշանակ միատարրությամբ, այն հարկ եղած դեպքում, պետք է ճանաչի տարասեռությունը և բազմազանությունը: Նման պարագայում ինքնությունը ոչ թե գոյատևում է ի հակադրություն առկա տարբերությանն, այլ տվյալ տարբերության հետ համադրության և հիբրիդացման

⁵⁹ Sheffer G., նշվ. աշխ., էջ 49.

պայմաններում⁶⁰: Կարևորելով վերջինս՝ Անգը համարում է, որ այլևս անվտանգ չէ հստակ սահմանազատում գծել «մեր» և «նրանց» միջև: Հիբրիդացումը կարևոր գաղափար է, քանի որ այն բնորոշում է միասնականությունը տարբերության մեջ: Միաժամանակ, պարունակելով ընդհանրական տարրեր՝ ինքնության հիբրիդացված ձևը կանխում է ինքնության միանշանակ ձուլումը մեկ «գերիշխանական» ամբողջի մեջ⁶¹: Հիբրիդացումը՝ որպես գաղափար, ինքնության պահպանման մակարդակում ենթադրում է քաղաքակրթական, մշակութային տարրերի փոխանակումներ, որոնք արմատապես փոխում են այլ ժողովուրդների վերաբերյալ պատկերացումներն ու ընկալումները՝ զգալիորեն մեղմելով ժողովուրդների միջև առկա ազգային և քաղաքակրթական բաժանումները⁶²:

Միաժամանակ, Շեֆֆերը համարում է, որ ինքնության պահպանման տեսանկյունից սփյուռքը՝ որպես մեկ ամբողջություն, կարող է գոյություն ունենալ երկու նախապայմանների առկայության պարագայում: Առաջին նախապայմանը անհատների և խմբերի առավել մեծ էթնո-ազգային ամբողջությանը պատկանելության գիտակցումն է, իսկ երկրորդ նախապայմանը՝ այդ ամբողջության հետ նույնացվելու՝ անհատներին և խմբերին ներհատուկ պատրաստակամությունը⁶³:

⁶⁰ Hall S., Cultural identity and diaspora. In Jonathan Rutherford (ed.) *Identity: community, culture, difference*, London: Lawrence & Wishart, 1990. p.235.

⁶¹ Ang I., *Together-in-Difference: Beyond Diaspora, Into Hybridity*, **27**, 2, 2003, 141-154.

⁶² Canclini G., *The state of war and the state of hybridisation*, P. Gilroy, L. Grossberg and A. McRobbie (eds), *Without guarantees: In honour of Stuart Hall*, London: Verso, 2000, pp 38-52.

⁶³ Sheffer G., *The Diaspora Phenomenon in the 21st Century: Ideational, Organizational and Behavioral Challenges*, *Opportunity Structures in Diaspora Relations: Comparisons in Contemporary Multi-level Politics of Diaspora and Transnational Identity*, Center for Basque Studies, University of Nevada, 2007.

Ձուլումը իիստ արդիական խնդիր է սփյուռքի համար, սակայն ձուլման գործընթացը և աստիճանը և միանշանակ ընթացք չունեն տարբեր էթնիկ խմբերի և անհատների համար: Գորդոնն առանձնացնում է ձուլման յոթ տեսակ.

1. Մշակութային կամ վարքագծային ձուլում՝ ապամշակութայնացում:

2. Կառուցվածքային ձուլում, որը ենթադրում է ներգրավվածություն ընդունող երկրի ինստիտուցիոնալ կառույցներում «առաջնային խմբի կարգավիճակով»:

3. Ձուլում՝ որպես ամուսնական կապերի հետևանք:

4. Ձուլում ինքնանույնացման համատեքստում՝ հասարակական մակարդակում տվյալ քաղաքակրթական միջավայրում մարդիկ ձեռք են բերում է մեկ ընդհանուրին պատկանելու զգացում:

5. Վերաբերմունքային ընկալունակության ձուլում, որը պայանավորված է նախապաշարմունքների բացակայությամբ:

6. Վարվելակերպային ընկալունակության ձուլում, որը պայմանավորված է խտրական վերաբերմունքի բացակայությամբ:

7. Քաղաքացիական ձուլում, երբ միջէթնիկ կոնֆլիկտները հաղթահարվում են միևնույն քաղաքացիական պատկանելությամբ պայմանավորված ընդհանուր ինքնության շնորհիվ:⁶⁴

Ըստ Գորդոնի, ձուլման հիմնաքարը, ոչ թե ապամշակութայնացումն է, այլ կառուցվածքային ձուլումը⁶⁵: Հետևում է, որ ձուլման գործընթացը տեղի է ունենում աստիճանաբար և

⁶⁴ Gordon M., *Assimilation and American Life: The Role of Race, Religions and National Origins*. New York: Oxford University Press, 1964, p 71.

⁶⁵ Նուն տեղում, p 81:

սփյուռքի՝ այլ երկրում բնակություն հաստատելու տարբեր փուլերում, համալրում սփյուռքը բնութագրող հատկանիշները:

Չուլման և ինքնության պահպանման համատեքստում, Բ. Անդերսոնը դեռևս 35 տարի առաջ համարում էր, որ, ինտեգրվելով և միաժամանակ չձուլվելով ընդունող երկրներում, սփյուռքը սեփական ինքնության մասին ձեռք է բերում առավել ուժեղ գիտակցություն, որն ուղղակիորեն կապված է ծագման տարածքի, հասարակության և պատմության հետ⁶⁶:

Այնուամայնիվ, սփյուռքի համար առաջնային պետք է լինի ինտեգրման պայմաններում ինքնության պահպանումը և վերջնական ձուլման վտանգից խուսափելը, ինչը հնարավոր կլինի հասարական գործունեություն ծավալելու դեպքում: Սփյուռքի ինքնությունը, որը պահպանվել և փոխանցվել է հաջորդ սերունդներին, կարող է համարվել սփյուռքի գլխավոր բնութագրիչ տարրը⁶⁷: Սաֆրանն այս տեսանկյունից դիտարկում է հայերի և հրեաների դեպքը, ովքեր, պահպանելով սեփական ինքությունը, մշտապես ակտիվ դերակատարում են ունեցել տեղի հասարակական համակարգում: Նա փաստում է, որ, ապրելով իրենց ծագման հայրենիքի սահմաններից դուրս և հիմնվելով պատմական ընդհանուր հիշողության ու միևնույն լեզվամշակութային պատկանելության վրա, հայերը և հրեաները ժամանակի ընթացքում զարգացրել են կրոնական և մշակութային արտաքին կենտրոններ: Թե՛ հայերը, թե՛ հրեաները ընդունող երկրներում ունեցել են միջնորդի դերա-

⁶⁶ Anderson, B., *Imagined Communities: Reflections on the Origins and Spread of Nationalism*. London: Verso. 1983, p 101.

⁶⁷ Bauböck R., *Cold constellations and hot identities: Political theory questions about transnationalism and diaspora*, *Bauböck R. and Faist T., (Eds.), Diaspora and Transnationalism: Concepts, Theories and Methods*: Amsterdam University Press, 2010, pp. 295 -323.

կատարում, մեծ ձեռքբերումների են հասել առևտրի, գիտության, մշակույթի ոլորտներում՝ նպաստելով ընդունող հասարակությունների արդիականացմանը: Նպատակաուղղված լինելով իրենց ինքնությանն ու համայնքին, հայերը և հրեաները չեն ապրել մեկուսացման մեջ, այլ ընդունող երկրի համար ձեռք են բերել որոշակի արժեք⁶⁸: Նման պարագայում փոխլրացող ինտեգրումը օգնում է մեծապես խուսափել տիտղոսային էթնոսի կողմից խտրական վերաբերմունքից և ձուլվելու վտանգից: Այդուհանդերձ, նոր արժեքների տեղայնացումն անխուսափելիորեն հանգեցնում է, եթե ոչ արմատական, ապա՝ առանցքային փոփոխությունների:

Դեռ 1980-ականների սկզբին Օ'Գրադին նշել է, որ հայոց լեզուն հիմնաքարային կարևորություն է ունեցել, այնուամենայնիվ դա չի կարողացել ետ պահել հայերին տեղի լեզուն և մշակույթը լիարժեքորեն յուրացնելուց: Նա համարում է նաև, որ թեպետ հայկական եկեղեցին մեծ դերակատարություն է ունեցել հայերի էթնիկ առանձնահատկությունների պահպանման գործում, սակայն ժամանակի ընթացքում ներգրավվածությունը զգալիորեն նվազել է, ինչը կապված է այն հանգամանքի հետ, որ հայերը մեծապես ընդունում են օտարներին իրենց համայնք, իսկ օտարների հետ ամուսնությունները մեծ տարածում ունեն⁶⁹:

2.3. Քաղաքական ինտեգրման նշանակությունը

Սփյուռքի արդյունավետ գործունեությունն ընդունող երկրում չի սահմանափակվում միայն ազգային ինքնության և ընդունող հասարակության քաղաքակրթական միջավայրում

⁶⁸ Safran W., նշվ. աշխ.:

⁶⁹ O'Grady In., Shared Meaning and Choice as Components of Armenian Immigration Adaptation, *Anthropological Quarterly*, 54, 1981, 76-81.

համադրելիության ապահովման՝ ինտեգրման փոխշահավետ մակարդակով: Սփյուռքի գործունեության անբաժանելի բաղադրիչը պետք է լինի նաև քաղաքական ներգրավվածությունը, որը կօգնի մասնակցել ընդունող երկրի ներքաղաքական կյանքին, իրացնել այդ երկրի լիարժեք քաղաքացի լինելու իրավունքներն ու պարտականությունները, առավել մեծ արդյունավետությամբ լուծել սփյուռքի ներսում առաջացած խնդիրները, ինչպես նաև աջակցել հայրենիքի ներքին և արտաքին քաղաքական խնդիրների շահավետ լուծմանը:

Սփյուռք համարվող համայնքների շրջանակներում բնակության երկիրը «տուն» համարելու զգացումը կապված է «ներառման» կամ «բացառման»՝ ինտեգրման արդյունքի հետ, որը կախված է մի շարք հանգամանքներից: Նման պարագայում, ըստ Մաֆրանի՝ մեծ կարևորություն ունի սփյուռքի կողմից սեփական ինքնության, կեցության, ինչպես նաև վերազգային գործունեության վերաիմաստավորումը, այնպես որ այն լուծելի դարձնի էթնիկ ինքնության պահպանման կամ ձուլման [*ինտեգրման անցանկալի ձևի- հեղինակներ*] դիլեման:

Կոհենը համարում է, որ սփյուռք-համայնքները, ոչ միայն առանձին հավաքական ինքնության կրող են, այլ նաև կիսում են այդ նույն ինքնության առանցքային տարրերը նաև այլ երկրներում ապրող բայց նույն էթնոսին պատկանող այլ խմբերի հետ: Այդ համատեքստում որևէ կոնկրետ էթնոսի սփյուռքի ինքնությունը քիչ թե շատ մեկ ամբողջություն է, որը համարվում է քաղաքական ակտիվ ներգրավվածության՝ քաղաքական և մշակութային ակտիվ գործունեության արդյունք, որը հավաքական ինքնության մակարդակով համախմբում է տարբեր քաղաքակրթական բաղադրիչներ: Կարելի է ասել որ քաղաքական ներգրավվածություն ունենալու և անդրազգային գործունեություն ծավալելու կամա-վորությունը

անցումային շեմ է համարվում էթնիկ ինքնությունից սփյուռքի ինքնության ձևավորումը, քանի որ միայն այս կերպ կարելի է տարբերել էթնիկ համայնքը սփյուռքից⁷⁰:

Անդրադառնալով սփյուռքի գործունեության ձևերին, Կոհենն առանձնացրել է ընդունող երկրում սփյուռքի ներգրավվածության չորս հիմնական ձևեր⁷¹.

1. **Սոցիալական ներգրավվածություն**, որն ուղղված է անդրազգային հասարակական կազմակերպությունների պահպանմանն ու զարգացմանը, հայրենիք-սփյուռք կապերի և հավաքական ինքնության ամրապնդմանը, ինչպես նաև տնտեսական ներգրավվածության ռազմավարության մշակմանն ու իրագործմանը:
2. **Սփյուռքը որպես գիտակցության ձև**, որը ենթադրում է սփյուռքի շրջանում ձևավորված ինքնագիտակցություն, որի հիմքում ընկած է բազմազանության պայմաններում էթնիկ խմբերի միջև փոխհարաբերությունների կարգաբերումը, ինչը հաշվի է առնում այդ նույն բազամազանության պայմաններում սեփական ինքնությունը պահպանելու կարևորությունը:
3. **Մշակութային գործունեություն**, որը բնորոշում է, թե ինչպես են մշակութային տարրերը սփյուռքի գործունեության արդյունքում հաստում ազգային սահմանները:
4. **Սփյուռքը որպես քաղաքական գործունեության ձև**, որը պայմանավորված է քաղաքական խնդիրների լուծման

⁷⁰ Fazal S., Tsagarousianou R., *Transnational Cultural Practices and Communicative Spaces, Javnost/The Public*, 2002, **9**, 1, 5-18.

⁷¹ Cohen R., *Diaspora: Beyond the Jewish Experience*. The 15th Jacob Gitlin Memorial Lecture Public Lecture for the Jacob Gitlin Library, Cape Town 8001, South Africa, 2003, pp. 1-11

նպատակով սփյուռքի ինստիտուցիոնալ կազմակերպվածությանը:

Ընդունող երկրի քաղաքական համակարգում ինտեգրման և սփյուռքի քաղաքական մոբիլիզացիայի առկայությունն օգնում է խուսափել մեկուսացումից և խտրական վերաբերմունքից, ինչպես նաև հնարավորություն է տալիս արդյունավետորեն պայքարել սփյուռքի ձուլմանն ուղղված գաղափարական քաղաքականության կամ դրան նպաստող հանգամանքների դեմ՝ նման վտանգի առկայության դեպքում: Մասնավորապես, հայկական սփյուռքի էթնոքաղաքական մոբիլիզացիան գտնվում է առավել բարձր մակարդակի վրա բազմակարծիք երկրներում, ինչպիսիք են Միացյալ Նահանգները, Ավստրալիան, Կանադան և այլն⁷²:

Ըստ Շեֆֆերի՝ սփյուռքն ունի անհրաժեշտ ներուժ զարգացնելու իր գործունեությունը տարբեր ուղղություններով՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլն: Նա համարում է, որ իրենց պետության հետ կապված սփյուռքահամայնքները, որպես կանոն, ունեն բավական հավասարակշռված և ոչ արմատական համայնքային ռազմավարություն: Նման համայնքներն առավել հաճախ նախընտրում են գործել ընդունող երկրի օրենսդրության և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան: Մյուս կողմից, այն համայնքները, որոնք չունեն պետականություն, առավել հակված են որդեգրելու ներգրավվածության ոչ կոնվենցիոնալ մեխանիզմներ, երբեմն էլ՝ անօրինական մոտեցումներ⁷³:

⁷² Safran W., նշվ. Աշխ.:

⁷³ Sheffer G., *The Diaspora Phenomenon in the 21st Century: Ideational, Organizational and Behavioral Challenges, Opportunity Structures in Diaspora Relations: Comparisons in Contemporary Multi-level Politics of Diaspora and Transnational Identity*, Center for Basque Studies, University of Nevada, 2007.

Ըստ Բրյունոյի, սփյուռքի ինքնությունը ձևավորվում է այն ժամանակ, երբ, ապրելով որևէ կոնկրետ վայրում, համայնքը հարմարվում է տեղի պայմաններին և կապ է հաստատում այլ վայրերում բնակություն հաստատած նույն էթնոսին պատկանող խմբերի հետ՝ նպաստակ ունենալով համատեղել հավաքական ինքնության պահպանմանն ուղղված ջանքերը: Համայնքների միջև ստղծվող կապերը կարող են լինել տարաբնույթ՝ ընտանեկան, համայնքային, կրոնական, հասարակական, քաղաքական, տնտեսական, կամ հիմնված լինեն հայրենիքը կորցնելու ընդհանուր հիշողության վրա: Մփյուռքը, ըստ Բրյունոյի, ունի խորհրդանշական և պատկերագրական բնույթ, ինչը հնարավորություն է տալիս հաղթահարելու հաճախ զգալի հեռավորության խոչընդոտը⁷⁴: Հեռավորության վերացական սահմանների համատեքստում Կինգսլին և Ուայթը նշում են, որ հեռահաղորդակցման միջոցների զարգացումը հնարավորություն է տալիս, լիելով սեփական երկրի սահմաններից դուրս, միաժամանակ և՛ լիարժեքորեն նվիրված լինել հայրենիքին, ազգային ժառանգությանը, և՛ մեծապես կապված լինել ընդունող երկրի քաղաքական, հասարակական և այլ համակարգերին⁷⁵: Հետևաբար, սփյուռքի գործունեությունը պետք է ունենա ցանցային բնույթ, ինչը հնարավորություն կստեղծի բազմամակարդակ և զարգացած անդրազգային կապեր հաստատելու համար: Վերջինս ուղղակիորեն կմեծացնի սփյուռքի ներգրավվածությունն ընդունող երկրում: Ինչպես նշում է Բ. Ադամսոնը, սփյուռքի ցանցային համակարգերն ունակ են կապ հաստատելու տարբեր երկրներում ապրող

⁷⁴ Bruneau M., *Diasporas et espaces transnationaux*. Anthropos-Economica. Paris, 2004, pp. 7-43.

⁷⁵ Kingsley A., White N., *Global Diaspora Strategies Toolkit: Diaspora Matters*, Dublin, 2011, p. 9.

Էթնիկ խմբերի հետ, ինչը զգալիորեն հեշտացնում է ռեսուրսների, փորձի, գաղափարների և ազդեցության փոխանակումը: Մփյուռքը, նման արդյունավետ դիրք ունենալով, հնարավորություն ունի ձեռք բերելու քաղաքական որոշակի ազդեցություն⁷⁶:

Մփյուռքի փոխհարաբերություններն ունեն եռամակարդակ բնույթ: Հաջող ինտեգրման և, միաժամանակ, ինքնության պահպանման նպատակով սփյուռքը պետք է ակտիվ գոյությունություն ծավալի հետևյալ հարթություններում՝

1. Անդրազգային/համաշխարհային մակարդակ, որը ենթադրում է համագործակցություն այլ երկրներում բնակություն հաստատած և միևնույն էթնիկ պատկանելությունն ունեցող այլ խմբերի հետ:
2. Ընդունող երկրի և հայրենիքի հետ ակտիվ կապեր:
3. Համագործակցություն տեղի համայնքի մակարդակով:⁷⁷

Կախված սերնդից՝ վերոնշյալ մակարդակները սփյուռքի շրջանակներում դրսևորվում են նախընտրության տարբեր աստիճաններով: Մփյուռքի առաջին սերունդը, որն ունի հայրենիքում ապրելու փորձ, նախընտրում է համայնքի ներսում և հայրենիքի հետ կապերի ամրապնդումը: Երկրորդ սերունդը, կրկին կենտրոնանալով տեղի և ազգային մակարդակներում համագործակցության վրա, սկսում է փնտրել անդրազգային կապեր հաստատելու ուղիներ⁷⁸: Ինչ վերաբերում է սփյուռքի երրորդ սերնդին, ապա ինքնության պահպանման և ինտեգրման անհրաժեշտ մակարդակ ձևավորելու տեսանկյուն

⁷⁶ Adamson B. F., *The growing importance of Diaspora politics*, Current history, New York, 2016, pp. 291-297.

⁷⁷ Bruneau M., *Diasporas, transnational spaces and communities*, Bauböck R. and Faist T., (Eds.), *Diaspora and Transnationalism: Concepts, Theories and Methods*, Amsterdam University Press, 2010, pp. 35-51

⁷⁸ Նույն տեղում:

նից այն պետք է համախմբի և համակարգի համագործակցության վերոնշյալ երեք մակարդակները:

Վերջին երկու տասնամյակում հեղահաղորդակցության միջոցների կտրուկ զարգացումը նոր հնարավորություններ է ստեղծել սփյուռքի կոնսուլիդացիայի համար: Սփյուռքը գիտակցում է երիտասարդ սերնդների ներգրավման հույժ կարևորությունը, քանի որ սփյուռքի երիտասարդ ներկայացուցիչները կարևոր դերակատարություն են ստանձնել իրենց սփյուռքաբնակ հասակակիցների հետ զարգացած ցանցային համակարգ ստեղծելու հարցում: Ինքնության փոխանցման ճիշտ ռազմավարության դեպքում երիտասարդ սերնդի ձևավորած ցանցային համագործակցությունը ձեռք է բերում աննախադեպ նշանակություն: Նման զարգացած ցանցային համակարգի օրինակներ կարող են դիտարկվել Երիտասարդ օտարերկրացի կիպրոսցիների համաշխարհային կազմակերպությունը (NEPOMAK) և Իռլանդական հիմնադրամ համարվող Համաշխարհային երիտասարդ առաջնորդների ծրագիրը⁷⁹:

Ա. Վեյնարը ևս սփյուռքի գործունեությունը դիտարկում է եռամակարդակ չափումով: Նա համարում է, որ սփյուռքն առաջին հերթին անդրազգային համայնք է, որի այդպիսի բնույթի իրացումը կարող է երաշխավորել զարգացման լավ հեռանկարներ: Ավելին՝ անդրազգայնությունը ընդծվում է զարգացման ռազմավարությանն ուղղված քաղաքական ներգրավվածության մեջ, որն արտացոլվում է փոխհարաբերությունների երեք մակարդակներում⁸⁰: Որվագծելով նշված

⁷⁹ Kingsley A., White N., նշվ. Աշխ., էջ. 52.

⁸⁰ Weinar A., Instrumentalising diasporas for development: International and European policy discourses, *Bauböck R. and Faist T., (Eds.), Diaspora and Transnationalism: Concepts, Theories and Methods*, Amsterdam University Press, 2010, pp. 73-91.

եռամակարդակ բնույթը՝ սփյուռքը բնորոշվում է որպես հավաքական բնույթ ունեցող հասարակական միավոր, որի գործու-նեությունը կարելի է համարել հաջողված, եթե ժամանակի ընթացքում այն կարողացել է՝

1. պահպանել ազգային, մշակութային, կրոնական հավաքական ինքնությունը՝ ներքին համախմբվածության և հայրենիքի հետ կապերի միջոցով,

2. պատրաստակամություն ցուցաբերել իրացնելու համայնքի հավաքական շահերը ներքին ինստիտուցիոնալ կազմակերպվածության և անդրազգային կապերի միջոցով:⁸¹

Քաղաքագիտական ուսումնասիրություններում սփյուռքի ընկալումը կապված է էթնիկ խմբի քաղաքական ներգրավվածության հետ, ինչն ուղղված է ինքնության և ինքնանույնացման արդիականացմանը:⁸² Քաղաքական գործունեության տեսակետից սփյուռքը դիտվում է որպես երբեմն միմյանցից զգալիորեն տարբերվող խմբերի ընդհանուր ճանաչողական շրջանակ, որը վերացական բնորոշումներից անցել է առավել հստակ և գործնական ձևակերպումների, որոնք բնորոշում են սփյուռք համարվող համայնքները, վերջիններիս ձևավորած կազմակերպություններն ու անհատներին:⁸³

2009 թվականին Իռլանդիայի Մեյնութի համալսարանում իրականացված հետազոտության արդյունքում

⁸¹ Adamson, F. B., Demetriou M., Remapping the boundaries of “state” and “national identity”: Incorporating diasporas into IR theorizing, *European Journal of International Relations*, 2007, **13**, 4, 489-526.

⁸² Koinova M. , Diasporas and international politics: Utilising the universalistic creed of liberalism for particularistic and nationalist purposes. *Bauböck R. and Faist T., (Eds.), Diaspora and Transnationalism: Concepts, Theories and Methods*, Amsterdam University Press, 2010, pp. 149-167.

⁸³ Brubaker R. W., The “diaspora” diaspora, *Ethnic and Racial Studies*, 2005 , **28**, 1, 1-19.

սահմանվել են սփյուռքի ներգրավվածության տասը առանցքային սկզբունքներ՝

1. Սփյուռքի ռազմավարությունը պետք է անհրաժեշտաբար նպատակաուղղված լինի ընդհանուր ինքնության, հավաքական գիտակցության պահպանմանը, տնտեսական զարգացմանը և ռազմավարական առաջնահերթությունների իրագործմանը: Սակայն, միաժամանակ, այն պետք է բավական ճկուն լինի դեպի զարգացում տանող փոփոխությունների հանդեպ:

2. Սփյուռքի ռազմավարությունը չի կարող երկարաժամկետ հեռանկարում պահպանել իր կայունությունը, եթե նախապատվությունը տրվի տնտեսական կապերին, այլ ոչ՝ հասարակական և մշակութային համագործակցային ցանցին:

3. Սփյուռքի ռազմավարությունը պետք է երկուստեք շահավետ լինի և՛ սփյուռքի և հայրենիքի համար:

4. Այն երկրները, որոնք ճանաչում են իրենց սփյուռքները, առավել պատրաստակամ են ընդգրկամանն ուղղված քայլեր նախաձեռնելուն:

5. Սփյուռքի ռազմավարությունը պետք է ձևակերպել հնարավորինս լայն, որպեսզի նվազագույնի հասցվեն հասարակական, մշակութային, տնտեսական և քաղաքական գործունեությունը ազգայնական որակելու հնարավորությունները:

6. Սփյուռքի ռազմավարությունը պետք է լիարժեքորեն քննարկել: Հաջող իրացման համար ռազմավարությունը պետք է ունենա համահեղինակներ:

7. Սփյուռքի ռազմավարությունը պետք է լինի թափանցիկ և իրականացվի պատասխանատու կերպով: Միաժամանակ, պետք է հաշվի առնի տվյալ սփյուռքի առանձնահատկություններն ու ներառի մեխանիզմներ, որոնք հնարավո-

րություն կտան գնահատելու և վերլուծելու այդ առանձնահատկություններով պայմանավորված ռազմավարության արդյունքները: Այս կետով պետք է սահմանվեն նաև այն շրջանակներն ու չափումները, որոնք ռազմավարության համատեքստում ունեն գարգացման կարիք:

8. Գոյություն չունի սփյուռքի ռազմավարության համակարգմանն ու իրացմանն ուղղված համակիրառելի ինստիտուցիոնալ համակարգ: Ներգրավվածության ձևերը պետք է արտացոլեն տվյալ երկրի ինստիտուցիոնալ առանձնահատկությունները և հիմնվեն այդ երկրի հասարակական, մշակութային, տնտեսական, քաղաքական կարիքների վրա, որոնք պետք է, սակայն, համադրվեն տվյալ սփյուռքի պատմության և կառուցվածքային այլ տարրերի հետ:

9. Որպես լավագույն փորձի օրինակ՝ սփյուռքի ռազմավարությունը պետք է բերվի միջազգային մակարդակ և համագործակցության մեջ դրվի քաղաքականության տարածմանն ուղղված այլ, կից համակարգային ցանցերի հետ:

10. Ռազմավարության հիմքում պետք է ընկած լինի փիլիսոփայական հիմնավորում, որը ներդաշնակության մեջ պետք է լինի առկա հասարակական, մշակութային, տնտեսական, քաղաքական կարիքների հետ, քանի որ անհիմն կարգախոսները կարող են որոշակի հաջողություններ ունենալ կարճաժամկետ հեռանկարում, սակայն, հետագայում դրանք անշուշտ ձախողման կմատնվեն⁸⁴:

⁸⁴ Boyle M., Kitchin R., Ancien D., *The NIRSA Diaspora Strategy Wheel & Ten Principles of Good Practice*, NUI Maynooth, 2009.

ԳԼՈՒԽ 3

«ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ-ԸՆԴՈՒՆՈՂ ԵՐԿԻՐ»

ԵՌԱՆԿՅԱՆ ԳԱԳԱԹՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 «Հայրենիք-սփյուռք» փոխգործակցություն. հայրենիքի խնդիրների լուծման արտաքին լծակը

Վերջին տասնամյակների ընթացքում սփյուռքների ուսումնասիրման հիմնական նպատակները քաղաքական են: Դեռևս 2003թ. Գ. Շեֆերն առաջարկել է սփյուռքների գործունեության քաղաքական ասպեկտների ուսումնասիրման (համեմատական կամ մեկ դեպքի) օպերացիոն սխեմա՝ ստորև բերված անկախ և կախյալ փոփոխականների հիման վրա:⁸⁵

Ա. Անկախ փոփոխականներ՝

1. Սփյուռքների քաղաքական ակտիվության նկատմամբ հայրենի և ընդունող երկրների վերաբերմունքը,
2. Սփյուռքների համար հայրենի և ընդունող երկրների իշխանությունների և հասարակությունների մատչելիությունը,
3. Երկու տեղերում կառավարությունների պատրաստակամությունը սփյուռքը որպես երկկողմ և համաշխարհային մակարդակներով իրենց շահերը հետապնդող քաղաքական ռեսուրս դիտարկելու համար,
4. Ազգային և միջազգային համաձայնություններ, որոնք ազդում են միգրացիոն հոսքերի ինտենսիվության և տեղահանվածների կարգավիճակի վրա:

Բ. Կախյալ փոփոխականներ՝

⁸⁵ Шеффер Г., Диаспоры в мировой политике, 2003, сс. 183-184.

1. Ժամանակակից սփյուռքների ազդեցությունը հայրենի և ընդունող երկրների ներքին և արտաքին քաղաքականությունների և տարբեր երկրների (հատկապես՝ որտեղ սփյուռք կա) հետ հայրենի պետության հարաբերությունների վրա:

2. Սփյուռքի գործունեության ազդեցությունը ներքին և միջազգային անվտանգության վրա,

3. Սփյուռքների դերը՝ որպես համաշխարհային քաղաքականության ինքնուրույն դերակատարներ:

Կան մի շարք գործոններ, որոնք կարող են փոխել անկախ և կախյալ փոփոխականների բնույթի կորեյացիան: Մասնավորապես, դրանք սփյուռքների բնութագրերն են՝

1. Ընդունող երկրում լինելու տևողությունը,
2. Կազմակերպական հասունությունը երկրի մակարդակով,
3. Առկա նյութական ռեսուրսները,
4. Իրավական կարգավիճակը,
5. Ընդունող հասարակությունում մշակութային ինտեգրման մակարդակը,
6. Բնակության կոմպակտության մակարդակը:

Ընդ որում, ձևակերպվել էին այն հարցերը, որոնց պատասխաններն առաջնային էին հիմնախնդրի քննարկման տեսակետից՝


1. Ինչ չափով են սփյուռքները հակված ազդելու հայրենի և ընդունող երկրների կառավարությունների վրա,
2. Իսկապես նրանք նյութական, քաղաքական և բարոյական աջակցություն են ցուցաբերում իրենց հայրենիքի իշխանություններին կամ ընդդիմությանը,
3. Մոբիլիզացիայի ինչ ռազմավարություն են օգտագործում սփյուռքները,
4. Ինչի արդյունք է նրանց ակտիվությունը՝ դրան մղում են հայրենի երկրի կամ ընդունող երկրի իշխանությունները,

5. Ինչ ազդեցություն ունեն ընդունող երկրի իշխանությունները կամ այլ շահագրգիռ կողմեր:

Հիմնախնդրի ուսումնասիրությունները դեռևս շատ հարցերի պատասխաններ չեն տվել: Թերևս, պատճառն այն է, որ երևույթը խիստ ասիմետրիկ և բացառիկ բարդ է, քանի որ ուսումնասիրության առարկան բաղկացած է երեք տարբեր կարգավիճակներ ունեցող կողմերի (հայրենիք, ընդունող երկիր և նրա մաս կազմող, սակայն հայրենիքի հետ լուրջ կապեր ունեցող սփյուռք) հարաբերություններից:

Հաղորդակցման միջոցների կտրուկ զարգացումները, հետևաբար և «հայրենիք-սփյուռք» ինտենսիվ փոխազդեցությունները հնարավորություններ են ստեղծում սփյուռքի համար հայրենիքում՝ մասնավորապես ներքաղաքական հարցերում, ինչպես նաև սփյուռքի ղեկավարության համար՝ ընդունող երկրում, հայրենիքի արտաքին քաղաքական խնդիրների լուծմանն աջակցելու համար: Իհարկե «հայրենիք-սփյուռք» գործակցությունն ուղղված է նաև սփյուռքի ազգային ինքնության պահպանմանը, սակայն այդ բաղադրիչը զգալիորեն պայմանավորված է քաղաքական բաղադրիչի կարևորությամբ:

Նկար 1



Հետևաբար, այդ եռակողմ փոխհարաբերությունները, ինչպես երևում է նկար 1-ում, պայմանավորված են երեք խումբ հարաբերություններով՝ «հայրենիք-սփյուռք», «հայրենիք-ընդունող երկիր», «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր»: Միաժամանակ, այդ հարաբերությունները պայմանավորված են հայրենիքի և ընդունող երկրի առանձնահատկություններով, ինչպես նաև սփյուռքի ձևավորման հանգամանքներով: Այդ պատճառով, այս գլխում դիտարկվում են ոչ միայն ընդհանուր տեսական խնդիրներ, այլև կոնկրետ դեպքեր (Իսրայելի, Իռլանդիայի, Չինաստանի), որոնք ոչ միայն ունեն ազդեցիկ սփյուռքներ՝ ձևավորված տարբեր հանգամանքների ազդեցության ներքո, այլև ընդգծված տարբերություններ ունեցող հայրենիքներ:

Հայրենիքի սահմաններից դուրս որևէ էթնիկ խումբ սփյուռք համարելու առաջնային նախապայմաններից է ընդունող երկրում հայրենամետ գործունեության նախաձեռնումը, որը բնորոշվում է հայրենիք-սփյուռք բազմամակարդակ ակտիվ կապերի առկայությամբ: Ժամանակակից սփյուռքը էթնիկ խումբ է, որն, ապրելով և գործելով այլ երկրի սահմաններում, պահպանում և զարգացնում է իր՝ հայրենիքի հետ ունեցած նյութական և հոգևոր կապը, ինչն էլ հնարավորություն է տալիս պահպանել ինքնությունը և համայնքային միասնությունը: Ավելին՝ արդյունավետության համատեքստում հայրենիք-սփյուռք հարաբերությունները ենթադրում են երկուստեք նախաձեռնություններ. հայրենիքը քայլեր է ձեռնարկում առավել խորացնելու կապերն այլ երկրում ապրող էթնիկ հայրենակիցների հետ, մյուս կողմից՝ իր գործունեությամբ սփյուռքը «պահանջում է» ճանաչել իր քաղաքակրթական և քաղաքական առանձնահատկությունն ընդունող երկրում, ինչը հնարավոր է լինում հայրենիքի հետ կապերի ամրապնդման և ինքնության արդիականացման պարագայում:

Հայրենիքի հետ կապերը սփյուռքի վերաբերյալ կատարվող ուռումնասիրությունների բաղկացուցիչ մասն են կազմում: Հայրենիք-սփյուռք կապերի արդյունավետությունը գնահատելու համար հարկ է պատասխանել մի շարք հարցադրումների՝ ներգրավվածության ի՞նչ աստիճանով է մասնակցում սփյուռքը հայրենիքի քաղաքական գործընթացներին, ինչպիսի՞ ոլորտներում է առավել առանցքային սփյուռքի մասնակցությունը, համագործակցության ինչպիսի՞ մեխանիզմներ պետք է մշակել եկուստեք բարենպաստ փոխգործակցության հասնելու համար:

Հայրենիք-սփյուռք գործակցությունը կարելի է դիտարկել հիմնական երկու տեսանկյուններից՝ քաղաքական կամ ֆինանսա-տնտեսական: Սփյուռքի կողմից նյութական օժանդակությունը դրսևորվում է երկկողմ փոխհարաբերությունների սկզբնական շրջանում, երբ սփյուռքը դեռևս չունի ինստիտուցիանալացված ձև ընդունող երկրում, իսկ հայրենիքի հետ փոխհարաբերությունները տարածվում են հիմնականում նյութական հատկացումների հարթության վրա: Ընդ որում, ֆինանսական օժանդակությունը կարող է կիրառվել ամենատարբեր ոլորտների զարգացման նպատակով՝ կրթական բարեփոխումներ, քաղաքակրթական և մշակութային նախաձեռնություններ, ենթակառուցվածքների բարելավման միջոցառումներ և ոլորտային զարգացման մի շարք ծրագրեր:

Սփյուռքի համար հայրենիքում ներգրավվածության առաջնային ձևերից է նյութական և ֆինանսական միջոցների ներդրումը: Այդ միջոցները կարող են լինել ամենատարբեր բնույթի՝ դրամական հատկացումներից մինչև բարեգործական հագուստ և սնունդ: Ընդ որում՝ հատկացումների նպատակներն ու շարժառիթները կարող են լինել տարատեսակ: Սփյուռքաբնակները կարող են աջակցություն տրամադրել հայրենիքում

ապրող իրենց ընտանիքներին, քաղաքացիական հասարակության կայացմանն ուղղված կազակերպություններին, աջակցել կուսակցությունների ձևավորմանն ու կայացմանը, կամ իրենց օժանդակությունը ցուցաբերել ազգային կամ պետական մակարդակով իրականացվող ծրագրերին: Այս նպատակներից յուրաքանչյուրը յուրովի է բնորոշում հայրենիքսփյուռք փոխհարաբերությունները: Աջակցության ամենատարբեր ձևերը ծառայում են որպես քաղաքական լծակ՝ ուղղված սփյուռքի ազդեցության մեծացմանը և/կամ հայրենիքի զարգացմանը: Տարբերելով սփյուռքի կողմից արված ֆինանսական աջակցության շարժառիթները, պետք է նկատել, որ դրանք կարող են արվել միայն շահույթ հետապնդելու միտումով կամ բարեգործական նկատառումներով⁸⁶: Ընդ որում, չպետք է բացառել, որ Սփյուռքից հայրենիք ուղղված միակողմանի աջակցությունը կարող է հանգեցնել սփյուռք-հայրենիք երկկողմ հարաբերությունների «վերադաս-ստորադաս» ընկալմանը, ինչը հայրենիքը մշտական կախվածության մեջ կդնի սփյուռքից: Այս մտայնությունը կա նաև հայկական սփյուռքի դեպքում՝ հատկապես որպես միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների կարծիք, ինչը ամրապնդվել է այն պատճառով, որ տարբեր քաղաքական գործիչներ այդ ազդեցությամբ են երբեմն բացատրել այս կամ այն իրավիճակը:

Եղել են դեպքեր, երբ նորաստեղծ պետությունները երբեմն փորձել են խուսափել սփյուռքի բարեգործական հատկացումներից՝ նպատակ ունենալով և՛ վերահսկելու սփյուռքի ազդեցությունը, և՛ խուսափելու բարոյական անկումից, որը կապված է բարեգործության մշտական և

⁸⁶ Lainer-Vos D., Diaspora-Homeland Relations as a Framework to Examine Nation-Building Processes, *Sociology Compass* 4/10 (2010): 894–908

միակողմանի հասցեատեր լինելու հետ: Օրինակ՝ 1920-ականներին իռլանդացի հանրապետականները և 1950-ականներին հրեա ազգայնականները երկրի զարգացումն ապահովում էին սփյուռքից ֆինանսական միջոցների ներգրավմամբ՝ պարտատոմսերի թողարկման միջոցով: Այդ պարտատոմսերի թողարկման ծրագրերը պարզապես ֆինանսական գործիքներ չէին, քանի որ դրանց կիրառումով իռլանդացիները և հրեաները վերաձևակերպեցին հարաբերություններն իրենց սփյուռքների հետ: Այդ ծրագրի հաջող իրացումն Իսրայելի դեպքում ակտիվացրեց Միացյալ Նահանգներում հաստատված հրեաներից ֆինանսական միջոցների ներգրավումը հայրենիքում իրականացվող ծրագրերի համար: Չնայած իռլանդացիների դեպքում հաջողությունն այնքան էլ ակնհայտ չէր, ինչպես հրեաների պարագայում, այդուհանդերձ, հայրենիք-սփյուռք հարաբերություններում նման մոտեցման կիրառումը հանգեցրեց ինչպես բարեգործական, այնպես էլ շահույթ հետապնդող նպատակներով դեպի հայրենիք ուղղվող ֆինանսական հոսքերի աճին⁸⁷:

Այնուամենայնիվ, անկախ շարժառիթներից, սփյուռքի տրամադրած միջոցները մեծ նշանակություն կարող են ունենալ տնտեսական մակարդակում, ինչը կարող է պայմանավորել հայրենիք-սփյուռք շահավետ նյութական փոխգործակցությունը: Սակայն, բացառապես նյութական մակարդակում իրագործվող փոխհարաբերությունների ազդեցության հեռանկարները սփյուռքի ինքնության ձևավորման և զարգացման հարցում բավական անորոշ են: Իհարկե, պետք չէ լրիվ անտեսել դրամական/նյութական օժանդակության կարևորությունը, քանի որ դա կարող է ծառայել յուրահատուկ հարթակ, որի վրա

⁸⁷ Lainer-Vos D., նշվ աշխ.

հետագայում կխարսխվեն հայրենիք-սփյուռք երկկողմ կապերի առավել ընդգրկուն դրսևորումները:

Չնսեմացնելով նյութական օժանդակության և դրա նպատակային օգտագործման կարևորությունը, հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունները սփյուռքի ինստիտուցիոնալ կայացման առավել բարենպաստ փուլում պետք է տեղափոխվեն քաղաքական ոլորտ, ինչի արդյունքում սփյուռքը կարող է ծառայել որպես երկրի սահմաններից դուրս հայրենիքի ներքին և արտաքին խնդիրների լուծման համար արդյունավետ լծակ:

Սփյուռքը կարող է մեծ դերակատարում ունենալ թե՛ ներքին, և թե՛ արտաքին քաղաքական խնդիրների լուծումը ցանկալի ուղղությամբ տանելու հարցում: Սփյուռքի քաղաքական ներգրավվածությունը հայրենիքի քաղաքական խնդիրների լուծման մեջ ուղղակիորեն պայմանավորված է ընդունող երկրում ինստիտուցիոնալ մոբիլիզացմամբ և կառուցողական հարաբերություններով, ինչը հնարավորություն կտա մշակել և կիրառել հայրենիքի համար մեծ նշանակություն ունեցող խնդիրների լուծման ցանկալի մեխանիզմներ: Սփյուռքի գործունեությունը չի սահմանափակվում միայն նյութական օժանդակությամբ, այլ ենթադրում է նաև հայրենիքի հետ արդյունավետ համագործակցային ուղիների մշակում՝ ուղղված առանցքային քաղաքական խնդիրների լուծմանը:

Սփյուռքը ռազմավարական ներդրում կարող է ունենալ հայրենիքում քաղաքական և տնտեսական ճգնաժամերի պայմաններում՝ ընդունող երկրի աջակցությունը իրավիճակի բարելավմանն ուղղելու հարցում: Մյուս կողմից, սփյուռքի առկայությունը տարբեր երկրներում և վերջինիս ներգրավվածությունը հայրենիքի հասարակական և քաղաքական համակարգերում ամրապնդում է հայրենաբնակների դյուրացված մուտքը սովյալ երկիր, ինչը մեծ կարևորություն ունի

սփյուռքի ազգային ինքնության պահպանման և մշակութային արդիականացման համար: Փոխգործակցության նման մոդելը սփյուռքին հնարավորություն կտա ընդունող երկրում լեգիտիմացնել և զարգացնել քաղաքական ռազմավարությունը: Այդ համատեքստում Շայնը համարում է, որ ազգային ինքնության ամրապնդումը հայրենիքի սահմաններից դուրս հնարավորություն կտա լեգիտիմացնելու սփյուռքը՝ որպես քաղաքական նոր սուբյեկտ, որը կարող է մեծապես ներգործել հայրենիքի քաղաքական գործընթացների արդյունքների վրա⁸⁸: Կարելի է պնդել, որ երբ մեծանում է հայրենիքում սփյուռքի ներգրավվածությունն, ինքնաբերաբար ընդլայնվում է հայրենիքի քաղաքական օրակարգը իրացնող համայնքը երկրի սահմաններից դուրս, ինչը ենթադրում է մի շարք վերափոխումներ.

- ներքին և արտաքին քաղաքական առաջնահերթությունների վերաձևակերպում,
- պետական միջոցների վերաբաշխում,
- կառավարության ինստիտուցիոնալ համակարգի վերակառուցում, ինչը թույլ կտա ստեղծել անհրաժեշտ կառույցներ ռազմավարական նշանակություն ունեցող քաղաքական նոր ծրագրեր զարգացնելու համար:

Սփյուռքի ներգրավվածության արդյունքում, այն դառնում է երկրի քաղաքական համայնքի բաղկացուցիչ մաս և ընդլայնվում է նոր ռազմավարական նախագծերի իրագործման հնարավորությունը երկրի սահմաններից դուրս⁸⁹:

⁸⁸ Shain Y., *The Mexican-American diaspora's impact on Mexico*, *Political Science Quarterly*, Vol. 114, No 4, 2000, 661-691.

⁸⁹ Waterbury M. A., *Bridging the divide: Towards a comparative framework for understanding kin state and migrant-sending state diaspora politics* Bauböck R. and Faist T., (Eds.), *Diaspora and Transnationalism: Concepts, Theories and Methods* Amsterdam University Press 2010, pp. 131-148.

Լորբինգը նույնպես սփյուռքի գործունեության առանցքային դրսևորումներից է, որի գերնպատակը հայրենիքին քաղաքական ուղղությամբ աջակցությունն ցուցաբերելն է: Մակայն, հարկ է նշել, որ այդ աջակցությունը դրսևորվում է անուղղակի ձևով՝ ազդեցություն գործելով ընդունող երկրի քաղաքական գործունեության վրա: Այդ ազդեցությունը կարող է իրագործելի լինել քննարկումների ձևավորմամբ, տեղեկությունների և քաղաքական վերլուծության տրամադրմամբ և քաղաքական վերահսկողության կիրառմամբ: Չնայած լորբինգի դրսևորման ձևերն ու գործընթացը մեծապես կապված են սփյուռք-ընդունող երկրի փոխհարաբերությունների հետ, դրա արդյունքը և նպատակը միանգամայն առնչվում են հայրենիք-սփյուռք երկկողմ գործակցությանը: Լորբինգը կարող է ունենալ տարբեր նպատակակետեր, ուղղված լինելով՝

- հայրենիքում գործող կառավարության գործունեության խթանմանը կամ այդ կառավարության փոփոխմանը,
- հայրենամետ նախագծերի ընդունմանը,
- քաղաքական հակամարտությունների կարգավորմանը,
- միջազգային կազմակերպություններում հայրենիքի ազդեցության մեծացմանը և այլն:

Օրինակ, Միացյալ Նահանգներում Իսրայելի հանրային գործերի վարչության գործունեությունը լիովին համընկնում է Իսրայելի կառավարության նպատակների հետ, մինչդեռ Կուբայի լորբինգը մեծապես ուղղված է եղել Կուբայում կառավարող ռեժիմի փոփոխությանը:

Ընդունող երկրում որոշումների կայացման կառույցներում սփյուռքի ներգրավվածությունը մեծապես ընդլայնում է վերջինիս ազդեցությունը հայրենիքին ուղղված արտաքին քաղաքականության ձևավորման հարցում: Օրինակ, սփյուռքը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ձևավորման և

իրագործման կարևոր գործոններից է: Կոհենը համարում է, որ սառը պատերազմի ավարտից հետո սփյուռքի ազդեցությունը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ձևակերպման վրա ձեռք է բերել ավելի մեծ լեգիտիմություն⁹⁰: Այդուհանդերձ, սփյուռքի ներգրավվածությունը կարող է հակասական լինել թե՛ ընդունող երկրում, թե՛ հայրենիքում:

Սփյուռքի քաղաքական մոբիլիզացման վերաբերյալ ընկալումները կարող են լինել իրարամերժ: Ընդունող երկրում սփյուռքի քաղաքական ներգրավվածության կողմնակիցները կարող են համարել, որ սփյուռքը և վերջինիս գործունեությունը ապահովում է տարակարծություն և հանգեցնում է առավել ժողովրդավարական որոշումների ընդունմանը: Միաժամանակ, քննադատները կարող են պնդել, որ սփյուռքի ներգրավվածության արդյունքում հայրենիքի շահը կարող է վեր դասվել ընդունող երկրի շահից: Իր հերթին, սփյուռքի գործունեությունը կարող է կարևորվել հայրենիքում հասարակական գործունեության տարբեր ոլորտներում, իսկ հայրենաբնակները կարող են սփյուռքի դիրքորոշումները հակադրել սեփական շահերին՝ բացասական վերաբերմունք ունենալով սփյուռքի քաղաքական մոբիլիզացման վերաբերյալ⁹¹: Հարկ է նկատել, որ խնդիրն արժանի է քննարկման այլ հարթությունում ևս: Սփյուռքի ներկայացուցիչների մասնակցությունը հայրենիքի քաղաքական օրակարգի հարցերի լուծմանն ու որոշումների ընդունմանը վիճահարույց է այն առումով, որ այդ որոշումներն ազդում են ոչ թե իրենց, այլ հայրենաբնակների կյանքի վրա:

⁹⁰ Robin C., *New Roles for Diasporas in International Relations. Diaspora*, Vol 14, No 1, 2005, 179–183.

⁹¹ Van Hear N., *Spheres of diaspora engagement, Diasporas Reimagined Spaces, Practices and Belonging*. Oxford Diasporas Programme, 2015, 32–36.

Միաժամանակ, չի կարելի բացառել, որ նրանք կարող են գործել ոչ թե հայրենիքի, այլ ընդունող երկրի շահերից ելնելով:

Անկախ սփյուռքի գործունեության ազդեցության չափից և հաջողությունից՝ սփյուռքը քիչ թե շատ ներգրավված է լինում ընդունող երկրի ներքին և արտաքին քաղաքական գործընթացներում, ուստի սփյուռքը կարող է փոխել խաղի կանոնները հայրենիքի հարցում, ինչը կարող է լինել և՛ ի բարօրություն, և ի վնաս հայրենիքում գործող կառավարությանը: Կախված սփյուռքի տնտեսական հզորությունից, այն կարող է ֆինանսավորել կուսակցությունների, լրատվամիջոցների, աջակցել տարբեր շարժումների և այլն: Սփյուռքի արդյունավետ գործունեության օրինակ կարող է դիտարկվել 1980-ականներին աֆրոամերիկացիների գործունեությունն՝ ուղղված ռասայական խտրականության դեմ, ինչի արդյունքում նրանք կարողացան Հարավային Աֆրիկային նկատմամբ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը տանել ցանկալի ուղղությամբ: Մեկ այլ հաջողված օրինակ է 1992 թվականին հայկական սփյուռքի գործունեության արդյունքում ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի դեմ ռազմական ագրեսիա իրականացնող Ադրբեջանին հատկացվող ԱՄՆ-ի օժանդակության կասեցումը ԱՄՆ Կոնգրեսի կողմից, որը շարունակվել է շուրջ 10 տարի: Ընդ որում՝ որոշումն ընդունվել էր ԱՄՆ նախագահի անհամաձայնության պայմաններում, ինչն ապացուցում է սփյուռքի դերակատարության կարևորությունը: Սակայն, եթե սփյուռքի լոբբինգը այնքան հզոր չէ, որ կարողանա էական փոփոխությունների հանգեցնել, ապա այն կարող է դաշնակցել մեկ այլ էթնիկ խմբի հետ՝ ազդեցության մեծացման նպատակներով: Նման կերպ վարվեց Ամերիկայի ադրբեջանական սփյուռքը, որը հայկական լոբբինգը հակակշռելու նպատակով գործակցեց

հրեական կազմակերպությունների հետ՝ թույլ տալով հրեական դպրոցներ կառուցել Ադրբեջանում⁹²:

Հայրենիք-սփյուռք հարաբերությունների վրա էապես կարող է ազդել ոչ միայն սփյուռքի հավաքական ռազմավարությունն, այլ նաև առանձին անհատների ունեցած դերակատարությունը տարբեր երկրներում և/կամ կազմակերպություններում: Անկախ այն հանգամանքից, թե որքան է հայրենիքը ձգտում ուղղորդել արտասահմանում ապրող հայրենակիցներին, սփյուռքի որոշ անհատներ և ինստիտուտներ կարող են զգալիորեն անկախ լինել իրենց հայրենիքից: Առանձին կառույցների և անհատների ինքնուրույնությունը կախված է այն հանգամանքից, թե որքանով են նրանք կարողանում անկախ և ինքնուրույն կիրառել հայրենիքի ռեսուրսները և թե ինչ օրինական կարգավիճակ ունեն այլ երկրում: Հարկ է նշել նաև, որ անհատների և կառույցների դիրքը վերջիններիս տալիս է քաղաքական իշխանություն, որը կարող է հավասարազոր լինել ընդունող երկրում քաղաքական գործունեությամբ զբաղվող անհատների իշխանությանը, լոբբիների և սփյուռքի համակարգի առանձին հատվածների ազդեցությանը: Անհատների և կառույցների ազդեցիկությունը հիմնականում կապված է քաղաքական ազդեցությունն ձեռք բերած ձեռներեցների հետ, ովքեր կարողացել են հաջողության հասնել առանց հայրենիքի տնտեսական, քաղաքական կամ ցանցային համակարգերին մասնակցություն ունենալու: Օրինակ, Լոս Անջելեսում իրանական սփյուռքի լրատվա-

⁹² Shain Y., *Role of Diasporas in Conflict Perpetuation or Resolution*, *SAIS Review*, 22, 2, 2002, 115-144.

միջոցները վայելում են զգալի ինքնուրույնություն և ձգտում են հասնել Իրանի կառավարման համակարգի փոփոխությանը:⁹³

Միյուրոքը կարող է նաև մեծ ներգործություն ունենալ համակամարտությունների ընթացքի վրա, ընդ որում՝ սփյուռքի դերակատարումը կարող է կրել և՛ դրական, և՛ բացասական բնույթ⁹⁴: Կոինովան, դիտարկելով 1990-ականներին ալբանական, հայկական և չեչենական սփյուռքների ազդեցությունը համապատասխանաբար Կոսովոյում, Լեռնային Ղարաբաղում և Չեչնիայում տեղի ունեցած հակամարտությունների վրա, համարում է, որ հայրենիքում անկախության հռչակումից հետո նշված երեք սփյուռքները ցուցաբերել են մեծ համախմբվածություն և աջակցություն՝ ուղղված իրենց հայրենիքին⁹⁵: Այս համատեքստում Շայնը, դիտարկելով հայերի և հրեաների առանձին դեպքերը, համարում է, որ ընդունող երկրներում կայացած հայկական և հրեական սփյուռքների նախաձեռնությունները կարող են հայրենիքում հակամարտության կարգավորման հարցում ներգրավվածության օրինակելի տարբերակներ համարվել: Հեղինակը համարում է, որ հայկական և հրեական սփյուռքները բավական մեծ արդյունավետությամբ կարողացել են տարիներ շարունակ ընդունող երկրի արտաքին քաղաքականությունը տանել ցանկալի ուղղությամբ⁹⁶:

Որոշ պետություններ իրենց սփյուռքների հետ համագործակցության ընդլայնման և համակարգման նպատակով

⁹³ Koinova M., Autonomy and Positionality in Diaspora Politics. *International Political Sociology*, Vol. 6, No. 1, 2012, pp. 99-103.

⁹⁴ Roth A., The role of diasporas in conflict, *Journal of International Affairs*, Vol. 68, No. 2, 2015, pp. 289-301.

⁹⁵ Koinova M., Can Conflict-Generated Diasporas be Moderate Actors during Episodes of Contested Sovereignty? Lebanese and Albanian Diasporas Compared. *Review of International Studies*, Vol. 37 No. 1, 2011, pp. 437-462

⁹⁶ Shain Y., Role of Diasporas in Conflict Perpetuation or Resolution...

ստեղծել են հարաբերությունները կարգավորող քաղաքական կառույցներ՝ նախարարություններ, գերատեսչություններ և այլ: Այդ երկրներից է Հայաստանը, որտեղ 2008 թվականին ստեղծվեց սփյուռքի նախարարությունը: Նույն նպատակով 2008 թվականին Վրաստանում ևս ստեղծվել է սփյուռքի նախարարություն, իսկ Իսրայելի սփյուռքի նախարարությունը ստեղծվել է դեռևս 1990 թվականին՝ նպատակ ունենալով համակարգել սփյուռքի հետ փոխգործակցությունը, երկրի սահմաններից դուրս պաշտպանել հրեական համայնքի իրավունքները:

Սփյուռքի հետ հարաբերությունները կարևորող և նման կառույցներ ստեղծող երկրները հաշվի են առնում, որ այն կարող է ծառայել որպես՝

- եկամտի և զարգացման աղբյուր,
- արտասահմանում հայրենիքի շահերի առաջխաղացման քաղաքական լծակ,
- էթնոազգային ամբողջության մաս:

Այդ նկատառումներից ելնելով ՄԱԿ-ի անդամ երկրների կեսից ավելին ստեղծել են սփյուռքի հետ համագործակցության հատուկ կառույցներ⁹⁷:

Այսպիսով, հայրենիք-սփյուռք հարաբերությունների հնարավոր արդյունքների ու մարտահրավերների ուսումնասիրությունը վկայում է, որ թեև ինստիտուցիոնալ համատեքստում մոբիլիզացված սփյուռքը կարող է քաղաքական հզոր լծակ լինել հայրենիքի զարգացման և շահերի առաջխաղացման համար, սակայն դա հնարավոր է միայն արդյունավետ

⁹⁷ Gamlen A., Cummings M., Vaaler P.M., Rossouw L., Explaining the Rise of Diaspora Institutions, IMI Working Paper No. 78, University of Oxford. 2013. Zimmermann K.F., Constant A.F., Diaspora economics: New perspectives, Maastricht Economic and social Research institute on Innovation and Technology (UNU-MERIT), Working paper No. 042, 2016,

և լավ մշակված համագործակցության դեպքում: Ընդ որում, պարտադիր է նաև սփյուռք-ընդունող երկիր կառուցողական համագործակցությունը:

3.2 «Սփյուռք-ընդունող երկիր» հարաբերություններ. արդյունավետ ձևեր և մեխանիզմներ

«Սփյուռք-ընդունող երկիր» երկկողմ հարաբերություններն ունեն բազմամակարդակ բնույթ և ուղղակիորեն փոխկապակցված են ընդունող երկրում սփյուռքի ինտեգրման աստիճանի հետ: Հաշվի առնելով այդ ինտեգրման տևական ընթացքն ու իրագործման բարդությունները, այն կարելի է դիտարկել որպես փուլային գործընթաց, որի վերջնական ելքը պայմանավորված կլինի սփյուռքի ինքնության արդիականացմամբ, որդեգրած ինտեգրման մեխանիզմների բնույթով և ընդունող հասրակության մեջ ծավալած գործունեության կարևորությամբ: Այդ գործընթացը կարելի է բաժանել հետևյալ առաջալին շրջափուլերի.

1. ընդունող երկրում բնակության հաստատում,
2. ինքնության արդիականացում,
3. ինտեգրման փոխշահավետ մեխանիզմների մշակում և արդյունավետ կիրառում,
4. ընդունող երկրում սփյուռքի ինստիտուցիոնալ կոնսոլիդացիա:

Առաջին փուլը պայմանավորված է այլ երկրում բնակություն հաստատելու դրդապատճառներով, որոնք կարող են լինել պարտադրված և/կամ կամայական: Էթնիկ խումբը կարող է այս կամ այն պատճառով պարտադրված լքել հայրենիքը և բնակություն հաստատել այլ երկրում՝ փորձելով ապահովել բնականոն կյանքի համար անհրաժեշտ

պայմաններ: Մյուս կողմից, էթնիկ խմբերը կարող են կամավորության սկզբունքով բնակություն հաստատել այլ երկրներում՝ հաշվի առնելով այն տնտեսական շահավետ հնարավորությունները, որոնք կարող են հասանելի լինել ընդունող երկրում:

Ինքնության արդիականացման փուլը առանցքային նշանակություն ունի սփյուռքի հետագա գործունեության բնույթի և արդյունավետության տեսանկյունից, քանի որ ինքնության արդիականացումից է կախված ընդունող երկրում սփյուռքի համադրելիության և հակադրելիության մակարդակը, ինչն էլ մեծապես կպայմանավորի ընդունող հասարակության վերաբերմունքը սփյուռքի նկատմամբ: Ինքության արդիականացումը միանգամայն այլ քաղաքակրթական միջավայրում սփյուռքի առջև ծառայած թերևս ամենադժվարին մարտահրավերներից է, քանի որ սփյուռքն իր կայացման հետագա ընթացքը ապահովելու համար պետք է առանձնանա իր քաղաքակրթական յուրօրինակությամբ, միաժամանակ չհատելով թե՛ քաղաքակրթական ձուլման, և թե՛ միանշանակ հակադրելիության սահմանը:

Այդ համատեքստում կարելի է առանձնացնել «սփյուռք-ընդունող երկիր» հարաբերությունների երեք ընդհանրական տարբերակ՝ չեզոք, բացասական և դրական:

Ձուլման պարագայում սփյուռքի և ընդունող երկրի հարաբերությունները կունենան չեզոք բնույթ, այլև սփյուռքն աստիճանաբար կդադարի այդպիսին լինելուց և ի վերջո կդառնա տիտղոսակիր ժողովրդի մի հատվածը: Իհարկե, կարելի է ենթադրել, որ սփյուռքի մի հատվածն, այնուամենայնիվ, կփորձի խուսափել նման զարգացումներից: Այդ դեպքում տեղի կունենան տրանսֆորմացիոն գործընթացներ բոլոր երեք ուղղություններով: Հայրենիք-սփյուռք առաջնային

փոխգործակցությունը կկորցնի իր կարևորությունը՝ որպես սփյուռքի գործունեության բնորոշիչ տարր, իսկ սփյուռքը՝ որպես էթնիկ ամբողջության բաղկացուցիչ մաս չի ունենա որևէ ազդեցություն ինչպես հայրենիքում, այնպես էլ ընդունող երկրում: Սփյուռք կվերածվի էթնիկ փոքրամասնության, իսկ «սփյուռք-ընդունող երկիր» փոխհարաբերությունները կսահմանափակվեն ընդունող երկրի՝ էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող քաղաքականությամբ:

Մյուս կողմից, խիստ հակադրելիության պայմաններում «սփյուռք-ընդունող երկիր» կապը կունենա բացասական բնույթ, իսկ հետագա ընթացքը կարող է լինել խիստ արմատական և ուղեկցվել ընդվզումներով ու էթնիկ բախումներով՝ ուղղված էթնիկ խտրականության և հասարակական ու քաղաքական իրավունքների ոտնահարման դեմ: Այնուամենայնիվ, խնդրի լիարժեք ըմբռնման համար հարկ է նշել, որ նման իրավիճակը կարող է պայմանավորված լինել ոչ միայն սփյուռքի կողմից հավաքական ինքնության արմատական հակադրմամբ, այլ նաև ընդունող երկրում ժողովրդավարության ու հանդուրժողականության բացակայությամբ: Հարաբերությունների նման համատեքստում կարող են առաջանալ հետևյալ ելքերը.

- ընդունող երկրի և սփյուռքի հայրենիքի միջև գոյություն ունեցող միջպետական փոխհարաբերությունները կարող են դառնալ կոնֆլիկտային և փոխբացառող,
- միջազգային հանրությունը սփյուռքը կարող է դիտել որպես հակամարտության և առճակատման հրահրիչ ուժ,
- միջազգային փորձագիտական շրջանակներում կնվազեն ընդունող երկրում ժողովրդավարության ցուցանիշները:

Հաշվի առնելով ընդունող երկրում սփյուռքի ինտեգրման ընթացքի արդյունավետության աստիճանը՝ հարկ է առանձնացնել ընդունող երկրում սփյուռքի գործունեության

կոնվենցիոնալ և ոչ կոնվենցիոնալ ձևերը: Ընդունող երկրում ներգրավվածության կոնվենցիոնալ ձևեր կարող են համարվել մասնավորապես քվեարկություններին, ընտրություններին, հանրաքվեներին մասնակցությունը, անդամակցությունը խորհրդակցական խմբերին, կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և լոբբիստական գործունեությունը: Մասնակցության ոչ կոնվենցիոնալ ձևերը ենթադրում են ցույցեր, քաղաքական գործադուլներ, քաղաքացիական անհնազանդություններ և այլ⁹⁸:

«Սփյուռք-ընդունող երկիր» հարաբերությունները կարող են ունենալ դրական բնույթ, եթե սփյուռքի ինքնության արդիականացումը չունենա արմատական բնույթ կամ հանգեցնի ձուլման: Ընդունելի կլինի, եթե ինքնության վերաիմաստավորման գործընթացում սինթեզվեն նոր քաղաքակրթական միջավայրի տարրերը՝ միևնույն ժամանակ պահպանելով հիմնաքարային ազգային բնորոշիչները: Այս պարագայում սփյուռքը կարող է իր ուրույն տեղն ունենալ ընդունող հասարակության մեջ և ի գործու կլինի հստակորեն ձևակերպել և իրացնել համայնքային և ազգային շահերը:

Ինքնության արդիականացման դրական ելքով էլ պայմանավորված կլինի ընդունող երկրում սփյուռքի կողմից ինտեգրման փոխշահավետ մեխանիզմների մշակումը և արդյունավետ կիրառումը: Երկկողմ հարաբերությունների այս փուլը ենթադրում է, որ սփյուռքը պետք է հստակեցնի, թե ինչպիսի ոլորտներում կարելի է հասնել համաձայնության և

⁹⁸ Zapata-Barrero R., Gabrielli L., Sánchez-Montijano E., Jaulin Th., The political participation of immigrants in host countries: An interpretative framework from the perspective of origin countries and societies, INTERACT RR 2013/07, Robert Schuman Centre for Advanced Studies, San Domenico di Fiesole (FI): European University Institute, 2013.

փոխշահավետ համագործակցության: Որոշ ոլորտներում, ի վիճակի լինելով փորձի փոխանակում իրականացնել ընդունող երկրի հետ, սփյուռքը կարող է մեծացնել սեփական նշանակությունն ու ազդեցությունը: Սփյուռքի ներգրավվածությունը կարող է ենթադրել փորձի փոխանակում տուրիզմի, միգրացիոն քաղաքականության, աշխատաշուկայի, առևտրի, ձեռնարկատիրության, մշակութային, գիտակրթական և հասարակական գործունեության մի շարք այլ ոլորտներում:

Վերոնշյալ ոլորտային համագործակցության արդյունքում կընդլայնվեն սփյուռքի ներգրավվածության ոլորտները՝ հետևաբար կընդլայնվեն նաև վեջինիս իրավունքները, ինչն ինքնաբերաբար կհանգեցնի սփյուռքի ինստիտուցիոնալ կոնսուլիդացիային: Ինստիտուցիոնալ կոնսուլիդացիան ենթադրում է «սփյուռք-ընդունող երկիր» փոխհարաբերությունների բարձր մակարդակ, որը բնորոշվում է սփյուռքի կողմից ստեղծված որոշակի կառույցների առկայությամբ, որոնք ոչ միայն համակարգող դեր ունեն հասարակական և տնտեսական գործունեության ոլորտներում, այլ նաև առանձնանում են իրենց քաղաքական ներգրավվածությամբ: Այդ պարագայում սփյուռքն իր մասնակցությունն է ունենում ընդունող երկրի քաղաքական օրակարգում՝ վեր հանելով հայրենիքի համար առանցքային խնդիրները: Ընդ որում, ինստիտուցիոնալ կոնսուլիդացիան ենթադրում է ազդեցիկ լոբբի, ներգրավվածություն հասարակական և քաղաքական կազմակերպություններում, անկախ կազմակերպությունների առկայություն, սփյուռքի համայնքային զարգացումն ու հայրենանվեր գործունեությունն ապահովող համալիր ծրագրերի և ինստիտուտների առկայություն:

Այնուամենայնիվ, ընդունող երկրում սեփական բարեկեցությանն ու հայրենանպաստ նախաձեռնություններին ուղղված սփյուռքի գործունեության երկու ուղղություններից

զատ այն կարող է նաև որոշակի քաղաքական լծակ ծառայել ընդունող երկրի համար: Նման պարագայում սփյուռքը հանդես է գալիս որպես քաղաքական հանգույց ընդունող երկրի ու հայրենիքի միջև: Ելնելով իրենց շահերից, ընդունող երկրները կարող են օգտագործել սփյուռքի գործոնը քաղաքական ցանկալի արդյունքի հասնելու համար: Որպես նման օրինակ կարող է դիտարկվել 1960-ական թվականներին ԱՄՆ-ի կողմից Կուբայի սփյուռքի շահերի բարձրաձայնումը, ինչն ուղղակի նպատակ էր հետապնդում համախմբելու ԱՄՆ-ում ապրող կուբացիներին՝ Կաստրոյի վարչա-կազմի դեմ պայքարում: ԱՄՆ-ը նույնպիսի քաղաքականություն կիրառեց նաև 1950-ականներին Բալթյան երկրներից ժամանած ներգաղթյալների հետ, ինչի արդյունքում կարողացավ նվազագույնի հասցնել վերջիններիս հետպատերազմյան համագործակցությունը Խորհրդային Միության հետ: Մեկ այլ օրինակ է 1960-ականներից սկսած արաբական կառավարությունների վարած քաղաքականությունը պաղեստինցիների նկատմամբ: Օժանդակելով պաղեստինական սփյուռքի ինքնազիտակցության զարգացմանը՝ արաբական իշխանությունները նպատակ ունեին համախմբելու պաղեստինցիներին Իսրայելի դեմ⁹⁹:

⁹⁹ Safran W., *Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return*, *Diaspora*, 1, 1991, 84–99.

3.3. «Հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» ինստիտուցիոնալ հարաբերությունները՝ հրեական, իռլանդական, չինական սփյուռքների օրինակով

Սփյուռքի տեսական քննարկումները հաջող գործունեությունն ապահովող որևէ համակիրատելի մոդելի չեն հանգեցրել, ինչը միանգամայն ենթադրելի է, քանի որ սփյուռքի յուրաքանչյուր դեպք եզակի է իր ձևավորման նախապայմաններով և զարգացման հետագա ընթացքով: Կան որոշակի մեխանիզմներ, որոնց կիրառելիությունը հանգեցնում է սփյուռքի ինստիտուցիոնալ ներուժի մեծացմանն ու կայացմանը և արդյունավետ փոխգործակցության՝ ընդունող երկրի և հայրենիքի հետ: Դիտարկելով խոշորագույն սփյուռքների օրինակները, ձևավորման նախապայմանների, ինտեգրման, ինքնության պահպանման և համագործակցային մեխանիզմների համատեքստում՝ այս բաժնում փորձ է արվել վեր հանել այն ընդհանրությունները, որոնց հիման վրա կարելի է ամբողջացնել սփյուռքի հաջող գործունեության հարացույցը:

Հրեական, իռլանդական և չինական սփյուռքները «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» հարաբերությունների ձևավորման և զարգացման համատեքստում յուրօրինակ դեպքեր են: Մասնավորապես, հրեական սփյուռքը առանձնանում է պետականության բացակայության պայմաններում գաղափարա-կան միավորման և պետության ստեղծման ուրույն փորձով: Իռլանդական սփյուռքի դեպքում հատկանշական է սփյուռքի հետ փոխհարաբերությունների ինստիտուցիոնալացման պետական քաղաքականությունը և սփյուռքի մոբիլիզացման իրավական հիմքերի առկայությունը: Ինչ վերաբերում է չինական սփյուռքին, ապա, վերջինս առանձնանում է սփյուռքի մարդկային և ֆինանսական ներուժի

նպատակային իրացմամբ, ինչն ուղղակիորեն հանգեցրեց Չինաստանի տնտեսական վերելքին:

3.3.1 Հրեական սփյուռք

Հրեական սփյուռքը խոշորագուն և կայացած սփյուռքի օրինակ է, այն անցել է բազմադարյա պատմական ուղի և կայացման յուրօրինակ պատմություն: Հրեական սփյուռքի պատմության արմատները ձգվում են մինչև հնագույն ժամանակները, երբ մ. թ. ա. 586 թվականին կործանվեց Երուսաղեմը և հիմնովին քանդվեց նաև Երուսաղեմի տաճարը: Այդ իրողությունը հրեաների հավաքական հիշողության մեջ արմատավորել է զոհի կարգավիճակ ունեցող սփյուռքի գաղափարը, որը կապվում էր ստրկության, վտարումների և տեղահանումների փորձի հետ: Հետագայում հրեաներին սկսեցին պահել գերության մեջ Բաբելոնում, ինչի արդյունքում «Բաբելոնը» հրեաների շրջանում դարձավ բանալի բառ, որը բնորոշում էր օտարության մեջ ապրելու անապահովությունը: Մոտ կես դար անց, երբ հրեաներին թույլ տրվեց վերադառնալ Պաղեստին, հրեաների որոշ խմբեր, շարունակելով բնակվել Բաբելոնում, ձևավորեցին հրեական սփյուռքի առաջին դրսևորումները¹⁰⁰:

Տեղահանումներից հետո հրեաների ինտեգրումը հարուստ և միանգամայն տարբեր մշակութային համատեքստում հանգեցրեց դրական արդյունքի: Հրեական համայնքները Ալեքսանդրիայում, Անտիոքում, Դամասկոսում, Փոքր Ասիայում և Բաբելոնում դարձան քաղաքակրթական, մշակութային և կրթական կենտրոններ: Թեև «Բաբելոն» բառը հրեաների համար խորհրդանշում էր գերությունն ու ճնշումներ, այնուամենայնիվ ժամանակահատվածի հետ կապված պատմական իրողությունները խթանեցին հրեաների

¹⁰⁰ Cohen R., *Diasporas and The State: From Victims to Challengers, International Affairs*, 72, 3, 1996, 507–520.

ստեղծարար գործունեությունը և զարգացումը հայրենիքից դուրս: Հետագայում, երբ 70 թվականին հռոմեացիները ոչնչացրին երկրորդ տաճարը, Բաբելոնը դարձավ հրեական կարևորագույն կենտրոններից¹⁰¹: Կարելի է ենթադրել, որ գերության և ստրկության նախապատմությունը ամենևին խոչընդոտ չդարձավ հրեաների դերակատարության մեծացմանը նոր օտար հասարակություններում, ինչի արդյունքում հրեաները կարողացան մեծ ներդրում ունենալ քաղաքակրթական նոր միջավայրում:

Դիտարկելով հրեական սփյուռքի հնագույն պատմությունը, կարելի է զուգահեռներ անցկացնել հրեական սփյուռքի պատմության ժամանակակից շրջանի հետ: Կոհենը, որպես օրինակ, քննարկել է հրեաների գործունեությունը Եվրոպայում՝ լուսավորության տարիներին: Ֆրանսիայում, Գերմանիայում, Հունգարիայում, Ավստրիայում ապրող հրեաները զարգացած էին և ունեին լիբերալ մտածելակերպ, միաժամանակ, նրանք ընդունող երկրում նշանակալի ներդրում են ունեցել գիտության, գրականության և արվեստի մեջ, ինչպես նաև մի շարք ոլորտներում եղել են լավ մասնագետներ: Ըստ Կոհենի, հրեաներն առավել նվիրվածություն էին ցուցաբերում իրենց բնակության երկրի նկատմամբ, քան իրենց կրոնի և էթնիկ պատկանելության, այդ իսկ պատճառով ձևավորվում էր այն համոզմունքը, որ հրեաների կողմից իրենց կրոնի դավանումը չի կարող պատնեշ հանդիսանալ լիարժեք քաղաքացիության և ինտեգրման համար: Նա պնդում է, որ նման համոզմունքը հատկապես ցայտուն էր Ֆրանսիայում: Այնուամենայնիվ, հրեաների մոբիլիզացիան և ընդունող երկրում բազմամակարդակ

¹⁰¹ Նույն տեղում:

գործունեությունը ամենատարբեր ոլորտներում 1800-ականների կեսերից հանգեցրեց որոշակի դիվեմայի՝ կապված հրեաների դերակատարության ընկալման հետ: Մասնավորապես, երիտասարդ ֆրանսիացի հայրենասերների շրջանում տարածում գտավ այն կարծիքը, որ հրեաները նվիրված են իրենց ազգակիցներին, իսկ նրանց օրեցօր մեծացող գերակայումը առևտրի և բանկային ոլորտներում, կհզորացնի իրենց, ինչը կնշանակի, որ հրեաները ի գործու կլինեն գործել ընդունող երկրի ազգային շահերին հակառակ¹⁰²:

19-րդ դարի երկրորդ կեսից ի վեր նույնիսկ ազատականություն և հավասարություն քարոզող եվրոպական երկրներում սկսեց էապես ընդգծվել հակահրեական տրամադրությունը: Սակայն հրեական սփյուռքի առավելությունը պետականակերտման ու միասնությանն ուղղված հստակ գաղափարախոսության՝ սիոնիզմի առկայությունն էր: Հրեական սփյուռքի՝ որպես մեկ ամբողջության, գործունեության հիմքում ընկած էր գաղափար, որը շարժիչ ուժ էր հրեական սփյուռքի կայացման համար:

Սիոնիզմի գաղափարախոսության զարգացումը կարելի է բաժանել երկու փուլի՝ մինչև Հոլոքոստ և դրան հաջորդած ժամանակաշրջանը: Մինչև Հոլոքոստը սիոնիզմի գերնպատակը Պաղեստինում Հրեական ազգային տան և մշակութային կենտրոնի ստեղծումն էր: Սակայն, արդեն Հոլոքոստից հետո, սիոնիզմի գաղափարական կենտրոնացումը պետականակերտումն էր՝ հրեական պետության ստեղծումը, որը հաճախ ներկայացվում էր որպես պետություն՝ հրեական մեծամասնությամբ: Իսրայելի ստեղծումից հետո սիոնիզմը՝ որպես կառույց, դադարեց գոյություն ունենալուց, սակայն սիոնիս-

¹⁰² Նույն տեղում:

տական շարժումը՝ որպես գաղափարախոսություն, շարունակեց իր գոյությունը՝ նպատակ ունենալով աջակցել քաղաքական հետապնդման մեջ գտնվող հրեաներին և մեծացնել հրեաների հոսքը դեպի Իսրայել: Միոնիզմի գաղափարական հաղթանակի արդյունքում Իսրայելում ապրող հրեաներ թիվը կտրուկ և կանոնավոր աճ գրանցեց¹⁰³: Հարկ է նշել, որ պետության ստեղծման և համախմբման փորձը սփյուռքի հաջող գործունեության և կայացածության ամենաակնառու օրինակն է:

Ինքնության պահպանումը առանցքային նշանակություն է ունեցել հրեաների ինքնապահպանման և ինքնակազմակերպման համար: Հրեաների կրոնական և մշակութային առանձնահատկությունը և բացառապես ներգեղային ամուսնությունները հանգեցրել են հավաքական ինքնության շուրջ էթնիկ համախմբման, ինչը հնարավորություն է տվել ստեղծելու հրեական ուրույն կենսակերպ, որը գատում էր հրեաներին իրենց հարևաններից: Այդպես հրեաները՝ որպես էթնիկ և կրոնական փոքրամասնություն, կարողացան ներգրավվածություն ունենալ ընդունող երկրների հասարակական կյանքի կարևորագույն ոլորտներում:

Ինքնության պահպանումից գատ հրեական սփյուռքի ցանցային համագործակցությանը նպաստեց հրեաների ընդհանուր շահին ծառայող գաղափարի առկայությունը, որը խարսխվում էր պետականակերտման վերջնական նպատակակետի վրա: Հրեաների համար Իսրայելի ստեղծումը ուներ կենսական նշանակություն, քանի որ Իսրայելը պետք է լիներ բոլոր ժամանակների հրեական կյանքի կազմակերպման գլխավոր կենտրոնը, որի ոչ միայն ստեղծման, այլ նաև հետագա

¹⁰³ Rabbi Ed Snitkoff, *Secular Zionism*,

(http://www.myjewishlearning.com/israel/Jewish_Thought/Modern/Secular_Zionism.shtml), 20.12.17.

կայացման մեջ մեծ ներգրավվածություն պետք է ունենար հրեական սփյուռքը: Հարկ է նշել, որ համախմբվածության բնույթը հրեաների պարագայում ուներ բացառապես գաղափարական հիմք, քանի որ հենց սիոնիզմի արդյունքում վերստեղծվեց առաջին ինքնավար հրեական համայնքը, ապա՝ հրեական պետությունը, որը մեծացրեց հրեաների քաղաքական ներգրավվածությունը ընդունող երկրներում: Այս ամենի արդյունքում աղյուսակում էլ ձևավորվեց այն ինստիտուցիոնալ շրջանակը, որը ձևակերպում էր հրեաների գործունեությունը¹⁰⁴:

Անդրադառնալով հրեական սփյուռքի ինստիտուցիոնալ կայացածությանը, հարկ է նշել, որ 1800-ականներից ի վեր սփյուռքի նախաձեռնությամբ ստեղծվել են մի շարք քաղաքական, կրոնական, հասարակական կազմակերպություններ, որոնք ի սկզբանե ուղղված են եղել Իսրայելի ստեղծմանը, իսկ պետության վերստեղծումից հետո կազմակերպությունների բազմամակարդակ գործունեությունն ուղղված է եղել սփյուռքի և հայրենիքի միջև ցանցային համագործակցության զարգացմանը: Այդ համակարգի կենսունակության մասին է վկայում այն հանգամանքը, որ դեռևս 19-րդ և 20-րդ դարերում ստեղծված կառույցներն իրենց ակտիվ գործունեությունը պահպանում են մինչ օրս:

Ստորև ներկայացված են հրեական կառույցների որոշ օրինակներ, որոնք, ստեղծված լինելով որևէ կոնկրետ երկրի հրեական համայնքի կողմից, նպատակ են ունեցել ոչ միայն բարելավելու այդ համայնքի կենսագործունեությունն, այլ նաև

¹⁰⁴ Elazar D. J., *The Jewish people as the Classic Diaspora: A Political Analysis*, Jerusalem Center for Public Affairs, <http://www.jcpa.org/dje/articles2/classicdias.htm>, 20.12.17

համաշխարհային մակարդակում ցանցային համագործակցության միջոցով կոնկրետ սահմանված գաղափարի և նպատակի շուրջ համախմբելու ողջ հրեական համայնքը:

Հրեական կազմակերպություն: Ստեղծվել է 1929 թվականին Միացյալ Նահանգներում և մեծ ներդրում է ունեցել Իսրայելի ստեղծման գործում: Հետագայում կապող օղակ է հանդիսացել Հրեական պետության և ամբողջ աշխարհում սփռված հրեական համայնքների միջև: Կազմակերպության շնորհիվ հրեական համայնքների միջև ստեղծվել է համաշխարհային համագործակցության ձև՝ համաշխարհային հրեական ընտանիք, ինչը թույլ է տալիս հաղթահարել հրեական տարբեր համայնքներում ծառայած լուրջ մարտահրավերները: Կազմակերպության գործունեությունը հիմնականում ուղղված է ամբողջ աշխարհում երիտասարդ հրեաների շրջանում ընդհանուր հրեական նպատակի հավաքական գիտակցության ձևավորմանը¹⁰⁵:

Համաշխարհային Սիոնիստական Կազմակերպություն: Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունը ստեղծվել է դեռևս 1897 թվականին Շվեյցարիայում՝ սիոնիզմի հիմնադիր Թեոդոր Հերցլի նախաձեռնությամբ: Սկզբում կազմակերպության նպատակն էր Պաղեստինում վերաբնակեցնել հրեա արհեստավորների, վաճառականների և այլ մասնագետների: Միաժամանակ կազմակերպությունը, հաշվի առնելով յուրաքանչյուր ընդունող երկրի օրենքները, տեղի և միջազգային մակարդակում միջոցներ էր ձեռնարկում

¹⁰⁵ The Jewish Agency. <http://www.jewishagency.org/inside-jewish-agency/content/4916>. 15. 12. 17

միավորելու և կազմակերպելու բոլոր հրեաներին: Կազմակերպությունն իր նպատակներն իրագործում էր նախապես հանգամանակից մշակված լոբբինգի միջոցով, ինչի արդյունում կարողանում էր ընդունող երկրի կառավարությունից ձեռք բերել սիոնիզմի նպատակներին ծառայող նախընտրելի լուծումներ: Ներկայումս կազմակերպության գերնպատակը կրթության միջոցով Իսրայելի և Երուսաղեմի կարևորության սերմանումն է հրեաների գիտակցության մեջ, որը կխթանի հերաների վերադարձը Իսրայել և կօգնի պայքարել հակահրեականության դեմ¹⁰⁶:

Իսրայելի Ազգային Հիմնադրամ: Հիմնադրվել է 1901 թվականին՝ Շվեյցարիայում, և ուղղված է եղել հրեական պետության ստեղծմանը: Կազմակերպությունը նպատակ է ունեցել ստեղծել կայուն զարգացող և բարեկեցիկ Իսրայել, որը ապահով և անվտանգ վայր կլինի աշխարհում ապրող բոլոր հրեաների համար: Նոր ժամանակներում Միացյալ Նահանգների հրեական համայնքը և Իսրայելը այս կազմակերպության շրջանակներում մշակել են մեկ միլիարդ դոլար արժողությամբ ռազամավարական ճանապարհա-յին քարտեզ, որը նպատակ ունի հաղթահարելու գալիք տասնամյակի մարտահրավերները ենթակառուցվածքների զարգացման, հրեական ժառանգության պահպանման և համայնքա-յին զարգացման համատեքստում¹⁰⁷:

Արհեստագործական համայնք (ORT): Ստեղծվել է դեռևս 1880 թվականին՝ Ռուսաստանում, և նպատակ է ունեցել

¹⁰⁶ The World Zionist Organization, <http://www.wzo.org.il/Mission-Statement>, 23.12.17

¹⁰⁷ Jewish National Fund, <https://www.jnf.org/menu-2/our-vision>, 13.12.17

կրթության միջոցով բարելավվելու ամբողջ աշխարհում բնակվող հրեաների կենսակերպը: Հիմնականում գործունեությունն ուղղված էր աղքատ հրեաներին աջակցությանը, որոնց սովորեցնում էին որոշակի արհեստների տիրապետել, ինչը կօգներ նրանց վարել ինքնաբավ կենսակերպ: Ներկայումս կազմակերպության բնույթը էապես չի փոխվել. արհեստների և հմտությունների ուսուցման միջոցով կազմակերպությունը նպատակ ունի ամբողջ աշխարհում ապահովել հրեաների ֆինանսական անկախությունը¹⁰⁸:

Համաշխարհային Հրեական Կոնգրես: Համաշխարհային Հրեական Կոնգրեսը միջազգային խոշոր կազմակերպություն է, որը ավելի քան 100 երկրներում ներակայացնում է հրեական համայնքները և կազմակերպությունները: Ստեղծվել է 1936 թվականին Շվեյցարիայում: Կոնգրեսը պաշտպանում է ողջ հրեա-կան ժողովրդի շահերը ընդունող երկրների կառավարություններում, խորհրդարաններում և միջազգային կառույցներում: 1936 թվականից ի վեր կառույցը եղել է համաշխարհային մակարդակով բոլոր հրեական համայնքների իրավունքների ընդլայնման և առաջխաղացման կարևորագույն կառույց: Ցանցային համագործակցության բնույթն արտահայտված է կառույցի կարգախոսում. «բոլոր հրեաները պատասխանատու են մեկը մյուսի համար»: Կոնգրեսը հրեական խոշորագույն լոբբիստական կառույցն է, որի գործունեությունը ռազմավարական մեծ նշանակություն ունի հրեաների հավաքական շահերի պաշտպանության տեսակետից:

Կառույցի գործունեության պատմությունը առանձնաձևում է բազմաթիվ նախաձեռնություններով և միջոցա-

¹⁰⁸ ORT, <https://www.ort.org/about-us/history/>, 14.12.17

ռումներով, որոնք նպատակ ունենին արդարություն հաստատել Հոլոքոստի զոհերի նկատմամբ՝ ներառյալ համարժեք փոխհատուցման վճարումը, պայքարը հակահրեական տրամադրությունների դեմ, պաշտպանել հրեաների կրոնական ազատությունը և այլն: Կառույցը գործունեություն է ծավալել նաև կրոնական հարթությունում՝ ձգտելով հարթել հնարավոր կրոնական անհաշտությունները: Այդ նպատակով տասնամյակներ շարունակ երկխոսություն է հաստատել Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու և այլ քրիստոնեկան եկեղեցիների հետ, ինչպես նաև ներկայացուցիչներ է ուղարկել իսլամական և այլ կրոնական համայնքներ¹⁰⁹:

Ընդհանուր առմամբ, «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» փոխհարաբերություններում (հրեական սփյուռքի պարագայում) բոլոր երեք կողմերից ներգրավված են թե՛ կառավարական, թե՛ ոչ կառավարական կազմակերպություններ:

Ըստ Ռ. Շվարց, «հայրենիք-սփյուռք» փոխգործակցությունը հրեաների պարագայում տեղի է ունենում գործունեության հետևյալ ուղղություններով.

- Կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների համատեղ և համագործակցային կառավարմամբ,
- կազմակերպված փոխադարձ այցերի իրականացում անհատների և խմբերի մակարդակով, որոնք ունեն հատուկ առաքելություն՝ ինքնության պահպանում, մարդասիրական գործունեություն և այլն¹¹⁰:

¹⁰⁹ World Jewish Congress, <http://www.worldjewishcongress.org/en/about>. 14.12.17

¹¹⁰ Schwartz R., Israel and its Diaspora: A Case-Study. Prepared for GFMD ROUNDTABLE 3.2, Policy and Institutional Coherence on Migration and Development within Government. Center for International Migration and Integration, Jerusalem October, 2008, pp 1-13.

Հրեաների դեպքում սփյուռքի գործունեությունը մեծապես տարածված է հանրային, հասարակական ոլորտում: Ստեղծվում են կազմակերպություններ, որոնց գործունեությունն ուղղված է հիմնականում հանրային կառավարման, հասարակական կյանքի բարելավմանը, ներքին և արտաքին քաղաքական խնդիրների լուծմանը: Սփյուռքի գործունեությունը ծառայում է ընդհանուր շահին, ինչի արդյուքում մասնավոր անհատական հատկացումները բիզնես ոլորտին զգալիորեն զիջում են հանրային ոլորտում սփյուռքի գործունեության ներգրավվածությանը: Կազմակերպություններն անուղղակիորեն են աջակցում առևտրի և բիզնես ոլորտներին: Փորձի փոխանակման և կրթության միջոցով անհատները ձեռք են բերում անհրաժեշտ գիտելիքներ նշված ոլորտների զարգացման համար: Սյնուամենայնիվ, բիզնես զարգացման համար հրեական սփյուռքն ընդունող երկրներում ստեղծել է առևտրային պալատներ (Chambers of Commerce)¹¹¹, որոնք համագործակցային հարթակ են տնտեսական հարաբերությունների հաստատման և զարգացման համար:

2016 թվականի տվյալներով Իսրայելում ապրում էր ամբողջ աշխարհում սփռված հրեաների 44%-ը: Խոշորագույն համայնքները ներկայացված են ստորև բերված աղյուսակ 1-ում¹¹²:

Հատկանշական է , որ հրեական խոշորագուն համայնքը գտնվում է ԱՄՆ-ում, և կարելի է ասել, որ ԱՄՆ-ի հրեական համայնքը և հրեական լոբբինգը հիմնաքարային կարևորություն ունեն Իսրայելի քաղաքական խնդիրների լուծումը ցանկալի

¹¹¹ Նույն տեղում:

¹¹² Vital Statistics: Jewish Population of the World, <http://www.jewishvirtuallibrary.org/jewish-population-of-the-world#europe>, 15.12.17

ուղղությամբ տանելու հարցում: Ինչպես նշում է Ֆլեշերը, ԱՄՆ-ում իսրայելամետ համայնքը համարվում է կոնվենցիոնալ իսրայելական լոբբի, քանի որ այն բաղկացած է անհատներից և խմբերից, որոնք նույն դիրքորոշումն ունեն Իսրայելին և հրեաներին վերաբերող ցանկացած հարցում:

Աղյուսակ 1

Երկիր	Հրեական բնակչութ.
Իսրայել	6,336,400
ԱՄՆ	5,700,000
Ֆրանսիա	460,000
Կանադա	388,000
Մեծ Բրիտանիա	290,000
Արգենտինա	180,700
Ռուսաստան	179,500
Գերմանիա	117,000
Ավստրալիա	113,000
Բրազիլիա	94,200
Հարավաֆրիկյան հանրապետություն	69,500

Ամերիկյան հրեաներ՝ որպես կոնվենցիոնալ լոբբի, քաղաքականությունը հետևյալ երեք հիմնական ուղղություններն ունի.

1. Ընդդիմանում են, երբ նախագահը փորձում է ճնշում գործադրել Իսրայելի վրա կամ հրապարակայնորեն անհամաձայնություն է արտահայտում Իրայելի քաղաքական որոշումների նկատմամբ:

2. Աջակցում են հրեաների բնակեցմանը պաղեստինական տարածքներում կամ ստատուս քվոյի պահպանմանը:

3. Ակտիվորեն միջոցառումներ են ձեռնարկում՝ հակազդելու Իսրայելի հակառակորդ երկրների և ԱՄՆ-ի միջև բանակցություններին, որոնք կարող են խոչընդոտել Իսրայելի քաղաքական խնդիրների ցանկալի լուծմանը¹¹³:

ԱՄՆ-ում խոշորագույն լոբբիստական կառույցը Իսրայելի հանրային հարցերի հանձնաժողովն է (AIPAC), որը սկզբում կոչվել է հանրային հարցերով Ամերիկայի սիոնիստական հանձնաժողով: Այս կառույցը ԱՄՆ-ում իսրայելական կոնվենցիոնալ լոբբինգի շարժիչ ուժն է, քանի որ այն միակ լիազորված լոբբիստական կառույցն է ԱՄՆ-ում, որը հանդես է գալիս ի օգուտ Իսրայելի: Կապիտոլիումն այն վայրն է, որտեղ կառույցը ծավալում է իր գործունեությունը, ինչի արդյունքում Կոնգրեսը և ներկայացուցիչ-ների պալատը նախընտրում են արմատապես չընդդիմանալ իսրայելական լոբբինգին¹¹⁴:

3.3.2 Իռլանդական սփյուռք

Իռլանդական սփյուռքի պատմությունը սկիզբ է առել 17-րդ դարում, երբ Իռլանդիայում հաստատվեց Անգլիայի գերիշխանությունը՝ բողոքականների մեծամասնությամբ: Դրա արդյունքում մեծամասնություն կազմող բնիկ իռլանդացի կաթոլիկներն անցան բողոքական փոքրամասնության ենթակայության տակ: Պատմական այս իրողությունով մեկնարկեց իռլանդական սփյուռքի ձևավորման առաջին փուլը, երբ

¹¹³ Fleshler D., Transforming America's Israel Lobby: The limits of its Power and the Potential for Change. Washington: Potomac Books. 2009. pp 9-10.

¹¹⁴ Նույն տեղում, pp 84-85:

իռլանդացի կաթոլիկները բռնությամբ վերաբնակեցվեցին Շենոն գետի արևմուտքում գտնվող ամայի հողերում¹¹⁵:

Իռլանդացիների սփռման հարցում նշանակալի էր հատկապես Մեծ սովի ազդեցությունը (1845-1852 թթ.): Այդ ժամանակա-շրջանում գյուղական հողերը փոքրամասնության տնօրինության ներքո էին: Միաժամանակ, բնակչության բացարձակ մեծամասնությունն էին կազմում գյուղաբնակ աղքատ իռլանդացիները, որոնց պատկանում էին շատ փոքր մասը, ինչի հետևանքով իռլանդացիների բացարձակ մեծամասնությունը հայտնվեց ծանր վիճակում, քանի որ ի վիճակի չէր վճարել հողերի հարկերը դրանց տերերին: Այդ շրջանում ծայրահեղ սովը, հիվանդությունները և հարկեր չվճարելու հետևանքով իրականացվող վտարումները զանգվածային բնույթ ունեին, ինչը հանգեցրեց Իռլանդիայում ժողովրդագրական պատկերի կտրուկ փոփոխությունների: Մոտ մեկ միլիոն իռլանդացի մահացավ սովից ու հիվանդություններից, իսկ երկու միլիոն բնակչություն հեռացավ Միացյալ Նահանգներ ու Կանադա՝ բնակություն հաստատելու նպատակով: 1800-ականների կեսերից ամեն տարի մեծ թվով իռլանդացիներ մեկնում էին ԱՄՆ, Կանադա, Գերմանիա, Ճապոնիա, Ավստրալիա՝ բարենպաստ կենսապայմաններ գտնելու համար¹¹⁶

1700-ականներից ի վեր 9-10 միլիոն իռլանդաբնակ լքել է հայրենիքը: Իռլանդացիների արտագաղթը իր գագաթնակետին հասավ 1840-ականներին՝ հասնելով 8.5 միլիոնի, որից 5 միլիոն իռլանդացի արտագաղթեց ԱՄՆ¹¹⁷: 1890 թվականին

¹¹⁵ Stephen A. B., *The Irish Diaspora and the Creation of an Irish-American Heritage*. <http://www.heritage.umd.edu/chrsweb/Ireland/ireland.htm>, 17.12.17

¹¹⁶ *History of Irish Diaspora*. <https://www.yourirish.com/history/19th-century/irish-diaspora>, 16.12.17

¹¹⁷ Fitzpatrick D., *Emigration, 1871–1921, A New History of Ireland, vol. VI: Ireland under the Union, II, 1870–1921*, ed. W. E. Vaughan. Oxford, 1996, p.607.

իռլանդական ծագում ունեցող բնակչության 40% -ը բնակություն էր հաստատել հայրենիքի սահմաններից դուրս: Ներկայումս իռլանդական սփյուռքը գնահատվում է մոտ 80 միլիոն՝ ներառյալ 36 միլիոն ամերիկացիներ, ովքեր իրենց էթնիկ իռլանդացի են համարում¹¹⁸:

Ընդհանուր բնորոշմամբ՝ իռլանդական սփյուռքը ներառում է այն բոլոր մարդկանց, ում նախնիները եղել են բնիկ իռլանդացի, կամ ովքեր ունեն իռլանդական արմատներ: Ինքնության տեսանկյունից իռլանդականությունը բնորոշվում է ոչ միայն Իռլանդիայի հետ ինքնանույնացմամբ, այլ նաև ինքնանույնացմամբ իռլանդական ողջ սփյուռքի հետ¹¹⁹: Իռլանդական սփյուռքի նման բնորոշումն ունի ինստիտուցիոնալ հիմք: Իռլանդիայի կառավարության որոշման համաձայն իռլանդական սփյուռքը ներառում է արտերկրում ապրող ազգությամբ իռլանդացիներին, Իռլանդիայի քաղաքացիներին, որոնք արտագաղթել են այլ երկիր, նրանց երեխաներին, ովքեր, իռլանդական օրենսդրության համաձայն, ծագումով համարվում են Իռլանդիայի քաղաքացի: Օրենսդրության համաձայն արտերկրում ապրող երրորդ սերնդի ներկայացուցիչները և նրանց հետևորդները նույնպես ներառվում են իռլանդական սփյուռքի մեջ՝ համարվելով Իռլանդիայի քաղաքացի, եթե գրանցվում են Իռլանդիայի արտաքին գործերի և առևտրի վարչության Օտարերկրյա ծնունդների գրանցամատյանում (Foreign Births Register)¹²⁰: Այդ մոտեցումը ողջ իռլանդական

¹¹⁸ The Irish Diaspora. <https://www.americanhistoryusa.com/topic/irish-diaspora/>. 18.12.17

¹¹⁹ Nash C., *Of Irish Descent: Origin Stories, Genealogy, and the Politics of Belonging*, Syracuse University Press, 2008, pp. 33-50.

¹²⁰ Irish citizenship through birth or descent.

http://www.citizensinformation.ie/en/moving_country/irish_citizenship/irish_citizenship_through_birth_or_descent.html. 17.12.17

սփյուռքը համախմբելու և իռլանդական ժառանգությունը գալիք սերունդներին փոխանցելու ինստիտուցիոնալացված ձև է, որն արդյունավետորեն լուծում է ինքնության իռլանդական չափման պահպանման և ժառանգության փոխանցման հիմնախնդիրը սփյուռքի հաջորդ սերունդների շրջանում:

Մփյուռք-հայրենիք փոխհարաբերությունների զարգացման ու բարձր արդյունավետության ապահովման նպատակով 2015 թվականին մեկնարկեց Իռլանդիայի կառավարության համապարփակ մի ծրագիր, որն ուղղված էր ամբողջ աշխարհում սփռված իռլանդական սփյուռքի զարգացմանը և հայրենիք-սփյուռք կապերի ինստիտուցիոնալացմանը:

Ծրագիրը երկարաժամկետ է և նպատակ ունի՝

1. Տրամադրել տարեկան դրամաշնորհներ սփյուռքաբնակների աջակցման ծրագրի շրջանակներում,
2. Բարեկեցության ապահովումը համարել գործունեության կենտրոնական ուղղությունը,
3. Դրամաշնորհների 1%-ը տրամադրել որակի հսկողությանը,
4. Երկարաժամկետ և կարճաժամկետ հեռանկարում ապահովել երկրից հեռացողների հարմարավետությունն և բնութագրող երկրներում:¹²¹

Հարկ է նշել, որ այս ծրագրի շրջանակներում մեծապես կարևորվում է դրամաշնորհների նպատակային օգտագործումն ու գործունեության արդյունավետության ապահովումը: Այդ նպատակով յուրաքանչյուր երկրորդ տարում պետք է իրականացվի որակի և արդյունավետության վերահսկում¹²²:

¹²¹ Global Irish. Ireland's Diaspora Policy. Department of Foreign Affairs and Trade. March 2015, p. 5.

¹²² Նույն տեղում:

Ինչպես հրեական, այնպես էլ իռլանդական սփյուռքի պարագայում շեշտը դրված է հատկապես ցանցային համագործակցության և համաշխարհային մակարդակով իռլանդական միասնական համայնք ստեղծելու վրա: Դրա մասին են վկայում մի շարք կազմակերպություններ, որոնք նպատակ ունեն համախմբելու բոլոր իռլանդական համայնքները:

Արտաքին գործերի և առևտրի վարչություն: Կառույցը նպատակ ունի պաշտպանելու իռլանդացիների շահերը, արժեքները և տնտեսական բարեկեցությունը արտասահմանում: Կառույցի գործունեությունը հիմնականում կենտրոնացած է անվտանգության բարելավմանն ու աղքատության ցուցանիշների նվազեցմանը¹²³: Վարչության վերջին ծրագիրը 2016-2019 թվականների համար նախատեսված ռազմավարության հայտարարությունն է, որում նշում են սփյուռքի աջակցությանն ուղղված հետևյալ հինգ սկզբունքները.

1. Ծառայել իռլանդացիներին հայրենիքում և արտասահմանում և նպաստել համագործակցությանը: Այս սկզբունքը ապահովում է իռլանդացիների քաղաքացիության հետ կապված խնդիրների լուծումը:
2. Պաշտպանել իռլանդացիների շահերն ու արժեքները ամբողջ Եվրոպայում: Այս սկզբունքի ներքո ենթադրվում է ամուր երկկողմ կապեր հաստատել ԵՄ անդամ երկրների հետ, ներգրավվածություն ունենալ Եվրոպայում խաղաղության և անվտանգության պահպանմանը՝ միաժամանակ պահպանելով կապերը ամենամոտ հարևանի՝ Մեծ Բրիտանիայի հետ:

¹²³ Department of Foreign Affairs and Trade. <https://www.dfa.ie/about-us/what-we-do/our-strategy-and-guiding-principles/>. 14.12.17

3. Ապահովել մարդու իրավունքների պատշաճ անուշխնությունը միջազգային հարթակում և պայքարել աղքատության ու սովի դեմ:
4. Հասնել բարգավաճման տնտեսական շահերի իրացման միջոցով:
5. Իռլանդական համայնքների միասնական կառավարման միջոցով մեծացնել վերոնշյալ նպատակների իրագործման հնարավորությունները:¹²⁴

Հարկ է նշել, որ Իռլանդիայի պարագայում «հարենիք-սփյուռք-ընդունող երկիր» հարաբերությունները հիմնականում ծավալվում են աղքատության դեմ պայքարի և տնտեսական զարգացման շրջանակներում: 1993-2007 թվականներին իռլանդական տնտեսության աննախադեպ աճի վերլուծությունը վկայում է, որ իռլանդական սփյուռքի ցանցային գործունեությունը կարևոր միջնորդական դերակատարություն է ունեցել Իռլանդիայի երկկողմ և բազմակողմ հարաբերությունների հաստատման ու զարգացման գործում:¹²⁵

Համաշխարհային իռլանդական ցանց: 2009 և 2010 թվականներին, ի պատասխան տնտեսական ճգնաժամին, համապատասխանաբար ստեղծվեցին ցանցային բնույթ ունեցող Համաշխարհային իռլանդական տնտեսական ֆորումը և Համաշխարհային իռլանդական ցանցը, որոնք մշակում են հատուկ մեխանիզմներ իռլանդական սփյուռքի զարգացած համայնքների և Իռլանդիայի միջև համագործակցություն հաստատելու նպատակով, ինչը բարենպաստ կլինի Իռլան-

¹²⁴ Department of Foreign Affairs and Trade: Statement of Strategy 2016-2019, pp. 8-12.

¹²⁵ Gilmartin M., White A., Migrations: Ireland in a Global World, Manchester University Press. 2013, p. 86.

դիայի կայուն զարգացման և տնտեսական աճի համար: Համաշխարհային իռլանդական ցանցը ենթադրում է անժամկետ ցանցային համագործակցություն տնտեսական ոլորտում և ներկայումս ներառում է 40 երկրներում գործող ավելի քան 350 իռլանդական կամ իռլանդական կապեր ունեցող խոշորագույն բիզնեսների ներկայացուցչություններ: Ցանցը գործունեություն է ծավալում տնտեսության և բիզնեսի ամենատարբեր ոլորտներում՝ նպատակ ունենալով աջակցելու Իռլանդիայի տնտեսական զարգացմանը: Ընդ որում, տնտեսական օժանդակությունը չի սահմանափակվում դրամական հատկացումներով, այլ շեշտը դրվում է արտասահմանում կուտակած արժեքավոր փորձի փոխանակման վրա:¹²⁶ Ի դեպ, 2009 թվականին տնտեսական ֆորումի ներքո համախմբվեցին 250 ամենագղեցիկ իռլանդացի սփյուռքաբնակները՝ հետազոտելու և պարզելու համար, թե որոնք են տնտեսական զարգացման, ճգնաժամի կառավարման և հայրենիքի ու սփյուռքի միջև ռազամավարական հարաբերությունների զարգացման արդյունավետ ձևերը:

Իռլանդիայի արդյունաբերական զարգացման կազմակերպություն: Կազմակերպությունն ունի ավելի քան 60 տարվա գործունեության պատմություն և ներկայումս ունի 14 գրասենյակներ Իռլանդիայի սահմաններից դուրս: Կազմակերպության զբնդավարակներն ավելի քան 60 տարվա փորձով են արտաքին ներդրումների ընդլայնումը Իռլանդիայում: Կազմակերպության գործունեության արդյունքները հրապարակվում են տարեկան զեկույցներով, ինչը տվյալների հիմք է հանդիսանում գործունեության արդյունավետությունը գնահատելու տեսանկյունից: Վերջին՝ 2016 թվականի զեկույցի

¹²⁶ The Global Irish Network, <https://global.irish/GlobalIrishNetwork.aspx>, 17.12.17

համաձայն Իռլանդիայում ստեղծվել են 80 հազար նոր աշխատատեղեր և արձանագրվել է 40% ներդրումային աճ:¹²⁷

Իռլանդական ձեռնարկություն (Enterprise Ireland): Այս կազմակերպությունը նույնպես նպատակաուղղված է բիզնես ոլորտի զարացմանը և ունի ավելի քան 30 ներկայաչափություններ Իռլանդիայից դուրս: Կազմակերպությունը պատասխանատու է Իռլանդիայի բիզնես ոլորտի զարգացման համար՝ օժանդակելով այն միջազգային ընկերություններին և անհատ ձեռնարկատերերին, որոնք փնտրում են իռլանդացի մատակարարների կամ ցանկանում ներդրումներ կատարել իռլանդական ընկերություններում: Կազմակերպությունն ունի ավելի քան 30 հազար անդամ և համաշխարհային մակարդակով աջակցություն է ցուցաբերում ավելի քան 60 իռլանդական բիզնես ցանցերի:¹²⁸

3.3.2. Չինական սփյուռք

Չինական սփյուռքը կազմում է մոտ 50 միլիոն և վերաբերում է այն բնիկ չինացիներին, որոնք ապրում են Չինաստանից, Հոնգ Կոնգից, Թայվանից, Մաքաոյից դուրս¹²⁹: Չինական սփյուռքը ձևավորվել է 19-րդ դարի երկրորդ կեսից, երբ 1850-ական թվականներից սկսած աշխատանք գտնելու նպատակով գյուղաբնակ չինացիները սկսեցին արտագաղթել Հարավարևելյան Ասիա: Այդ տարածաշրջանի երկրների տնտեսությունները չինական սփյուռքի ձևավորումից մինչ օրս

¹²⁷ IDA Ireland Annual Report & Accounts 2016, p.2.

¹²⁸ Enterprise Ireland. <https://www.enterprise-ireland.com/en/About-Us/>.18.12.17.

¹²⁹ Liu H. Van Dongen, *The Chinese Diaspora*. Oxford Bibliographie. 2013. <http://www.oxfordbibliographies.com/view/document/obo-9780199920082/obo-9780199920082-0070.xml>.18.12.17

շարունակում են օգուտներ քաղել չինական սփյուռքի աշխատուժից, նախաձեռնություններից և կապիտալից, քանի որ հենց չինական համայնքների շնորհիվ Հարավարևելյան Ասիայի երկրները կարողացել են ինտեգրվել համաշխարհային շուկայում: Չինացիները նաև մեծ ներդրում են ունեցել այդ երկրների և Չինաստանի միջև կապերի ամրապնդման գործում, այդ իսկ պատճառով չինական սփյուռքի գործունեության ձևերը մեծամասամբ համընկնում է այդ երկրների շահերի հետ¹³⁰:

1950-ականներին և 1980-ականներին երկրում առկա դժվարությունների հետևանքով չինացիները սկսեցին գաղթել առավել զարգացած արդյունաբերական կենտրոններ՝ Հյուսիսային Ամերիկա, Եվրոպա, Ճապոնիա և Ավստրալիա: Սկզբնական շրջանում նրանք փորձառություն չունեցող, կրթվածության ցածր մակարդակով խմբեր էին և ծառայում էին որպես էժան աշխատուժ: Սակայն, արդեն 21-րդ դարում չինական սփյուռքը վարում է բազմամակարդակ գործունեություն, որը համապատասխանում է գլոբալացված և տեխնոլոգիապես զարգացած տնտեսության պահանջներին:¹³¹

Սփյուռքի որակական փոփոխության մեջ մեծ դերակատարում է ունեցել կրթվածության մակարդակի կտրուկ աճը՝ հատկապես ԱՄՆ-ում և Կանադայում: Եթե չինական սփյուռքի ավագ սերունդն ուներ անգլերենի սահմանափակ գիտելիքներ և մասնագիտական ցածր պատրաստվածություն, ապա երիտա-

¹³⁰ Сведенцов В. Л., Политика КНР в отношении китайской диаспоры в странах Юго-Восточной Азии, *Проблемы национальной стратегии*, 5 (38), 2016, 104-125.

¹³¹ Ding, S., Sons of the Yellow Emperor Go Online: The State of the Chinese Digital Diaspora, *Global Migration and Transnational Politics*, Working Paper No. 13, 2010.

սարդ սերունդն ունի ողջ գործիքակազմը՝ աշխատանքային շուկայում լուրջ խոչընդոտների չբախվելու համար¹³²:

Չինական սփյուռքը համարվում է աշխատանքային սփյուռք, քանի որ արտագաղթը տեղի է ունեցել հատկապես առավել բարենպաստ աշխատանքային պայմաններ որոնելու նպատակով: Արտագաղթը սկսեց հատկապես ընդգրկուն ծավալներ ձեռք բերել, երբ 1979 թվականին Չինաստանն ավելի ազատականացրեց միգրացիոն քաղաքականությունը: 1979 թվականին հաջորդած 10 տարիների ընթացքում բոլոր ներդրումները Հարավարևելյան Չինաստանում գալիս էին հիմնականում Արևելյան Ասիայի չինական սփյուռքից և ուղղված էին գլխավորապես Հարավարևելյան Չինաստանում ապրող իրենց բարեկամների աջակցությանը: Սկզբնական շրջանում միջընտանեկան կապերը սփյուռքի և հայրենիքի մեջ տնտեսության զարգացման համար նշանակալի ազդեցություն ունեցան, քանի որ դրամական փոխանցումներն ունեին հստակ ուղղություն և իրացման նախասահմանված ոլորտ, հետևաբար հատկացումները միջընտանեկան կապերի և փոխվստահության պայմաններում իրացվում էին նպատակային ճանապարհներով: Ձևավորվեց ներդրումների նպատակային իրացման մեխանիզմ՝ հանդեցնելով չինական տնտեսության աճին:

Ժամանակի ընթացքում սփյուռքը դարձավ նպաստավոր հարթակ չինական մշակույթի տարածման և միջազգային հարթակում Չինաստանի ազդեցության ընդլայնման համար: Դրան նպաստեց Կանադայում և Միացյալ Նահանգներում լայն հնարավորությունների ու ազատությունների առկայությունը, որը հատկացվում է սփյուռքաբնակներին: Այդ պատճառով

¹³² Terrazas A., Batalova J., Chinese Immigrants in the United States. Migration Policy Institute, 2010, <https://www.migrationpolicy.org/article/chinese-immigrants-united-states-0/>. 18.12.17

Կանադան և ԱՄՆ-ը դարձան չինացիների գլխավոր նպատակակետերը: 2013 թվականին չինացի մեծահարուստների 25%-ը և 23%-ը հաստատվել են համապատասխանաբար ԱՄՆ-ում և Կանադայում: Միաժամանակ, ԱՄՆ-ում կայուն աճում է քաղաքացիություն ձեռք բերած չինացիների թիվը¹³³: Հարկ է նշել, որ չինական համայնքը ԱՄՆ-ում աչքի է ընկնում հասարակական և տնտեսական մեծ ձեռքբերումներով, որոնք ակնհայտորեն դրսևորվում են ԱՄՆ-ում չինական սփյուռքի ստեղծած կառույցների գործունեությամբ:

Չինաստանի համախմբված բարեգործական ասոցիացիա (CCBA): Արդեն 19-րդ դարավերջից ԱՄՆ-ում սկսեցին ձևավորվել չինական կազմակերպությունները: Կազմակերպությունների զարգացման նախնական փուլում նշանակալի էր Չինաստանի համախմբված բարեգործական ասոցիացիայի (CCBA) ստեղծումը ԱՄՆ-ի՝ չինական առավել մեծ համայնք ունեցող հատվածներում: Ստեղծված լինելով դեռևս 1833 թվականին՝ այն զարգացրել է իր գործունեությունը մինչև մեր օրերը և կիսակառավարարության դերակատարում է ունեցել չինական համայնքների համար: Այս կազմակերպությունը յուրօրինակ կապող օղակ է ամերիկյան և չինական համայնքների միջև: Մասնավորապես, կառույցը գործունեություն է ծավալում հետևյալ ոլորտներում.

- Ապահովում է հասարակական ծառայությունների իրագործումը:

¹³³ Countries with the largest number of overseas Chinese.
<https://www.statista.com/statistics/279530/countries-with-the-largest-number-of-overseas-chinese/>.18.12.17

- Միջոցառումներ է ձեռնարկում՝ ուղղված չինական մշակույթի, սովորույթների և ժառանգության պահպանմանը:
- Կամուրջ է չինացիների և մյուս էթնիկ խմբերի միջև փոխհարաբերությունների հաստատման համար:
- Առաջ է մղում Չինաստանի շահերը:
- Աջակցում է կրթական զարգացմանը և իրականացնում է բարեգործական գործունեություն:
- Ապահովում է չինացիների քաղաքացիության հետ կապված խնդիրների լուծմանը:¹³⁴

Ամերիկաբնակ չինացիների կազմակերպություն (OCA):

Ավանդական կառույցներից է նաև Ամերիկաբնակ չինացիների կազմակերպությունը (OCA/Organization of Chinese Americans – Asian Pacific American Advocates), որը հիմնվել է դեբևս 1973 թվականին և ներկայումս ունի ավելի քան 100 ներկայացուցչությունների ցանց ԱՄՆ-ի տարածքում: Այն նպատակ ունի ապահովել Ամերիկայում չինացիների բարեկեցությունը քաղաքական, տնտեսական և հասարակական ոլորտներում¹³⁵:

Ամերիկաբնակ չինացիների ազգային միություն (NACA):

Ամերիկաբնակ չինացիների ազգային միությունը (The National Association of Chinese-Americans) նույնպես չինական սփյուռքի ավանդական կառույցներից է: Կազմակերպությունը ԱՄՆ-ում չինական սփյուռքի ակտիվ գործունեության մեկ այլ հարթակ է: Ստեղծվել է 1977 թվականին և ուղղված է ԱՄՆ-ի և չինական համայնքների միջև մշակութային, կրթական, գիտական և

¹³⁴ The Chinese Consolidated Benevolent Association (CCBA),

<http://www.ccbany.org/eaboutus.html>.18.12.17

¹³⁵ OCA/Organization of Chinese Americans – Asian Pacific American Advocates, <https://www.ocanational.org/mission/>.19.12.17.

բիզնես կապերի ամրապնդմանը և ամերիկյան հասարակության մեջ չինական մշակույթի պահպանմանը¹³⁶:

Վերոնշյալ օրինակները չինական սփյուռքի առավել ավանդական կառույցներից են և զբաղվում են մշակութային, քաղաքացիական հարցերով: Ի տարբերություն ժամանակակից կառույցների, դրանք ունեն ոլորտային ուղղվածություն:

Չինական ժամանակակից կազմակերպություններն ունեն մեծ տարածվածություն ընդունող երկրի ամբողջ տարածքում և կենտրոնացած չեն միայն չինական խիտ բնակչություն ունեցող քաղաքներում: Չինական սփյուռքի ինստիտուցիոնալ բնութագիրը բազմամակարդակ է, հետևաբար սփյուռքի գործունեությունը ևս կրում է բազմամակարդակ բնույթ: Չկա գործունեության որևէ ոլորտ, որը գերիշխող դերակատարում ունենա «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» հարաբերությունների հանատեքստում: Միաժամանակ, չինական սփյուռքի ժամանակակից կազմակերպությունները ոլորտային բնույթ ունեն, ինչը թույլ է տալիս կոնկրետ ոլորտներում ծավալել առավել կենտրոնացած գործունեություն: Ընդհանուր առմամբ, չինական սփյուռքի ժամանակակից կազմակերպությունները կարելի է բաժանել հետևյալ տեսակների՝

1. քաղաքական,
2. կրոնական,
3. մշակութային,
4. կրթական,
5. առողջապահական,

¹³⁶ The National Association of Chinese-Americans NACA. <https://www.naca-atlanta.org/about/>.18.12.17.

6. քաղաքացիական/հասարակական ծառայություններ ապահովող կառույցներ,

7. տնտեսական զարգացմանն ուղղված կազմակերպություններ:

Չինական սփյուռքի գործունեությունը կարևոր նախապայման է եղել Չինաստանի տնտեսական աճի համատեքստում, իսկ ներկայումս այն հայրենիքի կայուն զարգացման գլխավոր երաշխիքներց է: Այս տեսանկյունից հատկապես մեծ կարևորություն ունեն ԱՄՆ-ում գործող տնտեսական/բիզնես կազմակերպությունները, որոնք ունեն անդրազգային ցանցային բնույթ: Նպատակ ունենալով խորապես ինտեգրվել ամերիկյան տնտեսության մեջ, այդ կազմակերպությունները տնտեսական նպատակներով զարգացնում են միջէթնիկ կապերը, ինչն, իր հերթին խթան է հանդիսանում մշակութային ավանդույթների պահպանման համար: ԱՄՆ-ում չինական սփյուռքի տնտեսական կազմակերպություններն ունեն հետևյալ նպատակները՝

1. ամրապնդել կապերը ԱՄՆ-ում բնակություն հաստատած չինացի ձեռնարկատերերի միջև,

2. ներկայացնել և պաշտպանել նրանց շահերը ԱՄՆ-ում,

3. կապեր հաստատել հայրենիքի և չինական սփյուռքի ներկայացուցիչների միջև՝ Չինաստանում և այլ երկրներում շահավետ տնտեսական, համագործակցային և ներդրումային նոր հնարավորություններ գտնելու նպատակով¹³⁷:

Չինական սփյուռքի գործունեության հիմնաքարերից են նաև մասնագիտական կառույցները: Դրանք սկսեցին ձևավորվել վերջին երեք տասնամյակների ընթացում, երբ Չինաստանից տեղի ունեցավ ուղեղների արտահոսք: Այս կառույցները

¹³⁷ Min Z. and Rennie L., *Traversing Ancestral and New Homelands: Chinese Immigrant Transnational Organizations in the United States*, *Asian and Pacific Migration Journal*, 647, 1, 2013, 22-49.

կոնկրետ ուղղվածություն ունեցող կառույցներ են և կարող են մասնագիտացված լինել ամենատարբեր ոլորտներում՝ գիտություն, ճարտարապետություն, բժշկություն, ֆինանսներ և այլն: Նմանօրինակ կազմակերպություններ են ԱՄՆ-ում Գիտության և տեխնոլոգիայի չինական միությունը, Չինացի ճարտարապետների միությունը, Չինացի գիտնականների միությունը և այլն¹³⁸: Մասնագիտական մակարդակում մեծ է եղել չինական սփյուռքի ներդրումը հայրենիքի զարգացման հարցում: Փորձի փոխանակման արդյունքում չինական սփյուռքի գիտական հատվածը կարողացել է աջակցել Չինաստանում գիտության զարգացմանը: 1998 թվականին, թեպետ Չինաստանում կրճատվեց գիտական ինստիտուտների թիվը, այնուամենայնիվ արտասահմանից բարձր աշխատավարձով Չինաստան հրավիրվեցին չինական սփյուռքի գիտական բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ինչի արդյունքում մեծապես ակտիվացան հետազոտական կենտրոնների աշխատանքները¹³⁹: Մա կարող է դիտվել որպես սփյուռքում կուտակած փորձի և ներուժի արդյունավետ և հեռանկարային օգտագործման տարբերակ:

Չինական սփյուռքի պետական ցանցային կառավարման կառույցներ: Չինաստանի պետական կառավարման համակարգում արտաքին գործերի նախարարության մակարդակով չկա օրենսդրական հիմք ունեցող որևէ կառույց, որը կառավարում է Չինաստանի և սփյուռքի միջև փոխհարաբերությունները: Մակայն, զոյություն ունեն երկու կառույցներ, որոնք համակարգում են այդ փոխհարաբերությունները և ունեն ցանցային, համագործակցային բնույթ: Արտասահմանում

¹³⁸ Նույն տեղում:

¹³⁹ Жуджунь Д., Ковалев М., Новик В., Феномен экономического развития Китая, Минск, Издательский центр БГУ, 2008, с. 27.

Չինական կապերի գրասենյակը Չինաստանի պետական խորհրդի վարչական կառույց է, որը պատասխանատու է համաշխարհային մակարդակում չինական սփյուռքի կառավարման, չինացիների շահերի արդյունավետ իրացման, չինական համայնքների միասնականության, համագործակցության մեխանիզմների և ռազմավարության մշակման համար: Մյուս կառույցը Վերադարձած օտարերկրացի չինացիների ֆեդերացիան է, որը հայտնի է որպես կիսակառավարական կազմակերպություն և նպատակ ունի ներգրավելու վերադարձած չինացիներին երկրի մոդեռնիզացման մեջ, պաշտպանելու նրանց իրավունքները և խթանելու համագործակցությունը և տեխնոլոգիական հաղորդակցությունը չինական սփյուռքի և ընդունող երկրների միջև¹⁴⁰:

Հեռանկարային կառույց է նաև Չինացի ձեռնարկատերերի համաշխարհային միությունը, որը բարենպաստ հարթակ է ամբողջ աշխարհում չինական ձեռնարկությունների միջև ցանցային համագործակցություն ծավալելու համար: Կառույցի գործունեության նպատակն է պաշտպանել չինացի ձեռնարկատերերի շահերը և մեծացնել ուղղակի ներդրումների հոսքերը հայրենիքում¹⁴¹:

Չինաստանի ցանցային քաղաքականության մեջ առանցքային տեղ է գրավում նաև մշակույթի տարածումը ընդունող երկրներում, ինչը ինքնության պահպանման տեսանկյունից կարևորագույն գործոն է: Մշակութային առաջխաղացման շրջանակներում հատկապես մեծ կարևորություն ունի լեզվի պահպանման և ուսուցման ռազմավարությունը: Չինարենի տարածումը ռազմավարական նշանա-

¹⁴⁰ Min Z. and Rennie L., նշվ. Աշխ.:

¹⁴¹ World Chinese Entrepreneur Association, <http://www.wcec-secretariat.org/en/>, 18.12.17.

կություն ունի Չինաստանի սփյուռքի քաղաքականության մեջ, քանի որ այն զգալիորեն կմեծացնի չինական համայնքների և ընդունող երկրների միջև համագործակցության հնարավորությունները, միաժամանակ, թույլ տալով պահպանել չինացիների քաղաքակրթական առանձնահատկությունները: 142 երկրներում հիմնվել են ավելի քան 500 Կոնֆուցիուսի կենտրոններ¹⁴²:

¹⁴² Yuan Z., Guo J., Zhu H., Confucius Institutes and the limitations of China's global cultural network.

ԳԼՈՒԽ 4**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՊՔԸ****4.1. Ձևավորման փուլերն ու առանձնահատկությունները**

Հայկական, հրեական, հունական և չինական սփյուռքները համարվում են առավել խոր պատմական արմատներ ունեցողները:¹⁴³ Ըստ ՀՀ սփյուռքի նախարարության տվյալների, հայկական սփյուռքի թվաքանակը աշխարհի 117 երկրներում 2017 թվականի տվյալներով կազմում է 7 միլիոնից ավելի, որը չի ներառում ծպտյալ կամ իսլամացված հայերին¹⁴⁴: Հայկական սփյուռքի ձևավորման պատճառները եղել են և՛ քաղաքական, և՛ տնտեսական, սակայն ձևավորման սկզբնական շրջանում նախադրյալների մեջ գերիշխող են եղել ջարդերը, բռնի տեղահանումները, կոտորածները, բռնաճնշումները, հալածանքները, որոնք առավել ընդգծված են եղել պետականության տևական բացակայության պայմաններում: Այդ պատճառով հայկական սփյուռքն ավանդաբար համարվում է գոհի կարգավիճակ ունեցող սփյուռք:¹⁴⁵ Այդուհանդերձ, այդ նույն դասակարգման համաձայն (գոհ, աշխատանքային, առևտրային, կայսերական)¹⁴⁶ հայկական սփյուռքի նորագույն (հետխորհրդային) հատվածը կարող է համարվել ինչպես աշխատանքային, այնպես էլ գոհ-սփյուռք (Սուրգաիթի, Բաքվի, Գյանջայի ջարդերի, Էթնիկ զտումների, տեղահանությունների հետևանքով ձևավորված): Հետևաբար, տեղի է ունեցել սփյուռքի բնույթի և կառուցվածքի փոփոխություն, ինչը պահանջում է նախ դասակարգել սփյուռքի ձևավորման ու տրանսֆորմացիայի փուլերը,

¹⁴³ Sheffer G., *Diaspora politics: At home abroad*. Cambridge, 2003.

¹⁴⁴ Հակոբյան Հ., Հայկական սփյուռքը հարափոփոխ աշխարհում: Եր., Հեղ. Հրատ., 2017թ., էջ 46:

¹⁴⁵ Cohen R., *Global diasporas*. Second edition. Routledge, 2008, p 48.

¹⁴⁶ Cohen R., նշվ. աշխ.

ապա՝ հատկանիշները, հնարավորություններն ու կարողություններն՝ ըստ հայության հիմնախնդիրների:

Ձևավորման նախնական փուլը

Հայկական սփյուռքի և հայրենադարձության առաջին հիշատակումը, թերևս, վերաբերում է Հայկ նահապետի և Բելի պալքարին նվիրված առասպելին: Հայկական սփյուռքի ձևավորումն՝ ըստ գրավոր հիշատակումների, սկիզբ է առել դեռևս 3-4-րդ դարերում, Մասանյան արքաների օրոք իրականացվող տեղահանումներով: Այնուհետև հայերի տեղաշարժերն առավել զանգվածային բնույթ են ստացել Բյուզանդական կայսրության տիրապետության շրջանում, երբ Հայաստանի զգալի մասը գրավվեց և ներառվեց այդ կայսրության սահմանների մեջ: Բյուզանդիայի վարած հետևողական քաղաքականության արդյունքում հայերը ստիպողաբար տեղահանվել են դեպի կայսրության առավել քիչ բնակեցված շրջաններ¹⁴⁷ ձևավորելով հայկական սփյուռքի առաջին օջախները, անգամ այն ժամանակ, երբ գահ էին բարձրանում հայկական ծագմամբ արքաներ:

1033-1071 թվականներին՝ սելջուկ թուրքերի արշավանքների ժամանակ, երբ նրանք գրավեցին Հայաստանի մեծ մասը, տեղահանված հայերի զգալի հոսքեր ուղղվում էին դեպի Կիլիկիա:¹⁴⁸ Կիլիկիայի հայության հետևողական գործունեությունը հնարավորություն տվեց բարդ ռազմաքաղաքական պայմաններում ստեղծել Կլինիկիայի թագավորությունը: Այն դարձավ ոչ միայն հայկական պետականության նոր մարմնավորում, այլև հայկական մշակույթի զարգացման նոր կենտրոն՝

¹⁴⁷ Ember M., Carol R., Skoggard I., *Encyclopedia of Diasporas: Immigrant and Refugee Cultures around the World*. Springer. 2004, pp. 36–43.

¹⁴⁸ Tölölyan Kh., *Armenian Diaspora, Encyclopedia of Diasporas*, Springer US, 2005, pp. 35-46.

խթանելով ազգային ինքնության պահպանումը նաև հայկական սփյուռքի մի շարք գաղթօջախներում, որոնց հետ հաստատվեցին ամուր կապեր: Անգամ Կիլիկիա տեղփոխվեց Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոսությունը: Թեև տևական ժամանակահատված Կիլիկիայի թագավորները կարողանում էին հաջողությամբ լուծել բարդ խնդիրները, որոնք ձևավորվել էին տարածաշրջանում մի շարք կողմերի (խաչակիրներ, մամլուքներ, մոնղոլներ և այլն) շահերի բախման արդյունքում, այդուհանդերձ, 1375 թվականին՝ մամլուքների արշավանքների արդյունքում թագավորությունն անկում ունեցավ և տեղի հայերի զգալի մասը տեղափոխվեց Իտալիա, Ֆրանսիա, Բալկաններ, Միրիա, Կիպրոս՝ կազմելով նոր համայնքներ: Այնուամենայնիվ, հայերը դեռևս շարունակում էին բնակվել և գործունեություն ծավալել Կիլիկիայում:

Մինչև 14-րդ դարը հայերը համայնքներ էին ստեղծել նաև Կիլիկյան Ռոսիայում, Ասորիքում, Միջագետքում, Ղրիմում, Փոքր Ասիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Բուլղարիայում:

Երկրորդ փուլը . Օսմանյան կայերության բռնաճնշումներ և ցեղասպանություն

Հայկական սփյուռքի ձևավորման հարցում շրջադարձային էր Օսմանյան կայսրության հիմնումը: Թուրքերը ձեռնամուխ եղան քրիստոնյա ժողովուրդների տեղահանումների ու բռնաճնշումների, բռնի թուրքացման քաղաքականությանը կայսրության ամբողջ տարածքով: Դրա հետևանքով հայերն արտագաղթում էին ոչ միայն Հայաստանից, այլ նաև թուրքերի գրավյալ այլ տարածքներից: Օսմանյան կայսրության տիրապետության ներքո հայերի արտագաղթի նոր խոշոր ալիք բարձրացավ, երբ թուրքերը գրավեցին Ղրիմը և մինչ այդ այնտեղ

հաստատված հայերի սովոր գանգված լքեց թերակղզին՝ հաստատվելով Ռուսաստանում, Լեհաստանում և այլուր¹⁴⁹: Հաջորդ խոշոր ալիքը ձևավորվեց Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի միջև սկսված պատերազմների հետևանքով, ինչի արդյունքում Կասրե Շիրինի պայմանագրով 1639 թվականին Հայաստանը բաժանվեց Օսմանյան կայսրության և Պարսկաստանի միջև¹⁵⁰: Նշանակալի էին նաև 1604-1605 թվականների Պարսկաստանի Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթերը, ինչի արդյունքում շուրջ 300 հազար հայ գաղթեց Պարսկաստան: Շահ Աբասը նպատակ էր հետապնդում զարգացնելու սեփական երկրի առևտրային և արտադրության ոլորտները՝ օգտագործելով հայերի ներուժը¹⁵¹:

1826-1829 թվականներին ռուս-պարսկական պատերազմում Ռուսաստանի հաղթանակով Երևանի և Նախիջևանի խանություններն անցան Ռուսաստանին և սկսվեց Արևելյան Հայաստանի վերաբնակեցումը հայերով: Շուրջ 150 հազար հայ տեղափոխվեց Արևելյան Հայաստան, ինչի արդյունքում կտրուկ աճեց հայ բնակչության թիվը¹⁵²: Միաժամանակ, Օսմանյան տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում շարունակվում էին հայերի նկատմամբ իրականացվող գանգվածային բռնաճնշումները: 1894-1896 թվականներին Աբդուլ Համիդ II-ի՝ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերում իրականացված գանգվածային կոտորածների արդյունքում հարյուրհազարավոր

¹⁴⁹ Հայ սփյուռք հանրագիտարան: Երևան, 2003, էջ 8:

¹⁵⁰ Boumoutian G., A Concise History of The Armenian People, Mazda Publishers, Inc. Costa Mesa California 2006, p 188.

¹⁵¹ Дятлов В., Мелконян Э., Армянская диаспора: очер- ки социокультурной типологии. Ер., Институт Кавказа, 2009, с 44.

¹⁵² Հայ սփյուռք հանրագիտարան: Նույն տեղում:

հայեր սպանվեցին, մահմեդականացվեցին կամ վտարվեցին իրենց բնակության վայրերից¹⁵³: Այս շրջանում հայերն արտագաղթեցին հատկապես դեպի ԱՄՆ, Կանադա և Հարավային Ամերիկայի երկրներ: Այդ ժամանակաշրջանում հայկական սփյուռքն ուներ երկու հիմնական բնութագրիչ¹⁵⁴.

1. Թեև արտագաղթը շարունակական բնույթ ուներ, այնուամենայնիվ հայ ազգի ճնշող մեծամասնությունը շարունակում էր բնակվել իր հայրենիքում՝ Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Գիլիկիայում, Արևմտյան Հայաստանում և Ռուսական կայսրության տիրապետության ներքո գտնվող Արևելյան Հայաստանում:

2. Արտագաղթած հայերը և նրանց սերունդները գրեթե միշտ հնարավորություն են ունեցել վերադառնալու հայրենիք:

Ադետալի իրավիճակը գազաթնակետին հասավ 1915 թվականին, երբ Օսմանյան կայսրությունն, օգտվելով առաջին համաշխարհային պատերազմով պայմանավորված բարենպաստ իրավիճակից, նախաձեռնեց հայերի ցեղասպանությունը, որն աննախադեպ էր իր մասշտաբներով և հետևանքներով: Ողջ Արևմտյան Հայաստանը ամայացվեց: Եղեռնի զոհ դարձան մոտ 2 միլիոն հայեր, իսկ փրկվածները ապաստան գտան Արևելյան Հայաստանում կամ տարբեր երկրներում հաստատված հայ համայնքներում: Վերոհիշյալ երկրորդ բնութագրիչը կորցրեց իր կիրառելիությունը, քանի որ ցեղասպանությանը հաջորդած շրջանում Արևմտյան Հայաստանից դուրս մղված հայերն այլևս կորցրեցին հայրենիք վերադառնալու իրատեսական հնարավորությունները:

¹⁵³ Կիրակոսյան Ա.Ջ., Հայկական հարցը եվ հայերի ցեղասպանությունը (պատմաիրավական եռալեզու տեղեկանք). - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2006, էջ 11:

¹⁵⁴ Дятлов В., Мелконян Э., էջ 40.

Երրորդ փուլ . հայրենադարձություն

Ցեղասպանության հետևանքով հարյուր հազարավոր հայեր տեղափոխվեցին օտար երկրներ, նրանց մի մասն էլ Արմտյան Հայաստանից անցան Արևելյան Հայաստան: 1918 թվականին Հայաստանի անկախության վերականգնմանն ու ընդամենը երկու տարի անց նոր կորստին հաջորդած իրադարձությունները էապես փոխեցին հայության պատկերացումները շատ երևույթների մասին: Հատկանշական է, որ հենց այդ շրջանում կիրառության մեջ մտավ «սփյուռք» եզրույթը, որը փոխարինեց նախկինում հայրենիքից դուրս գտնվող հայկական համայնքները բնորոշող «գաղթօջախ»-ին: Փոխվեցին նաև սփյուռքի վերաբերյալ պատկերացումները՝ հայ ժողովրդի համար պատմական շրջադարձային իրողություններով պայմանավորված նոր գիտակցությամբ և ընկալմամբ¹⁵⁵: 1921 թվականին Հովհաննես Թումանյանի նախաձեռնությամբ ստեղծվեց Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ), որի շնորհիվ ազգային միասնության գաղափարը մեծ արձագանք գտավ հայկական սփյուռքի համայնքներում: Ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում գտնվող հայրենաբնակների համար դա ոչ միայն նյութական զգալի աջակցություն էր, այլև հզոր բարոյական ազդակ: Կազմակերպությունը գործունեությունը շարունակեց մինչև 1937 թվականը, երբ խորհրդային իշխանություններն այն որակեցին օտարկերկրյա գործակալությունների լրտեսական կազմակերպություն և լուծարեցին, իսկ ղեկավարները բռնադատվեցին¹⁵⁶:

Խորհրդային միության կազմում ձևավորված Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը

¹⁵⁵ Նույն տեղում, էջ 43.

¹⁵⁶ Հայ սփյուռքի հանրագիտարան, էջ 691:

(ՀՄՍՀ)՝ Մոսկվայի արտոնմամբ և Հայաստանի ժողովրդագրական վտանգավոր իրավիճակի շտկման նպատակով երեք փուլերով՝ 1921-1936թթ., 1946-1948թթ., 1960-1982թթ., իրականացրեց հայրենադարձություն¹⁵⁷, ինչի արդյունքում զգալիորեն աճեց հայերի թիվը ՀԽՍՀ-ում: Թեև այդ քաղաքականության արդյունքում բարելավվեց ժողովրդագրական իրավիճակն, այդուհանդերձ ծանր սոցիալական պայմանները հիասթափություն առաջացրին ներգաղթյալների շրջանում, ինչի արդյունքում արդեն 1947 թվականին մեծացան սահմանն անցնելու փորձերը¹⁵⁸:

Առաջին փուլում Հայաստան ներգաղթեցին ավելի քան 45 հազար հայեր Ֆրանսիայից, Բուլղարիայից, Հունաստանից, Սիրիայից, Թուրքիայից, Իրաքից: Երկրորդ փուլում ներգաղթեց մոտ 100 հազար հայ: Հետագայում քաղաքական հետապնդումների. ամբողջատիրական բարքերի պատճառով ներգաղթի տեմպերը զգալիորեն թուլացան: 1960 թվականին վերսկսված ներգաղթի երկու տասնամյակների ընթացքում 30 երկրներից Հայաստան վերադարձան միայն 35 հազար հայեր:

Հարկ է նշել, սակայն, որ սփյուռքի ներգրավվածությունը Հայաստանի տնտեսական, մշակութային, հասարակական կյանքին սահմանափակվում էր գրեթե միայն լրագրային հոդվածներով ու տարատեսակ ելույթներով՝ չդառնալով գիտա-

¹⁵⁷ Սարգսյան Հ., 1946-1948 թթ Հայրենադարձության աշխարհագրությունը և Ժողովրդագրությունը: 1946-1948թթ. Հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր: Համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, 2008թ., էջ 48-59:

¹⁵⁸ Վիրաբյան Ա., Մեծ Հայրենադարձության հիմնահարցեր և խնդիրներ: 1946-1948թթ. Հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր: Համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, 2008թ. էջ 8-21:

կան ուսումնասիրությունների առարկա¹⁵⁹, ինչը կարող էր հանգեցնել առկա բացթողումների բացահայտմանը և թերությունների շտկմանն ու արդի խնդիրների լուծմանը: Այդ իրավիճակը կարող էր կապված լինել այն հանգամանքի հետ, որ սփյուռքի գիտական գործունեությամբ զբաղվող հատվածը գիտակցում էր հայրենադարձության հետագա դժվարությունները և իրատեսական չէր համարում Խորհրդային Միության խոստացած բարեկեցիկ պայմանները: Հայրենադարձության հոսքն էլ նման ակնկալիքով պայմանավորված չէր: Հատկանշական է, որ այդ հոսքն ամենաստվարն է եղել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ ԽՍՀՄ ղեկավարությունը, հայությանը հատուցելու անհրաժեշտությունը շեշտելով, հիմնավորում էր Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջները, որոնք վերաբերում էին Արևմտյան Հայաստանին: Այդ նպատակների հավաստիության տպավորությունը մեծացնելու համար անգամ ձևավորվում էին ապագա նոր շրջանների պետական կառավարման մարմիններ, ՀՄՄՀ-ից իրենց կամարտահայտությամբ Ադրբեջան տեղափոխվեցին մի քանի տասնյակ հազար ադրբեջանցիներ: Հայրենադարձությանը նպաստում էր նաև Երկրորդ աշխարհամարտից հետո Ռուսաստանի հաղթանակած դիրքը, որը սփյուռքի կողմից ընկալվում էր որպես հզորության և բարգավաճման երաշխիք: Հայերը հայրենադարձման արդյունքում լիահույս էին վերադառնալ իրենց բնօրրանները և, միաժամանակ, Խորհրդային

¹⁵⁹ Մելիքսեթյան Հ. Ու., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը: Եր., 1985թ.: Հովհաննիսյան Պ., Հայրենադարձության պատմության պատմագրությունը, 1946-1948թթ. Հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր: Համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, 2008 թ., էջ 8-21:

միության կազմում տեսնել բարգավաճ հայրենիք: Սակայն նրանց երկու սպասելիքներն էլ չարդարացան: Թուրքիայի բռնազավթած տարածքների վերադարձման հարցը կարճ ժամանակ անց դուրս եկավ խորհրդային արտաքին քաղաքականության օրակարգից՝ Անկարայի հետ բանակցությունների արդյունքում, իսկ բարեկեցիկ կյանքի վերաբերյալ խորհրդային իշխանությունների խոստումների անհամապատասխանությունն իրականությանը պարզ էր դառնում հայրենիք վերադարձից գրեթե անմիջապես հետո: Խորհրդային իշխանություններն ի գործու չէին ընդունելու հայերի ստվար հոսքեր, երբ սեփական քաղաքացիներն ապրում էին դժվար պայմաններում: Արդյունքում արդեն 1948 թվականից ուժգնացան արտագաղթի տրամադրությունները՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական ծանր պայմաններով:

Չորրորդ փուլ. Հայկական սփյուռքի նորագույն շրջանը

Խորհրդային միության փլուզումը երկակի ազդեցություն ունեցավ ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում, որի հետևանքով էապես փոխվեցին հայրենիք-սփյուռք հարաբերությունները: Այդ փոփոխությունները պայմանավորված էին երկու հիմնական հանգամանքներով: Դրանցից առաջինը մարդկության ողջ պատմության ընթացքում նախադեպը չունեցած՝ կոմունիստական վարչակարգից բնականոն զարգացման անցնելու անհրաժեշտությունն էր: Փլուզումը հանգեցրեց համակարգային ճգնաժամի, քանի որ նախորդ 70 տարիների ընթացքում գործած քաղաքական, տնտեսական, սոցիալական և մյուս համակարգերը նոր իրավիճակում դարձան ոչ պիտանի, իսկ կարճ ժամանակում նոր համակարգեր ձևավորելու համար չկային ոչ անհրաժեշտ գիտելիքներ, ոչ փորձ: Իրավիճակն ավելի էին բարդացնում

1988թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքով առաջացած ծանր սոցիալ-տնտեսական պայմանները երկրի տարածքի զգալի հատվածում և Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի իրացմանն ի պատասխան Ադրբեջանի սանձազերծած բռնությունների, էթնիկ զտումների, ջարդերի ալիքն ու սանձազերծած պատերազմը:

Տնտեսական, քաղաքական, սոցիալական համակարգերի փլուզման և հասարարական բոլոր ենթակառուցվածքների անգործության արդյունքում ստեղծված կենսապայմանները շատ ծանր էին: Իրավիճակի ավելի էր բարդացնում զանգվածային արտագաղթի խորացումը: Աղճատվում էին պատկերացումները հայրենիք-սփյուռք հարաբերությունների մասին, դրա հիմքն այլևս ընկալվում էր սփյուռքից եկող նյութական օժանդակությունը: Իհարկե, այն ինչ որ չափով մեղմում էր հազարավոր մարդկանց տառապանքները, սակայն ավելի ու ավելի էր հետին պլան մղվում սփյուռքից հիմնական ակնկալիքը: Հայրենիքն առաջին հերթին կարիք ուներ երկրի առջև ծառացած բարդ մարտահրավերների հաղթահարման համար անհրաժեշտ գիտելիքներ ու փորձ ունեցող մասնագետների: Իհարկե, Ադրբեջանի սանձազերծած պատերազմի պայմաններում երկրի անվտանգությունը 1990-ականներին առաջնային էր և հաճախ դրանով էին բացատրվում պետականության կայացման հետ կապված լուրջ խնդիրների արդյունավետ լուծման համար բացառիկ կարևորություն ունեցող՝ սփյուռքյան ներուժի օգտագործման նպատակով արդյունավետ մեխանիզմների մշակման և կիրառման հարցում կոպիտ սխալներն ու բացթողումները: Սակայն հարաբերությունների նման որակը չփոխվեց նաև հետագայում, քանի որ սփյուռքը շարունակվեց ընկալվել միայն նյութական, ֆինանսական միջոցների աղբյուր և ներդրումների ներգրավ-

ման հնարավորություն: Չստեղծվեցին ինստիտուցիոնալացված գաղափարական և նորմատիվային մեխանիզմներ, որոնց վրա կարող էին կառուցվել հայրենիք-սփյուռք հարաբերությունները: Ազգային գործուն գաղափարախոսության բացակայությունը հայրենիք-սփյուռք հարաբերությունները տարավ հակառակ ուղղությամբ: Պետականության կայացման դժվարին փուլում արևմտյան երկրներում հայերի կուտակած քաղաքական և հասարակական ոլորտների կազմակերպման փորձն ու գիտելիքները որևէ կերպ չօժանդակեցին պետության կայացմանը: Մինչդեռ այն հետխորհրդային տրասֆորմացիայի մարտահրավերների հաղթահարման բացառիկ ներուժ էր, առավել ևս այն պայմաններում, երբ շատերը պատվաբեր կհամարեին այդ փորձը հայրենիքին փոխանցելու հրավեր ստանալը¹⁶⁰: Ավելին, պատերազմի ավարտից մի քանի տարի անց պարզվեց, որ վերջին վեց դարերի համար աննախադեպ ոգեղենության բացառիկ ալիքը՝ պայմանավորված պետականության վերականգնմամբ և դարաբաղյան շարժման շնորհիվ հայրենիքի մի հատվածի ազատագրմամբ, չօգտագործվեց:

Պետականակերտման ճանապարհին սփյուռքի ներգրավվածությունը կարող էր կարևոր ազդակ դառնալ ու երկրի ընթացքը տանել ցանկալի ուղղությամբ, սակայն դրա համար անհրաժեշտ լուծումներ չգտնվեցին ոչ սփյուռքի մտավորական շրջանակներում, ոչ Հայաստանի քաղաքական ընտրախավում:

Խնդիրն մնում է Հայաստանի քաղաքական օրակարգի վճռորոշ հարցերից մեկը: Դրա լուծման համար հարկ է նախ ճշտել հայկական սփյուռքի միգրացիոն տեղաշարժերի հիմնական հանգրվանները:

¹⁶⁰ Թորոսյան Ս., նշվ. Աշխ. էջ 20:

4.1.2. 20-րդ դարում հայկական սփյուռքի տեղաբաշխումը

Ցեղասպանության հետևանքով սփռված հայերը հիմնականում բնակություն էին հաստատում Մերձավոր Արևելքում և Արևելյան Եվրոպայի երկրներում: Մա կապված էր հայրենիքին ավելի մոտ գտնվելու ձգտմամբ, ինչը հայրենադարձությունն առավել դյուրին կդարձներ վերադարձի իրատեսական նախադրյալների պայմաններում: Մակայն, այդ ժամանակահատվածում ազդեցիկ գաղթօջախներ էին ձևավորվել նաև Արևմուտքում, մասնավորապես, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում: Հայ համայնքներն առանձնանում էին հատկապես Սիրիայում և Լիբանանում, որտեղ հասարակական նշանակալի գործունեություն էին ծավալել:

Սփյուռքի կյանքում մեծ տեղաշարժ էր Խորհրդային Միության կազմակերպած ներգաղթը, որի ընթացքում ավելի քան 100 հազար հայեր վերադարձան հայրենիք՝ ԽՍՀՄ-ը համարելով հասարակական և քաղաքական կյանքի կազմակերպման կայուն և հզոր համակարգ և հավատարմով Թուրքայի զավթած տարածքների վերադարձի վերաբերյալ խորհրդային քարոզչությանը:

Հետագայում, Մերձավոր Արևելքի երկրներում ազգայնական տրամադրությունների ակտիվացմամբ պայմանավորված, հայերը գաղթեցին առավել զարգացած, կայուն և ապահով արևմտյան երկրներ՝ բարեկեցության և անվտանգության մղումով¹⁶¹: Այդ շրջանում ձևավորված և առավել ստվարացած հիմնական գաղթավայրերն էին Կանադան, Անգլիան, Ավստրալիան: Այդ երկրներ սկսեցին տեղափոխվել նաև Բուլղարիայում, Ռումինիայում, Կիպրոսում ապաստան

¹⁶¹ Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն: Եր., Զանգակ-97, 2004, էջ 12:

գտած հայերի հոծ զանգվածներ: Հետագայում Մերձավոր Արևելքից հայերի հոսքը դեպի ԱՄՆ, Կանադա և Արևմտյան Եվրոպայի երկրներ ունեցավ շարունակական բնույթ՝ պայմանավորված տարածաշրջանի անկայուն իրավիճակով¹⁶²: Ձգտումը դեպի Արևմուտք պահպանվեց դեռ երկար տարիներ, ինչը կապված էր Արևմուտքի երկրներում կայունության և ապահովության հասանելիության հետ:

Հայկական սփյուռքի հետագա ընթացքը նպատակահարմար է դիտարկել երեք տարածաշրջանների՝ Արևելքի, Արևմուտքի, ինչպես նաև նաև հետխորհրդային տարածքի համար առանձին-առանձին:

Մերձավոր Արևելք: Հայերը, դեռևս հնագույն ժամանակներից, սերտորեն կապված են եղել Մերձավոր Արևելքի երկրների հետ, ինչը պայմանավորված է եղել պատմական Հայաստանին այդ երկրների սահմանակից լինելու կամ մոտ գտնվելու փաստով: Հայկական սփյուռքի համայնքներն Իրանում, Սիրիայում, Երուսաղեմում, Եգիպտոսում, Լիբանանում և այլ բնակավայրերում կարողացել են հասնել որոշակի ինքնակազմակերպման ու բարգավաճման՝ իրենց ներդրումն ունենալով կառավարման, առևտրի, քաղաքացիական կյանքի, մասնագիտական ոլորտների և գյուղատնտեսության մեջ: Շարունակաբար համալրվելով, Մերձավոր Արևելքի երկրներում հայ համայնքները կարողացել են ամրապնդել իրենց ինքնությունը, որի հիմնաքարը եղել է քրիստոնեական դավանանքը: Դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ դեռևս 1311 թվականին Երուսաղեմում ստեղծված Հայոց պատրիարքությունը գործում է

¹⁶² Դավլաթյան Կ., նշվ. Աշխ., էջ 14:

մինչ օրս՝ համարվելով հայ հավատացյալների կարևորագույն արբատեղիներից մեկը¹⁶³:

Մինչ առաջին Աշխարհամարտը 46 հազար հայեր էին ապրում Սիրիայում, Լիբանանում, Իրաքում և Պաղեստինում: Հատկապես մեծ էր հայ համայնքը Իրանում՝ շուրջ 86 հազար, իսկ Եգիպտոսում՝ 25,5 հազար: Իրավիճակը փոխվեց արդեն ցեղասպանությունից հետո, երբ հայերի հոծ զանգվածներ համալրեցին Արևելքի երկրների հայ համայնքները: 1920-ականների երկրորդ կեսի տվյալներով 35 հազար հայ էր գաղթել Լիբանան, 120 հազար՝ Սիրիա, Պաղեստին՝ 20 հազար, Իրան՝ 130 հազար, Եգիպտոս՝ 25 հազար, իսկ Կիպրոսում և Իրաքում միասին՝ շուրջ 15 հազար¹⁶⁴: Երբ ֆրանսիական իշխանությունները Ալեքսանդրետի սանջակը հանձնեցին Թուրքիային, ևս մոտ 40 հազար հայեր տեղափոխվեցին Լիբանան և Սիրիա:¹⁶⁵

Մերձավոր Արևելքի երկրներում տեղի բնակչության հետ ինքնության ընդգծված տարբերությունների պայմաններում հայերը կարողացել են պահպանել ազգային ինքնությունը՝ կրթության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու գործունեության շնորհիվ: Ներկայումս Արևելքի հայկական համայնքները ներառված են Հայաստանյայց առաքելական եկեղեցու չորս նվիրապետական աթոռներում՝ պահպանելով նույն վարդապետությունն ու ծեսերը: Մասնավորապես՝ Եգիպտոսի, Սուդանի, Իրաքի, Եթովպիայի համայնքները գտնվում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ենթակայության ներքո: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը գլխավորում է

¹⁶³ Sanjyan A., Armenians in the Middle East. Symposium on “Minorities in the Middle East”. Florida State University. April 3-4, 2008.

¹⁶⁴ Նույն տեղում:

¹⁶⁵ Дятлов В., Мелконян Э., նշվ. աշխ., էջ 47:

Միրիայի, Լիբանանի, Կիպրոսի և Իրանի եկեղեցական թեմերը: Երուսաղեմի Պատրիարքությունը գործունեություն է ծավալում Իսրայելում և Պաղեստինում, մինչդեռ Պոլսո հայոց պատրիարքությունը Թուրքիայի հայ համայնքի հոգևոր կենտրոնն է¹⁶⁶: Մակայն հարկ է նշել, որ բոլոր նվիրապետական աթոռներն էլ ընդունում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ որպես համայն հայության հոգևոր կենտրոն և Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ որպես Հայ Առաքելական եկեղեցու գլուխ:

Մերձավոր Արևելքի երկրների հայ համայնքներում մշտապես մեծ կարևորություն է ունեցել նաև դպրոցների առկայությունը: Լիբանանում, Միրիայում, Եգիպտոսում, Իրանում հայկական մի շարք դպրոցներ գործունեությունն իրականացրել են տեղի պետական ծրագրերի հետ համապատասխանության պայմաններում: Հայոց լեզվի, պատմության և գրականության հետ մեկտեղ, ուսուցանվում են նաև այն առարկաները, որոնք պարտադիր են տվյալ երկրի կառավարության կողմից սահմանված կրթական ծրագրով: Տեղի պետական լեզվի, մասնավորապես, արաբերենի իմացությունը լուրջ առավելություն է Արևելքի երկրներում ինտեգրման, հասարակական, քաղաքական համակարգերում արդյունավետ մասնակցության տեսանկյունից: Նաև այդ պատճառով, մասնավորապես, Իրանում, Լիբանանում, Միրիայում հայերը ճանաչվել են որպես ազգային-կրոնական համայնք, ինչի շնորհիվ էլ ներկայացուցչություններ են ստացել տեղի խորհրդարաններում և կառավարություններում¹⁶⁷:

Հատկանշական է նաև հայալեզու մամուլի առկայությունն Արևելքի երկրներում, որոնք լուսաբանում են քաղաքական, հասարակական, մշակութային կյանքը:

¹⁶⁶ Sanjyan A., նշվ. աշխ. .:

¹⁶⁷ Հայ սփյուռք, հանրագիտարան: էջ 10:

Այդուհանդերձ, 20-րդ դարի երկրորդ կեսից, երբ Արևելքում անկայունության ու քաղաքացիական պատերազմների մեծ ալիք բարձրացավ, սկսվեց հայերի ակտիվ շարժընթացը դեպի Արևմուտք:

Արևմուտք: Այս երկրներում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Արևմտյան Եվրոպայի երկրներում հայկական համայնքները սկսեցին ստվարանալ ցեղասպանությունից հետո, հատկապես՝ 1960-ական թվականներից, երբ իրավիճակը Մերձավոր Արևելքի երկրներում դարձավ անկայուն և, 1980-ական թվականներից, երբ հայրենիք վերադառնալու գաղափարը՝ ապահովության ու բարեկեցության տեսակետից, կորցրեց գրավչությունը: Ավելի ուշ՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, ևս Արևմուտքը մնաց առավել գրավիչ ուղղությունը, եթե լեզվական, մասնագիտական, ֆինանսական, միգրացիայի հետ կապված խնդիրների կամ այլ դրդապատճառներով նախընտրությունը չէր տրվում Ռուսաստանին կամ այլ, այդ թվում՝ Արևելյան կամ Կենտրոնական Եվրոպայի կամ հետխորհրդային երկրի: Արևմուտքում հայկական խոշորագույն համայնքները ձևավորվել են՝ ԱՄՆ-ում (1600000 հայ), Կանադայում (90000 հայ), Ֆրանսիայում (700000 հայ), Գերմանիայում (60000 հայ)¹⁶⁸: Այս խմբին՝ որոշ վերապահումով, կարելի է դասել նաև Ավստրալիայի (85000 հայ), Արգենտինայի (128000 հայ), Բրազիլիայի (100000 հայ) համայնքները:

Հայերը Արևմուտքում ևս ապրել են ակտիվ հասարակական կյանքով՝ հիմնել են դպրոցներ, մամուլ, եկեղեցիներ, համայնքային կյանքը կազմակերպող և համակարգող կառույցներ: Ժամանակի ընթացում աստիճանաբար մեծացրել

¹⁶⁸ Հակոբյան Ն. Ն., նշվ. աշխ., էջ 495:

են մասնակցությունը տեղի քաղաքական և հասարակական կյանքի կազմակերպմանը՝ կուսակցությունների և լոբբիստական խմբերի մակարդակով: Այդ երկրների հայկական համայնքներն ամենաբարեկեցիկներն ու ամենաազդեցիկներն են և, բնականաբար, մեծ է եղել նրանց աջակցությունը հայրենիքին: Մասնավորապես, 1990-ական թվականների պատերազմական ծանր պայմաններում հատկապես զգալի էր Միացյալ Նահանգների համայնքի գորակցությունը, երբ շուրջ 350 միլիոն դոլարի օգնություն ուղարկվեց Հայաստան¹⁶⁹:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ, ի տարբերություն Մերձավոր Արևելքի երկրների, ազգային ինքնության պահպանման խնդիրը շատ ավելի բարդ է հենց Արևմուտքի հայ համայնքներում՝ շատ ավելի ակտիվ հասարակական կյանքով, օտարների հետ սահմանափակումներից զերծ շփումներով, զգալիորեն համընկնող քաղաքակրթական արժեքներով պայմանավորված: Արևմտյան քաղաքակրթական միջավայրում հայերի իրավունքներն ու ազատությունները հարգվում են, դավանաբանական խնդիրներ չունեն, հաղորդակցվում են մայրենի լեզվով, սակայն նման ժողովրդավարական պայմաններում, երբ ազգային արժեքների պահպանման համար որևէ արգելք չկա, գոյություն չունի քաղաքակրթական ընդգծված հակասություն, նկատվում է տեղի ոչ հայկական դպրոցներ հաճախելու միտում, օտար լեզվի գերադասություն մայրենիի նկատմամբ, ինչն ինքնաբերաբար հանգեցնում է աստիճանական ձուլման: Ժամանակի հրամայականով՝ գլոբալացման խորացմամբ խնդիրն առավել մեծ արդիականություն է ձեռք բերել՝ կապված երիտասարդ և ապագա սերունդների շրջանում ազգային ինքնության պահպանման ու արժեքներ սերմանելու,

¹⁶⁹ Հայ սփյուռք, հանրագիտարան, էջ 39:

հավաքական հիշողության մաս դարձնելու դժվարությունների հետ:

Հետխորհրդային տարածքի հայ համայնքներ:

Հայկական համայնքները նախկին հետխորհրդային երկրներում առավել մեծ խմբերով հաստատվել են ցեղասպանությունից հետո, ինչպես նաև Խորհրդային միության տարիներին, երբ պատերազմում հաղթանակած ԽՍՀՄ-ը արտաքին աշխարհի համար դիտարկվում էր կայուն և հզոր կառույց:

Ռուսաստանում հայերի թիվը հատկապես մեծացավ Սպիտակի երկրաշարժից և ադրբեջանական ջարդերից հետո: Ներկայումս ՌԴ-ի համայնքը հայկական սփյուռքում ամենաստվարն է՝ շուրջ 2600000: Պատմական ամենատարբեր շրջաններում հայերը մեծ ներգրավվածություն են ունեցել Ռուսաստանի ռազմական, քաղաքական, գիտական, մշակութային և տնտեսական ոլորտներում, այնուամենայնիվ արդի պայմաններում Ռուսաստանի հայկական սփյուռքի և Հայաստանի միջև գերակայում են աշխատանքային և բիզնես կապերը: Թեև հայերը Ռուսաստանում ունեն բավական սովոր համայնքներ, համարվում են ազգային, կրոնական առանձնահատկություն ունեցող բնակչություն: Ընդունող երկրի հետ համագործակցությունն իրագործվում է հատկապես համայնքային զարգացման ծրագրերի, մշակութային և կրթական մակարդակում: Մինչդեռ հայ համայնքի մարդկային կապիտալի գիտական, մշակութային, ֆինանսական չափումները Հայաստան-Ռուսաստան կապերի և անխոչընդոտ մարդկային տեղաշարժերի պայմաններում շատ ավելի մեծ ներուժ ունեն:

Ինքնության պահպանման տեսանկյունից կարելի է արձանագրել, որ Ռուսաստանի հայ համայնքներում լեզվի և կրոնի ազատության պայմաններում այնուամենայնիվ վտանգ-

ված է հայ ինքնությունը, քանի որ նախապատվությունը չի տրվում հայկական դպրոցներին, իսկ միջհամայնքային կապերը հեռու են համագործակցային համարվելուց:

Հուսադրող չէ նաև պատկերը միջինասիական երկրներում, որտեղ բացակայում է ոլորտային համագործակցությունը սփյուռքի և ընդունող երկրի միջև: Հայերը չունեն նաև տվյալ երկրներում հասարակական կյանքի մասնակցության որևէ լծակ: Իրավիճակն էլ ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ միջինասիական երկրներում հայ երեխաները հաճախում են ռուսական դպրոցներ, իսկ հաղորդակցության հիմնական լեզուն ռուսերենն է: Միջինասիական երկրներում ամենախոշորը Ուզբեկստանի հայ համայնքն է (80000 հայ), սակայն նույնիսկ այդ երկրում հասարակական, քաղաքական, գիտական կամ մշակութային համագործակցության որևէ մնայուն և տևական արդյունք չի գրանցվել:

4.2. Ինստիտուցիոնալ ներուժը

Սփյուռքի ներուժի գնահատման նպատակով հարկ է անդրադառնալ այն ինստիտուցիոնալ միավորներին, որոնք պետք է իրագործեն հետևյալ առաքելությունները՝

1. ընդունող երկրում սփյուռքի միջհամայնքային կապերի հաստատում,
2. սփյուռք-ընդունող երկիր փոխհարաբերությունների կարգաբերում,
3. սփյուռքի տարբեր համայնքների միջև համագործակցության խթանում,
4. հայրենիք-սփյուռք փոխգործակցության զարգացում և ընդլայնում,

5. միջազգային հարաբերություններում հայրենիքի գործունեությանն աջակցում,

6. հայրենիք-ընդունող երկիր կապերի զարգացմանն աջակցում:

Ընդ որում, այդ գործընթացներն ունեն փոխապայմանավորող բնույթ և պետք է իրագործվեն աստիճանական, զուգահեռ զարգացման սկզբունքով: Սփյուռքի բնականոն գործունեության համար առաջնային կարևորություն ունի տվյալ երկրի ներսում միջհամայնքային կապերի հաստատումը՝ տարբեր ոլորտային կառույցների աջակցությամբ, խթանելով ինքնության պահպանումն ու բարելավելով սփյուռքի պայմանները և հիմք նախապատրաստելով ընդունող երկիր հետ հարաբերությունների կարգավորման համար: Ընդ որում՝ ընդունող երկրի հետ հարաբերությունները պետք ծավալվեն քաղաքական, կրթական, մշակութային, տնտեսական և այլ ոլորտներում, ինչի վերջանական արդյունքը պետք է լինի տվյալ համայնքի քաղաքացիական և քաղաքական իրավունքների ու կարողությունների ընդլայնումը մի կողմից և հայրենիքի խնդիրների լուծմանը նպաստելը՝ մյուս կողմից: Իսկ դա առավել առարկայական և ինտիտուցիոնալ բնույթ պետք է կրի համապատասխան նպատակաուղղվածություն և սկզբունքներ ունեցող կառույցների ստեղծմամբ: Մարդկային գործունեության համար նշանակալի որոշումներում ներդրում կատարելով՝ սփյուռքը կարևորություն է ձեռք բերում ընդունող երկրում՝ աստիճանաբար ընդլայնելով քաղաքական ներկայությունն ու ներգրավվածությունը: Սփյուռք-ընդունող երկիր հարաբերությունները նման պարագայում կտեղափոխվեն որակական նոր մակարդակ՝ սփյուռքին հնարավորություն ընձեռելով ստեղծել նպատակային և աշխարհագրական տեսանկյունից առավել մեծ ընդգրկում ունեցող կառույցներ: Այդ կառույցներն ունեն

ցանցային բնույթ և համաշխարհային մակարդակում սփյուռքը մոբիլիզացնելու գործառույթ: Նման կառույցների գոյությունն արդեն իսկ կվկայի սփյուռքի կայացածության մասին՝ նպաստելով սփյուռքի անդրազգային գործունեությանը: Այս համատեքստում կարևորվում են հատկապես քաղաքական բնույթ ունեցող ցանցային կառույցները: Հարկ է նշել, որ հայրենիքի հետ ինստիտուցիոնալ համագործակցության ընդլայնումը պետք է իրագործվի ցանցային համակարգի զարգացման հետ: Այս պարագայում հայրենիքը պետք է ստանձնի կենտրոնաձիգ ուժի դերակատարություն, որը զաղափարախոսության մակարդակում համախմբող դեր պետք է ունենա ողջ սփյուռքի համար:

Չժխտելով կրթական, մշակութային, գիտական, սպորտային, տնտեսական և այլ բնույթի կառույցների կարևորությունը թե՛ սփյուռքի կենսագործունեության և զարգացման, թե՛ հայրենիքում ունեցած ներդրումների հարցում՝ հարկ է նշել, որ հայրենիք-սփյուռք հարաբերություններում առանձնակի նշանա-կություն ունեն քաղաքական կառույցները: Եթե սփյուռքի գործունեության վերջնական նպատակադրումը հայրենքում առկա ներքին և արտաքին խնդիրների ցանկալի լուծմանն օժանդակումն է, ապա դրանց լուծման մեջ մեծ է քաղաքական կառույցների դերն ու ներդրումը: Իհարկե, հասարակական կյանքի այլ ոլորտներում խնդիրները կարող են լուծվել անհրաժեշտ ներդրումների իրականացման դեպքում: Սակայն ակնհայտ է, որ դրա ապահովման և արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ պայման է համապատասխան քաղաքական լուծումների և բարենպաստ միջավայրի ձևավորումը: Դրան էլ, իր հերթին, հնարավոր է հասնել հայրենիքի և սփյուռքի համապատասխան գիտելիքներ ու փորձ ունեցող հատվածների հետ ինստիտուցիոնալացված հարա-

բերություններ, արդյունավետ քաղաքական ցանցային կառույցներ ու հստակ մշակված ռազմավարություն ու գաղափարախոսություն ձևավորելու դեպքում՝ ինչը կօգնի առաջ մղել ինչպես հայրենիքի ներքաղաքական հարցերի լուծումն, այնպես էլ երկրի շահերից բխող լուծումները միջազգային քաղաքական ասպարեզում:

Քանակական ցուցանիշներով գնահատելիս կարող է թվալ, որ հայկական սփյուռքի ինստիտուցիոնալ ներուժը բավական մեծ է, քանի որ ներկայումս գոյություն ունեն սփյուռքի 30 հազարից ավելի կառույցներ, որոնցից 44-ը համահայկական բնույթ ունեն¹⁷⁰: Սակայն, համահայկական կառույցներից շատերն ունեն բարեգործական և մշակութային ուղղվածություն, ինչի արդյունքում սփյուռքի քաղաքական ներգրավվածությունը զգալիորեն ցածր է: Հայկական սփյուռքի ինստիտուցիոնալ ներուժի գնահատման նպատակով ստորև կներկայացվեն խոշորագույն կառույցներն ու դրանց գործունեության ոլորտները՝ հետևյալ դասկարգմամբ

1. Համահայկական քաղաքական ինստիտուտներ,
2. Առանձին երկրներում գործող քաղաքական կազմակերպություններ,
3. Բարեգործական, հասարակական խոշորագույն համահայկական կառույցներ:

4.2.1. Համասփյուռքյան քաղաքական ինստիտուտներ

1920թ. նոյեմբերին Հայաստանի Հանրապետությունում ռուսական Կարմիր բանակի աջակցությամբ իշխանության եկան բոլշևիկները՝ հալածանքներ սկսելով մինչ այդ իշխանու-

¹⁷⁰ Հակոբյան Ն. Հ., նշվ. Աշխ., էջ 155.

թյուն ձևավորած քաղաքական ուժերի դեմ, որոնց ղեկավար կազմերը նախ հեռացան Պարսկաստան, ապա՝ այնտեղից էլ այլ երկրներ: Հետագայում հայկական ավանդական կուսակցությունների (այդպես կոչվեցին հայրենիքից հեռացած քաղաքական ուժերը) ղեկավար կենտրոնները հիմնավորվեցին Միացյալ Նահանգներում և Լիբանանում, թեև, հարկ է նշել, որ ազդեցիկ դերակատարություն ունեին նաև այլ, օրինակ, Ֆրանսիայի և Իրանի կազմակերպությունները: Ավանդական կուսակցությունների տեղափոխվելն արտասահման ունեցավ երեք հիմնական հետևանք սփյուռքի ինքնակազմակերպման վրա.

1. Ձևավորված կուսակցական կառույցների առկայությունն ու կազմակերպական աշխատանքի փորձը հնարավորություն տվեցին դրանք անմիջապես օգտագործել որպես ինստիտուցիոնալ հիմք՝ ցեղասպանության հետևանքով տարբեր երկրներում ձևավորված հայկական գաղութների ներքին և արտաքին կազմակերպման համար,

2. Նոր ձևավորվող սփյուռքահայ կառույցների ճնշող մեծամասնությունը ստեղծվեց կուսակցություններին կից՝ դրա շնորհիվ արագ կայանալով, սակայն նաև չկարողանալով խուսափել հատվածական շահեր հետապնդող անառողջ մրցակցությունից,

3. Դրա արդյունքում նեղ կուսակցական նպատակներ հետապնդող կառույցները չեն դարձել մասնագիտական ներուժի համախմբման կենտրոններ, որոնց կարիքը շատ ուներ ինչպես սփյուռքը, այնպես էլ Հայաստանը՝ անկախության վերականգնումից հետո:

Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն: Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը (ՄԴՀԿ) հիմնադրվել է դեռևս 1887 թվականին Ժնևում: Կուսակցության

նպատակներն են եղել արևմտահայերի աջակցությունը և հայապահպանությունը, իսկ գործունեության հիմնաքարը՝ Հայկական հարցը: Օսմանյան կայսրության տարիներին ակտիվորեն հանդես են եկել Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջով: Մակայն ցեղասպանության ընթացքում թուրքական իշխանությունները ջաղջախեցին երկրում գործող հնչակյան կազմակերպությունները՝ ղեկավար գործիչներին դարձնելով ոճրի առաջին թիրախը: Առաջին աշխարհամարտի տարիներին հնչակյանները մասնակցել են ռուսական բանակում հայերի կազմակերպմանը, այնուհետև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո ԽՍՀՄ-ի տարածքում գործող հնչակյան կազմակերպությունները լուծարվել են: Մակայն, հաղթահարելով խորհրդային կարգերի հանդեպ ունեցած անվստահությունը, 1920 թվականից սկսած հնչակյանները հանդես են եկել ՀԽՍՀ-ին օգնելու կոչերով: Երկրորդ համաշխարհայինի տարիներին հնչակյանները պայքարել են ֆաշիզմի դեմ¹⁷¹:

Մոտ մեկուկես դար տևած գործունեության ընթացքում հնչակյանները կազմակերպություններ են ստեղծել աշխարհի տարբեր երկրներում: Գործունեության նպատակը եղել է հայապահպանությունը, ցեղասպանության ճանաչումը, Արցախի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումը: Պետք է արձանագրել, որ ինչպես այդ, այնպես էլ Հայաստանի պետականության ձևավորման և կայացման հարցում արդյունքները համեստ են: Քաղաքական հիմնախնդիրներից զատ հնչակյանները կարևորում են սփյուռքի ներդրումը բարեգործական, կրթական, մշակութային, մարզական և այլ ոլորտ-

¹⁷¹ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն.
<http://www.hunchak.org.au/aboutus/intro.html>. 20. 12. 17

ներում: Հնչակյանները ժամանակի ընթացում ստեղծել են նաև պարբերականներ, որոնք լուսաբանում են կուսակցության գործունեությունը և հայկական հիմնախնդիրները՝ «Արարատ» (Լիբանան), «Մասիս» (ԱՄՆ), «Ջահակիր» (Եգիպտոս) և այլն¹⁷²:

Ռամկավար ազատական կուսակցություն: Ռամկավար ազատական Կուսակցությունը (ՌԱԿ) ստեղծվել է 1921 թվականին Կոստանդնուպոլսում: Կուսակցությունը, որպես ժողովրդավարական քաղաքական ուժ, նպատակ ուներ հասնելու Հայ դատի քաղաքական և դիվանագիտական լուծմանը և անկախ ու միասնական պետականության ստեղծմանը: ՌԱԿ-ի կողմից նշանակալի էր հատկապես Թեքեյան մշակութային կենտրոնի և մեծ թվով այլ բարեգործական, մշակութային կրթական կազմակերպությունների ստեղծումը: 1968 թվականից ՌԱԿ-ի հովանավորությամբ գործում է նաև Ամերիկայի հայ իրավանց խորհուրդը, որի նպատակն է հասնել Հայկական հարցի լուծմանը: 20-րդ դարի երկրորդ կեսին ոչ գաղափարական բնույթ կրող պատճառներով կուսակցությունը պառակտվեց, ինչը զգալիորեն նվազեցրեց կուսակցության ազդեցությունը: Սակայն 2000 թվականին ՌԱԿ-ի ընդհանուր պատգամավորական ժողովն ավարտվեց կուսակցության վերամիավորմամբ: ՌԱԿ-ն ունի մի շարք լրատվամիջոցներ տարբեր երկրներում՝ «Ապագա» (Փարիզ), «Պայքար» (Բոստոն), «Նոր Օր» (Լոս Անջելես), «Ապագա» (Մոնրեալ) «Ազգ» (Երևան) և այլն¹⁷³:

Հայ հեղափոխական Դաշնակցություն կուսակցություն: Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) ստեղծվել է 1890 թվականին Թիֆլիսում և գործունեության հիմքն է եղել

¹⁷² Նույն տեղում:

¹⁷³ Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 724-725:

Հայկական հարցի լուծումը: 1918թ. Հայաստանի անկախության վերականգնումից հետո ՀՅԴ-ը Հայաստանի առաջին Հանրապետության առաջատար քաղաքական ուժն է եղել: Հայկական հարցի լուծման հարցում ՀՅԴ-ն մեծ ջանքեր է գործադրել արևմտյան երկրների աջակցությունը ստանալու հարցում: Մինչ Հայաստանի անկախության վերականգնումը 1991թ. Ցեղասպանության ճանաչման հետ կապված ջանքերի ճնշող մասը պատկանում է ՀՅԴ-ին: Հայրենիք վերադառնալուց հետո այդ կուսակցությունն ամենակենսունակը եղավ ավանդական կուսակցությունների մեջ: 1995թ. արգելվեց կուսակցության գործունեությունը Հայաստանում, ղեկավար կազմը քանտարկվեց՝ մեղադրվելով ահաբեկչություն նախապատրաստելու մեջ: Ակտիվ քաղաքական գործունեությամբ ՀՅԴ-ն վերսկսել է զբաղվել 1998 թվականին տեղի ունեցած իշխանափոխությունից հետո, երբ հանվել են արգելքները: Դրան հաջորդած խորհրդարանական բոլոր ընտրություններում կուսակցությունը ստացել է մոտավորապես ձայների 7 տոկոսը՝ հաղթահարելով անցումային շեմը:

Ներկայումս կուսակցության հովանու ներքո Երևանում գործում է «Երկիր» հեռուստաալիքը, մի շարք բարեգործական, մշակութային, երիտասարդական կազմակերպություններ, հրատարակվում են թերթեր՝ «Հայրենիք» (Բոստոն), «Ալիք» (Թեհրան), «Ասպարեզ» (Լոս Անջելես), «Հորիզոն» (Մոսկեա), «Երկիր» (Երևան) և այլն¹⁷⁴:

Հայ Դատի Հանձնախումբ (ՀԴՀ): Հայ Դատի հանձնախումբը ստեղծել է ՀՅԴ-ն, 1941 թվականին: Կազմա-

¹⁷⁴ Հայ հեղափոխական Դաշնակցություն: <http://www.arfd.info/hy/?p=175>, 20.12.17

կերպությունը հիմնվեց՝ հաշվի առնելով հասկապես երկու գործոն. Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումը բարենպաստ հող ստեղծեց նորովի արծարծելու Հայկական հարցն ու Ցեղասպանության ճանաչման խնդիրը, և, քանի որ երկրորդ համաշխարհայինից հետո Հայաստանն ի վիճակի չէր դա անել, ապա նախաձեռնությունը ստանձնեց սփյուռքը՝ ի դեմս ՀՅԴ-ի: Այժմ գործում են տարածաշրջանային, շրջանային, նահանգային, քաղաքային մակարդակի Հայ դատի մոտ 70 գրասենյակ ավելի քան 30 երկրներում: Հանձնախմբի գործունեության առանցքը Հայոց ցեղասպանությունը դատապարտող իրավական ակտերի ընդունումն է:¹⁷⁵

4.2.2. Առանձին երկրներում գործող կազմակերպություններ

Ամերիկայի հայ ազգային կոմիտե: Ամերիկայի հայ ազգային կոմիտեն հայ-ամերիկյան հիմնաքարային քաղաքական կառույցներից է: Ունենալով մի շարք գրասենյակներ ԱՄՆ-ի տարածքում և մասնաճյուղեր ողջ աշխարհում՝ համակարգված աշխատանքի արդյունքում կազմակերպությունը նպատակ ունի աջակցելու հայ-ամերիկյան համայնքներին մի շարք հարցերում:

Հիմնական նպատակներն են՝

- Մեծացնել հասրակական իրազեկվածությունն՝ ի նպաստ ազատ և անկախ Հայաստանի,
- ԱՄՆ-ի քաղաքական համակարգում ներկայացնել Ամերիկայի հայ համայնքների շահերը,
- Ներկայացնել հայ-ամերիկյան համատեղ տեսակետները հանրային կառավարման հարցերով՝ մինևույն ժամանակ

¹⁷⁵ Հայ Դատի Հանձնախումբ: http://ancnews.info/?page_id=837, 20. 12. 17

կապող օղակ հանդիսանալով համայնքի և վերջինիս կողմից ընտրված պաշտոնյաների միջև:

Կազմակերպությունը գործունեություն է ծավալում քաղաքական այն հարթակներում, որոնք մեծապես առնչվում են հայության շահերին: Կառույցը, մասնավորապես, նպատակ ունի ամրապնդելու Հայաստանի պետականությունը, աջակցելու Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի իրացմանը և այդ նպատակով մեծացնելու ԱՄՆ-ի օժանդակությունը, ինչպես նաև նպաստելու Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Հարկ է նշել, որ կառույցն ակտիվորեն մասնակցում է դաշնային, նահանգային և համայնքային մակարդակում իրականացվող ընտրական գործընթացներում՝ իրազեկելով ընտրված պաշտոնյաներին հայ-ամերիկյան դիրքորոշումների վերաբերյալ¹⁷⁶:

Ամերիկայի հայկական համագումար (ԱՀՀ):

Համագումարը ստեղծվել է 1972 թվականին և համարվում է հայկական շահերը ներկայացնող խոշորագույն կառույցներից մեկը, որը նույնպես նպաստում է հասարակական իրազեկվածությանը հայկական խնդիրների և առաջնահերթությունների վերաբերյալ, ինչպես նաև աջակցում է Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում մարդասիրական և զարգացման ծրագրերին: Կազմակերպության շրջանակներում գործում է նաև Հայ-ամերիկյան գործողությունների հանձնաժողովը, որը ԱՄՆ Կոնգրեսում հակակշռող գործունեություն է ծավալում հակահայկական քարոզչության դեմ¹⁷⁷:

¹⁷⁶ The Armenian National Committee of America (ANCA).

<https://anca.org/about-anca/profile/.20.12.17>.

¹⁷⁷ Armenian Assembly of America. <https://armenian-assembly.org/about/.20.12.17>.

Հայական սփյուռքի ինստիտուցիոնալ համակարգում գործում են եվրոպական երկու համահայկական քաղաքական կառույցներ՝ Եվրոպայի հայկական միությունների ֆորումը և Եվրոպայի հայերի համագումարը: Ֆրանսիայում նույնպես գործում է համահայական մեկ քաղաքական կառույց՝ Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդը: Շվեյցարիայում գործում է ևս երկու համահայական քաղաքական ինստիտուտ՝ Շվեյցարիա-Հայաստան ընկերակցությունը և Շվեյցարահայ միությունների ֆորումը: Կանոնադրում, Գերմանիայում և Մեծ Բրիտանիայում գործում են մեկական համահայկական քաղաքական կառույցներ, համապատասխանաբար՝ Կանադական հայկական կոնգրեսը, Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը, Բրիտանա-հայկական խորհրդարանական խումբը: Այդուհանդերձ, այդ կազմակերպությունների շոշափելի աշխատանք դժվար է նկատել:

Ռուսաստանում գործում է համահայկական մեկ կազմակերպություն՝ Ռուսաստանի հայերի միությունը, որի գործունեությունը հեռու է քաղաքական համարվելուց: Այնուամենայնիվ, 2003 թվականին¹⁷⁸ վերջինս ստանձնեց Համշխարհային հայկական կոնգրես ստեղծելու հավակնոտ նախաձեռնությունը, որը նպատակ ուներ մոբիլիզացնելու սփյուռքում գործող ինստիտուցիոնալ ուժերը, սակայն կառույցի գործունեությունը առավել մեծ հաջողությամբ ծավալվեց բարեգործության ոլորտում:

¹⁷⁸ Համշխարհային հայկական կոնգրեսի պատմություն, <http://armcongress.am/պատմությունը>. 21. 12. 17.

4.2.3. Բարեգործական, հասարակական խոշորագույն համահայկական կառույցներ

Հայ օգնության միություն (ՀՕՄ): Հայ օգնության միությունը հիմնադրվել է դեռևս 1910 թվականին Ելու Յորքում և մինչ օրս շարունակում է իր արդյունավետ գործունեությունը բարեգործական, կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական աջակցության ոլորտներում: ՀՕՄ-ը որպես մարդասիրական համահայկական միություն, ունի մասնաճյուղեր 27 երկրներում և 1970 թվականից հանդիսանում է ՄԱԿ-ի Տնտեսական ու Սոցիալական Խորհրդի անդամ: Հայստանում իրականացվող ծրագրերի իրագործման համար կազմակերպությունը սրամադրել է շուրջ 30 մլն դոլար:¹⁷⁹

Հայ օգնության ֆոնդ (ՀՕՖ): Հայ օգնության ֆոնդը համեմատաբար առավել երիտասարդ կազմակերպություն է: Ստեղծվել է անմիջապես Սպիտակի երկրաշարժից հետո, 1988 թվականին: Ֆոնդը իր աջակցությունը կենտրոնացնում է սոցիալական, տնտեսական, մարդասիրական օգնության, երեխաների պաշտպանության, առողջապահության և կրթության ուղղություններով: Իր ստեղծման օրվանից ի վեր կազմակերպության հովանու ներքո իրականացվել են շուրջ 290 մարդասիրական, հասարակական, կրթական, մշակութային ծրագրեր իսկ դրանց շրջանակներում հատկացված դրամական միջոցները կազմել են 350 մլն դոլար¹⁸⁰:

Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ): Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը ստեղծվել է 1906 թվականին Կահիրեում՝ նպատակ ունենալով ապահովել հայ ժողովրդի հոգևոր և մշակութային զարգացումը:

¹⁷⁹ Հայ Օգնության Միություն, <http://arsarmenia.org/պատմություն.21.12.17>

¹⁸⁰ Հայ օգնության ֆոնդը, <http://farusa.org/about/.21.12.17>

1921 թվականին կազմակերպության կենտրոնական գրասենյակը տեղափոխվում է Փարիզ: 1921թ-ին Միության նստավայրը Կահիրեից տեղափոխվում է Ֆրանսիա:

ՀԲԸՄ-ի գործունեության առանցքային նպատակն է եղել կրթական, մշակութային և բարեգործական ծրագրերի միջոցով պահպանել և փոխանցել հայ ինքնությունը: 1937թ. խորհրդային կառավարության որոշմամբ Հայաստանում կազմակերպությունը լուծարվել է, իսկ 1990-ին վերսկսելով իր գործունեությունը Հայաստանում՝ կազմակերպությունն այն չի սահմանափակել միայն մարդասիրական հատկացումներով, այլ իրականացրել է նաև երկրի զարգացմանը նպաստող մի շարք կրթական, մշակութային, առողջապահական ծրագրեր: Ներկայումս կառույցն ունի 74 շրջանակային հանձնաժողովներ, մասնաճյուղեր, գործընկեր կազմակերպություններ, 28 երիտասարդ արհեստավարժների համախմբումներ, դպրոցներ, մշակութային, գեղարվեստական, մարզական ու սկաուտական խմբեր:¹⁸¹ Հարկ է նշել, որ մինչև 2003 թվականը Ղարաբաղին հատկացված օժանդակությունը հասավ շուրջ 60 մլն դոլարի իր կազմակերպության դրամագլուխը կազմեց մոտ 250 մլն դոլար¹⁸²:

Հայաստան համահայկական հիմնադրամ: Հայաստան համահայկական հիմնադրամը ստեղծել է 1992 թվականին ՀՀ նախագահի հրամանագրով: Կազմակերպության նպատակն է համախմբել Հայաստանի և աշխարհասփյուռ հայերին հաղթահարելու Հայստանում և Արցախում առկա դժվարությունները: Կազմակերպությունն ունի 19 կից և գործընկեր կազմակերպու-

¹⁸¹ Երոդեկյան Հ., ՀԲԸՄ հարյուրամյա ազգային ծառայություն: <http://www.agbu.am/am/about-2/agbu-history-1>. 21.12.17

¹⁸² Մելքոնյան Է., Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Պատմություն: Մուղնի Հրատ., Եր., 2005, էջ 529:

թյուններ աշխարհի 17 երկրներում, այդ թվում՝ ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ավստրիա, Շվեյցարիա և այլն: 1992 թվականից սկսած, պաշտոնական տվյալների համաձայն հիմնադրամը իրականացրել է ավելի քան 330 մլն դոլար արժողությամբ 1100 ծրագիր Հայաստանում և Արցախում¹⁸³:

Հայկական սփյուռքի ինստիտուցիոնալ ներուժի սեղմ դիտարկումը վկայում է, որ համագործակցությունն առավել շոշափելի հաջողություններ է արձանագրել մարդասիրական, հասարակական և մշակութային ոլորտներում: Այդ հարթություններում համագործացության ձեռքբերումներն ունեն տևական դրսևորումներ, քանի որ բարեգործական, մարդասիրական և հասարակական աջակցության կազմակերպությունների առաջադրած նպատակներն իրագործելի են եղել և ներդաշնակ մարդկային, ֆինանսական, կազմակերպական, մասնագիտական հնարավորություններին: Մինչդեռ այլ է ինդիքը քաղաքական ուղղվածություն ունեցող համահայկական սփյուռքյան կառույցների պարագայում: Սակայն դրանց գործունեության գնահատումից առաջ հարկ է համառոտ անդրադառնալ այն համազգային հիմնախնդիրներին, որոնց լուծմանը պետք է ուղղված լիներ այդ կառույցների աշխատանքը:

¹⁸³ Հայաստան համահայկական հիմնադրամ:
<http://www.himnadram.org/en/our-mission.21.12.17>

4.3. Հիմնախնդիրների լուծման վրա հայկական սփյուռքի ազդեցության հնարավորություններն ու արդյունավետությունը

Որպես համազգային հիմնախնդիրներ ստորև դիտարկվում են՝

- Հայաստանի պետականության կայացումն ու զորացումը,
- Ինքնորոշման իրավունքի հիման վրա Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը,
- Հայ ինքնության պահպանումը,
- Ցեղասպանության ճանաչումը:¹⁸⁴

Ակներև է, որ հայապահպանությանն ու Հայաստանի պետականության զարգացմանն ուղղակիորեն առնչվող այդ խնդիրներից յուրաքանչյուրի լուծումը չափազանց բարդ է, առավել ևս՝ Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնման ժամանակաշրջանի բացառիկությամբ պայմանավորված: Այդ ժամանակաշրջանը բնորոշվում է երեք համակարգային տրանսֆորմացիաների միաժամանակյա ընթացքով՝

- Համաշխարհային՝ հին աշխարհակարգի փլուզում և նորի ձևավորման ջանքեր,
- Համամարդկային՝ գլոբալացման շարունակաբար արագացող գործընթաց,
- Հետխորհրդային՝ փլուզված կոմունիստական վարչակարգի փոխարեն բնականոն զարգացող վարչակարգի ձևավորման փորձ՝ եզակի դեպք մարդկության պատմության մեջ:¹⁸⁵

¹⁸⁴ Թորոսյան Ս., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Եր.: Գիտություն հրատ., 2006թ.:

¹⁸⁵ Նույն տեղում :

Այս բացառիկ բարդ իրավիճակում նման դժվար խնդիրներից յուրաքանչյուրի լուծումը պահանջում է ինստիտուցիոնալ մոտեցում, իրավական համապատասխան շրջանակների մշակում և գիտականորեն հիմնավորված ռազմավարության առկայություն, ինչպես նաև համազգային կարողությունների համախմբում:

Հաշվի առնելով հայկական սփյուռքի, հատկապես՝ արևմտյան համայնքների, ներկայացուցիչների գիտելիքներն ու փորձը՝ վերոնշյալ խնդիրների մոդելավորման և լուծումների մշակման մեջ նշանակալի կարող էր(ե) լինել սփյուռքի ներգրավվածությունը, որի գործունեության վերջնական նպատակը պետք է լինի ոչ միայն համայնքային մակարդակում բարեկեցություն ապահովելն ու հայրենիքի հետ բարեգործական և մշակութային կապերի խորացումը, այլև մասնակցությունը համազգային ու համապետական հիմնախնդիրների լուծմանը: Ըստ այդմ, հարկ է հակիրճ ներկայացնել այդ հիմնախնդիրներից յուրաքանչյուրի հետ կապված վիճակն ու հիմնական անելիքները:

Հայաստանի պետականության կայացում և զորացում: Այս հիմնախնդիրն ունի երկու դրսևորում՝ ներքաղաքական և արտաքին քաղաքական:

ԽՍՀՄ փլուզման արդյունքում առաջացած նորանկախ երկրները հայտվել էին այնպիսի իրավիճակում, որն իր բնույթով աննախադեպ էր համաշխարհային պատմության մեջ: Իրավիճակն այլ կերպ, քան համակարգային ճգնաժամ, դժվար է գնահատել: ԽՍՀՄ փլուզմամբ միանգամայն անպիտան գտնվեցին հասարակական կյանքի կազմակերպման համար կենսական բոլոր համակարգերը: Նման իրավիճակում նորանկախ երկրները պետք է հիմքից վերակառուցեին սոցիալ-տնտեսական, քաղաքական բոլոր կառույցները, որոնք հիմնված

կլիներին արժեքային նոր մոտեցումների հիման վրա ստեղծված հայեցակարգերի վրա: Իրենց հետագա կենսագործունեությունն ապահովելու համար նորանկախ երկրները պետք է սահմանեին քաղաքական կողմնորոշիչներ և ըստ դրանց հիմնեին այնպիսի կառույցներ և հարաբերություններ, որոնք կապահովեին պետության հետագա բնականոն ընթացքն ու զարգացումը:¹⁸⁶

Հայաստանը խնդիր ուներ ստեղծելու կառավարման արդյունավետ ժողովրդավարական համակարգ և ընտրելու ինտեգրման այն միջավայրը, որը նպատակահարմար կլիներ ժողովրդավարության զարգացման և պետականության կայացման ու զորացման համար: Մակայն պետականության կայացման գործընթացը միազիծ չէր: Սկզբում ձևավորվեց ձևական բազմակուսակցական համակարգ՝ կուսակցությունների համախումբ, որոնք աղոտ են պատկերացնում ոչ միայն ժողովրդավարական համակարգն ընդհանրապես, այլև այդ սկզբունքների հիման վրա կուսակցության գործունեությունը: Ինչպես ողջ հետխորհրդային տարածքում, խորհրդային բարքերի իներցիայով պահպանվում էր իշխանության անձնավորվածությունը: Ավելի քան քառորդ դար անց Հայաստանի համար դեռևս առաջնային է պետական համակարգի կայացման խնդիրը: 2015թ. տեղի ունեցան երկրորդ սահմանադրական փոփոխությունները և նախագահական համակարգից անցում կատարվեց խորհրդարանական կառավարման համակարգի, որի վերաբերյալ առկա հասարակական ընկալումների և դրա կիրառման հետևանքների իրական պատկերը դեռևս աղոտ է:

Յուրաքանչյուր նորանկախ երկիր քաղաքական, հասարակական և տնտեսական կայունությունն ապահովող գործուն մեխանիզմների բացակայությամբ առաջացած մարտահրա-

¹⁸⁶Թորոսյան Տ., Հասարակական... , նշվ. աշխ, էջ 12:

վերները հաղթահարելու և կայուն համակարգեր ստեղծելու նպատակով պետք է որոշեր, թե որն է իր տեղը համաշխարհային ասպարեզում և որոնք պետք է լինին այն արտաքին քաղաքական ուղենիշները, որոնք կնպաստեին պետության զարգացմանը: Արդի միջազգային հարաբերությունների համակարգում միջազգային հանրությանն ինտեգրման քաղաքականությունը համարվում է պետության արտաքին հարաբերությունների առանցքը¹⁸⁷, քանի որ այն ուղի է հարթում դեպի բազմակող համագործակցություն՝ ապահովելով պետության զարգացման համար առաջնային նախապայմաններ: Ինտեգրման միջավայրի ընտրությունը ենթադրում էր արտաքին ինքնանույնացում, որը իրագործելի է միայն ներքին ինքնանույնացման՝ ինքնության արդիականացման արդյունքում:

Հայաստանը խնդիր ուներ վարելու այնպիսի արտաքին քաղաքականություն, որը կնվազեցնի արտաքին քաղաքական կախվածության մեջ հայտնվելու վտանգները: Այդ նպատակով Եվրասիական Միությանն անդամակցությունից երկու տարի անց՝ 2017 թվականին, Արևելյան գործընկերության շրջանակներում Հայաստանը ստորագրեց ԵՄ-ի հետ համապարփակ և ընդլայնված գործընկերության մասին համաձայնագիրը: Դա հատկանշական քայլ էր Հայաստանի ինքնիշխանության դրսևորման և փոխլրացնող քաղաքականություն իրականացնելու հարցում, սակայն միմյանցից արմատապես տարբերվող ինտեգրման երկու միջավայրերի համադրման տեսական արդյունավետությունը դեռևս գործնական արդյունքներով հաստատման կարիք ունի:

Մփյուռքի ակտիվ մասնակցությունն ինչպես այս, այնպես էլ շատ ավելի վաղ փուլում գտնվող ազգային ինքնու-

¹⁸⁷Թորոսյան Ս., Հասարակական . . . , նշվ. աշխ., էջ 237:

թյան արդիականացման և ազգային ինքնագիտակցութեան վերածննդի նպատակ հետապնդող ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներին, մեծապես կօգնի ստեղծելու Հայոց պետականության գորացման համար անհրաժեշտ լիարժեք նախադրյալներ¹⁸⁸։ Միաժամանակ, դա կարևոր նշանակություն կունենա նաև հայապահպանության խնդրի տեսակետից։

Հայոց ցեղասպանությունն ճանաչման խնդիրը:

Ցեղասպանության իրավական ճանաչման խնդիրը կարևոր տեղ ունի Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում, սակայն, միաժամանակ, կրում է մեծ հուզական լիցք, հետևաբար պահանջում է վճռական, բայց լավ կշռադատված մոտեցում:

Անցած մեկդարյա ժամանակահատվածը վկայում է, որ ցեղասպանության ճանաչման գործընթացը մշտապես բախվել է քաղաքական շահերի հետ: Գրեթե ոչ ոք չի ժխտում ողբերգական իրադարձությունների իրական լինելը, այլ դիտարկվում է միայն որպես ցեղասպանություն դրանց որակման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը՝ նկատի ունենալով դրանից բխող հետևանքները: Պատահական չէ, որ մինչ այժմ մասնագիտական միջազգային մի քանի կառույցների տրամադրած կարծիքները հստակ պատասխան չեն տալիս, թե ինչ իրավական ուժ կարող է ունենալ ճանաչումը և ո՞ր ատյանը պետք է դա անի՝ առավել արդյունավետ լուծում ստանալու համար: Հետևաբար, պետք է դիտարկել հիմնախնդրի և իրավական, և քաղաքական բաղադրիչներն ու դրանց համադրմամբ

¹⁸⁸ Թորոսյան Ս., Հասարակական . . . , նշվ. աշխ., էջ 18-20:

կառուցել արդյունավետ քաղաքականություն: Երկու բաղադրիչների համար էլ պետք է ունենալ հստակ, իրատեսական ծրագրեր, որոնք ունեն հիմնավորված նպատակա-դրումներ:

Մասնագիտական մակարդակով պետք է գնահատել իրավիճակն ու զարգացման հեռանկարները՝ ճիշտ ընտրելու համար նպատակները, անելիքներն ու ծախսերը:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ընթացքն ու հեռանկարները

Հակամարտության կարգավորման գործընթացը իրականացվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդությամբ: 1997-98 թվականներին միջնորդները ներկայացրեցին կարգավորման երեք նախագիծ, որոնք մերժվեցին այս կամ այն ձևաչափով: 2004 թվականին մեկնարկեց Ղարաբաղյան հակամարտության կարգավորման նոր փուլը՝ «Պրահայի գործընթացը», որի արդյունքում 2007 թվականին ներկայացվեց նոր՝ «Մադրիդյան սկզբունքներ» նախագիծը, որը հիմնված է միջազգային իրավունքի 3 սկզբունքների (ինքնորոշման իրավունք, տարածքային ամբողջականություն, ուժի և ուժի սպառնալիքի չկիրառում) վրա:¹⁸⁹ Դա նշանակում էր, որ փոխվում է բանակցությունների հիմքը՝ գործարքային հարացույցին փոխարինում է միջազգային իրավունքի երեք սկզբունքների վրա հիմնված շրջանակը: «Մադրիդյան սկզբունքներն» առաջին նախագիծն է, որը ներառում է միջազգային իրավունքի սկզբունքներ և ենթադրում էր Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակի իրավական լուծում: Իսկ իրավական լուծման դեպքում մեխանիզմը լիարժեք է և սպառիչ՝ ինքնորոշվող տարածքի

¹⁸⁹ Թորոսյան Ս., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. Հակամարտություններ, Բանակցություններ, Աշխարհաքաղաքականություն, Երևան, 2012, էջ 139:

քաղաքական կարգավիճակը որոշվում է այդ տարածքի բնակչության կամքի ազատ արտահայտմամբ, որով այդ ժողովուրդը կարող է ընտրել հետևյալ ձևերից որևէ մեկը

- Անկախ պետության հռչակում,
- Միացում այլ պետության հետ,
- Ասոցացված հարաբերություններ այլ պետության հետ,
- Ցանկացած այլ կարգավիճակ, որ կընտրի այդ ժողովուրդը:¹⁹⁰

Դա նշանակում է, որ այդ փաստաթուղթն արձանագրում է, որ դարաբաղյան հակամարտությունն ինքնորոշման հակամարտություն է և Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը պետք է ազատորեն ինքնորոշվի:

Բացի երեք սկզբունքներից, փաստաթուղթը սահմանում է նաև այն վեց տարրերը, որոնք պետք է դառնային բանակցությունների առարկա:

Հակամարտությունը մնում է չլուծված և ժամանակ առ ժամանակ շրջանառվում են բոլոր կողմերի փոխզիջումների անհրաժեշտության մասին կարծիքներ: Լեռնային Ղարաբաղը մինչ այժմ երեք զիջում արել է՝

- Համաձայնել է, որ ժամանակավորապես Հայաստանը ներկայացնի իր տեակետը Ադրբեջանի նախագահի հետ հանդիպումներում, թեև բանակցային փաստաթուղթը հստակորեն արձանագրել է ինքնորոշվող կողմի առկայությունը,

- Համաձայնել է քննարկել հանրաքվե անցկացնելու հնարավորության հարցը, թեև 1991թ. հանրաքվեն եղել անթերի,

- Համաձայնել է ոչ թե միանալ Հայաստանին, այլ հռչակել անկախ պետություն:¹⁹¹

¹⁹⁰ Torosyan T., Conflict Resolution in the Framework of International Law: Case of Nagorno-Karabakh, Tigran Mets Publ. House, 2010, p. 41.

Ադրբեջանը ոչ մի պատասխան զիջում չի արել և պարզ է, որ զիջումների գնալու կոչերի հասցեատերը Բաքուն է: Ակնհայտ է, որ Ադրբեջանը բանակցությունների արդյունքում չի համաձայնի Արցախի ազատ ինքնորոշմանը և հակամարտության միակ լուծումը, ինչպես վերջին երկու տասնամյակի ընթացքում մի շարք անգամներ տեղի է ունեցել այլ դեպքերում, միջազգային հանրության պարտադրած լուծումը պետք է լինի՝ միջազգային իրավունքի նորմերի հիման վրա: Դա լիովին համապատասխանում է հայկական կողմերի սպասելիքներին: Մակայն հակամարտության լուծումը դեռևս ձգձգվում է տարածաշրջանում աշխարհաքաղաքական պայքարի հետևանքով:¹⁹² Հետևաբար, պետք է հայրենիքի և սփյուռքի ջանքերի համադրման և մասնագիտական բարձրակարգ խմբի միջոցով լուծմանն առնչվող բոլոր ուղղություններով՝ կարգավիճակի որոշում, փախստականներ, ժամանակավոր միջազգային կառավարում, անվտանգության մեխանիզմների ապահովում և այլն, ծավալել ընդգրկուն աշխատանքներ՝ անհրաժեշտ արդյունք ապահովելու համար:

Հայկական սփյուռքն իր սփռվածությամբ և քանակական զգալի գերակշռությամբ մեծ ներուժ ունի համազգային, ինչպես նաև հայրենիքի ներքին և արտաքին խնդիրների լուծման, ազգային շահերը պաշտպանելու համար: Հայաստանի անկախության վերականգնումից հետո անցած ավելի քան քառորդ դարի ընթացքը վկայում է, որ արվածը հիմնականում վերաբերում է բարեգործությանն ու մշակութային ոլորտին:

¹⁹¹ Թորոսյան Ս., Հարավային Կովկասը օգոստոսյան պատերազմից հետո. Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, հայ-թուրքական հարաբերություններ, Եր., Տիգրան Մեծ հրատ., 2009թ.:

¹⁹² Torosyan T., Vardanyan A., The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, Geopolitics, 20(3): 1-24.

Հայրենիք-սփյուռք փոխհարաբերություններին պետք է անդրադառնալ առաջին հանրապետության ստեղծման տարիներից ի վեր, երբ Հասայատանում փորձեր արվեցին օգտագործելու սփյուռքի ներուժն՝ ի շահ Հայաստանի նորաստեղծ հանրապետության: Դրա մասին է վկայում այն, որ ՀՀ կառավարության 1920 թվականի որոշմամբ արտաքին գործերի նախարարության կազմում ստեղծվեց Գաղութային բաժին՝ նպատակ ունենալով ուսումնասիրել գաղթավայրերում առկա ներուժը, որը կծառայեր նորաստեղծ հանրապետության անվտանգությանը, զարգացմանն ու բարեկեցությանը¹⁹³: Համագործակցությունը հիմնվեց ֆինանսական օժանդակություն ստանալու անհրաժեշտության վրա: Երկրի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով կազմվեց հանգանակություն՝ «Անկախության փոխառություն» անվամբ: Ս. Վրացյանը փաստում է, հատկապես կարևոր էր, որ մեծահարուստ սփյուռքահայերը կտակում էին իրենց ունեցվածքը Հայաստանի Հանրապետությանն՝ ուղղելով այդ միջոցները պետականակերտման գործին¹⁹⁴: Մակայն, Հայաստան-սփյուռք համագործակցության այս փուլն ավարտվեց՝ սահմանափակվելով բարեգործական/ֆինանսական օժանդակություններով, որոնք այդպես էլ չծառայեցին պետականության կայացման առաքելությանը՝ պայմանավորված խորհրդային կարգերի հաստատմամբ: Հարկ է նշել, որ մարդասիրական

¹⁹³ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 546:

Եղիազարյան Ա., Անանյան Ս., Հովհաննիսյան Ա., Հովհաննիսյան Է., Հովսեփյան Ս., Վարդանյան Հ., Հայրենիք-սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը: Եր., ԵՊՀ հրատ, էջ 46.

¹⁹⁴ Վրացյան Ս., Խոսք ընդ ուսուցչի. Ս. Տ. Գևորգ Զ սրբ. կաթողիկոսին, ԵՊՀ աստ վաճաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», 2009, էջ 447-448:

հարթության վրա իրականացվող հայրենիք-սփյուռք փոխգործակցությունը կրեց շարունակական և գերակայող բնույթ:

Հետագայում՝ 1921 թվականին, ստեղծվեց Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ), որը նույնպես ստեղծվել էր աշխարհասփյուռ հայերի հետ կապեր հաստատելու նպատակով, ինչն ուղղված կլիներ սովյալ բնակչությանը օգնություն հատկացնելու և մեղմելու ծանր կենսապայմանները: Հատկանշական է, որ բարեգործական, մարդասիրական առաջնահերթություններով ստեղծված այս կառույցը դարձավ սփյուռքի քաղաքական մասնակցության առաջին հարթակը, երբ, չնայած քաղաքական և գաղափարախոսական տարբերություններին, սփյուռքի հայկական կուսակցությունները՝ ՄԴՀԿ, ՀՅԴ, ՌԱԿ հանդես եկան համագային միասնության համատեղ հայտարարությամբ: Վավերագիրը առաջինն էր՝ որպես հայ սփյուռքի քաղաքական ուժերի միասնության վկայություն¹⁹⁵: Նշանակալի էր այն, որ 1923 թվականին թույլ տրվեց նաև ՀԲԸՄ-ի գործունեությունը Խորհրդային Հայաստանում: Իհարկե, բարեգործական կազմակերպությունների գործունեությունը խորհրդային կարգերի հանդուժողականության ուղղակի արդյունքը չէր: Այն նպտակ ուներ երկիրն ազատել սոցիալ-տնտեսական ծանր պայմաններից՝ օգտվելով սփյուռքի նշանակալի հատվածի ֆինանսական ներուժից:

1937 թվականին՝ ԽՍՀՄ-ում իրականացվող քաղաքական բռնաճնշումների տրամաբանությամբ, ՀՕԿ-ի ղեկավարները մեղադրվեցին ազգային-հեղափոխական շարժումներ հրահրելու մեջ, ինչի արդյուքում կազմակերպությունը լուծարվեց: 1937 թվականին կասեցվեց նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեությունը, ինչի

¹⁹⁵ Դավաքյան Կ., նշվ. աշխ., էջ 24:

արդյունքում դադարեցին հարաբերությունները Խորհրդային Միության սահմաններից դուրս բնակվող հայության հետ¹⁹⁶։ Փոխարենը կոչեր էին արվում համերաշխություն հաստատելու թուրք աշխատավորների հետ՝ ընդդեմ բուրժուական շահագործողների, և ներքաշելու սփյուռքահայերին իրենց երկրներում հեղափոխական շարժումների և հայկական համայնքներում սոցիալ-դասակարգային պայքար հրահրելու մեջ¹⁹⁷ :

Մփյուռքի ինստիտուցիոնալ հատվածը այս շրջանում չդրսևորեց գաղափարական միասնություն, որը կարող էր ամբողջ սփյուռքը կոնսոլիդացնող ազդեցություն ունենալ։ Ավանդական կուսակցությունները բախվել էին լուրջ երկրնտրանքի՝ ստիպված լինելով ընտրություն կատարել Հայստանի իշխանությունների գաղափարախոսության և Հայաստանի գոյության միջև։ Դաշնակցությունը, հանդես գալով որպես կոշտ ընդդիմություն, ընտրեց երկրնտրանքի գաղափարական բաղադրիչը՝ հանդես գալով խորհրդային կարգերի դեմ։ Սոցիալ-դեմոկրատական ու Ռամկավար ազատական կուսակցությունները, հաշվի առնելով Հայստանի ազգային շահերը, ստեղծեցին «մեղմ» ընդդիմություն՝ փորձելով պահպանել աստիճանաբար խարխլվող հայրենիք-սփյուռք հարաբերությունները։ Մակայն Խորհրդային միությունը մինչև 1940-ականների կեսերը որևէ տարբերություն չէր դնում գաղափարական երկու բևեռների միջև՝ նրանց հավասարապես համարելով սպառնալիք խորհրդային կարգերի համար։

Իրավիճակը փոխվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ ԽՍՀՄ-ը ազդեցության ոլորտների ընդլայնման նպատակով վերաձևակերպեց իր քաղաքակա-

¹⁹⁶ Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Երևան, 1999, էջ 169։

¹⁹⁷ Дятлов В., Мелконян Э., նշվ. Աշխ., էջ 158։

նությունը սփյուռքի նկատմամբ՝ փորձելով համախոհներ ձեռք բերել արդեն ոչ թե դասակարգային շերտավորման, այլ քաղաքական շահերի հիման վրա: Ռամկավար ազատական և Հնչակյան կուսակցություններն իրենց կառույցներով դիտարկվեցին որպես առաջադիմական և հայրենասիրական ուժեր, ինչի արդյունքում նրանց ընձեռվեց Հայաստանի հետ կապեր հաստատելու սահմանափակ հնարավորություն: Այդուհանդերձ, Դաշնակցությունը հավատարիմ մնաց որդեգրած արմատական մոտեցումներին և անմասն մնաց հայրենիքում ներգրավվածության հնարավորություններից¹⁹⁸:

Մփյուռքահայերի հետ կապերի զարգացման և ամրապնդման նպատակով 1944 թվականին ստեղծվեց Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերություն, որը նպատակ ուներ ուսումնասիրելու արտասահմանում գտնվող հայ համայնքների իրավական, քաղաքացիական, սոցիալական կարգավիճակը, ինստիտուցիոնալ և ֆինանսական ներուժը, մշակութային և կրթական գործունեությունը:¹⁹⁹ Կազմակերպության գործունեության ընթացքում ընդլայնվեցին հայրենիք-սփյուռք մշակութային և կրթական կապերը, ինչը հիմք հանդիսացավ 1964 թվականին Հայկական ԽՍՀ իշխանությունների կողմից Մփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի ստեղծման համար, որը նպատակ ուներ խորացնելու Հայրենիք-Մփյուռք հարաբերությունները²⁰⁰:

Խորհրդային տարիներին սփյուռքը զերծ էր հայրենիքում քաղաքական ներգրավվածություն ունենալու

¹⁹⁸ Նույն տեղում, էջ 167:

¹⁹⁹ Եղիազարյան Ա., Անանյան Մ., Հովհաննիսյան Ա., Հովհաննիսյան Է., Հովսեփյան Մ., Վարդանյան Հ., նշվ. Աշխ., էջ 96-98:

²⁰⁰ Նույն տեղում, էջ 102:

հնարավորություններից, իսկ առկա փոխգործակցությունը ՀԽՍՀ-ի գոյության ողջ ընթացքում սահմանափակվեց մշակութային և բարեգործական փոխհարաբերություններով: Հայրենիք-սփյուռք բարեգործական և մշակութային կապերի կադապարը ձևավորվեց որպես ավանդույթ՝ իր արտացոլումն ունենալով նաև Հայաստանի անկախացումից հետո: 1988 թվականի Սպիտակի երկրաշարժից և ԽՍՀՄ փլուզումից հետո երկիրը հայտնվել էր բարդ պայմաններում, իսկ խորհրդային տարիներին ձևավորված քաղաքական, հասարակական և տնտեսական ենթակառուցվածքների փլուզումը մեծապես վտանգի տակ էին դրել երկրի ինքնակազմակերպման հետագա ընթացքը: Այս շրջանում մեծ եղավ սփյուռքի կողմից ստացվող նյութական աջակցությունը, որը զգալի օժանդակություն էր հայրենաբնակներին: Սպիտակի երկրաշարժից հետո բարեգործական մի շարք կազմակերպությունների (Ազնավուրը՝ Հայաստանին, ՀՕՖ, ՀՕՍ, Լինսի հիմնադրամ, ՀԲԸՄ, Գալուստ Կյուլպենկյան հիմնադրամ) կողմից Հայաստանին հատկացված օգնությունը գերազանցեց 280 մլն դոլարը²⁰¹:

Անկախության վերականգնումից հետո սփյուռքի քաղաքական ուժերը հնարավորություն ստացան առանց որևէ արգելքի մասնակցելու հայրենիքի քաղաքական գործընթացներին և աջակցելու Հայաստանի պետականության կայացմանը: Սակայն սփյուռքի քաղաքական մասնակցությունը հայրենիքի պետականակերտման հարցում հեռու էր հարթ և արդյունավետ համարվելուց՝ երկուստեք սխալների ու անպատրաստ լինելու արդյունքում: Ունենալով համապատասխան քաղաքական փորձ ու ներուժ՝ ՀՀԴ, ՄԴՀԿ և ՌԱԿ չկարողացան ընդհանուր հայտարարի գալ երկրի ներքին և արտաքին խնդիրների շուրջ:

²⁰¹ Дятлов В., Мелконян Э., նշվ. Աշխ., էջ 168:

Հայաստանում սրվեց իշխանության համար մղվող պայքարը, արտացոլվելով իշխանություն-ընդդիմություն սուր հակազդեցությամբ, որն ամենևին չէր կրում գաղափարական բնույթ, այլ խարսխվում էր խմբային շահերի անհաշտ պայքարի վրա:

Հայրենիքի ներքաղաքական կյանքին սփյուռքի մասնակցության սկիզբը դրվեց 1988 թվականին՝ սփյուռքի երեք ազգային կուսակցությունների համատեղ հայտարարությամբ, որն ուղղված էր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջի իրագործմանը²⁰²: Չնայած դարաբաղյան հակամարտությունը սփյուռքի և հայրենիքի քաղաքական ուժերը մոբիլիզացնող դեր ունեցավ, այնուամենայնիվ անկախ պետականության ձևավորման առաջին իսկ տարիներին Հայաստանը ազգային գաղափարախոսության արդիականացման խնդիր ուներ, որը կարող էր երկարաժամկետ հեռանկարում ամրապնդել հայրենիք-սփյուռք քաղաքական մոբիլիզացիան:

Ներքաղաքական կյանքում սփյուռքի մասնակցությունը պետության գոյության առաջին տարիներին մեծապես վերապահված էր ՀՅԴ-ին, սակայն վերջինիս ներգրավվածությունը որպես ընդդիմություն չտվեց ցանկալի արդյունք: 1991 թվականին իրականացված նախագահական ընտրություններում սփյուռքի կուսակցություններից միայն ՀՅԴ-ն առաջադրեց Սոս Մարգարյանի թեկնածությունը, սակայն ընտրողների միայն 4,3 %-ը քվեարկեց վերջինիս օգտին: Անկախության նախաշեմին՝ 1990 թվականին, կազմվեց Հայաստանի առաջին գումարման Գերագույն խորհուրդը, որում ՀՅԴ-ը և ՌԱԿ-ը ներկայացված

²⁰² Սփյուռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991, ընտրանի), կազմեց, Գ. Եազըճեան, Երևան, 2016, էջ 20-21:

էին կուսակցական խմբակցություններով²⁰³: Այնուամենայնիվ ընդդիմությունը չկարողացավ միավորվել և ներկայացնել քաղաքական այլընտրանք իշխանությանը: Ավելին՝ պառակտվեց ՌԱԿ-ը, ինչի արդյուքում հիմնադրվեցին Ռամկավար-ազատական (լիբերալ-դեմոկրատական) և Ժողովրդական կուսակցությունները: Վերջինս հետագայում իրեն հռչակեց Արևելահայ լիբերալների կուսակցություն²⁰⁴: Կուսակցությունը վերամիավորվեց միայն 2000 թվականին՝ Աթենքում հրավիրված 22-րդ ընդհանուր պատգամավորական ժողովի արդյունքում²⁰⁵:

Հայրենիքում սփյուռքի քաղաքական ներուժը պետականության կայացման սկզբնական փուլում ջլատվեց նաև 1994 թվականին, երբ ՀՅԴ-ն մեղադրվեց ահաբեկչական գործունեության և հեղաշրջում կազմակերպելու մեջ: Այս ամենն ուղեկցվեց ՀՅԴ առաջնորդների ձերբակալություններով ու կասեցվեց ՀՅԴ-ի հովանավորությամբ այդ շրջանում գործող «Երկիր» և «Ազատամարտ» պաշտոնաթերթերի հրատարակումը, բռնագրավվեցին ՀՅԴ ողջ գույքն ու գրասենյակները: ՀՅԴ-ին ներկայացվել էր մեկ այլ մեղադրանք ևս, ըստ որի վերջինս խախտում էր Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքը, որով արգելվում էր օտարերկրացիների անդամակցությունը կուսակցություններին և արտաքին կառավարումը: Դեպքերի նման զարգացումը Հայաստանի պետականակերտման նախնական փուլում էապես նվազեցրին սփյուռքի քաղաքական ներուժի և փորձի օգտագործման հնարավորու-

²⁰³ Հայոց Խորհրդարանների Պատմություն (համառոտ ակնարկ) «Կանոնագիրք Հայոց»,

<http://www.parliament.am/parliament.php?id=parliament>, 21.12.17:

²⁰⁴ Մինասյան Է., Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, 2013, էջ 261-263:

²⁰⁵ Հայ Սփյուռք հանրագիտարան, էջ 725:

թյուններն՝ ի նպաստ Հայաստանի պետականության կայացմանը: Թեև պետք է նշել, որ այդ հնարավորությունները սահմանափակ էին, քանի որ ավանդական կուսակցությունները ժողովրդավարական երկրներում քաղաքական գործունեությամբ՝ ընտրություններ և դրանցով պայմանավորված այլ գործընթացներ, չէին զբաղվում:

Սփյուռքի ներգրավվածությունը Հայաստանի ներքաղաքական կյանքին և ավանդական կուսակցությունների ինտեգրումն անցան դժվարին ուղի՝ չտալով համագործակցության ցանկալի ելքեր: Պետականակերման գործում սեփական ներուժի չիրացման փորձը հանգեցրել է հայրենիք-սփյուռք փոխհարաբերություններում անվստահության մթնոլորտի առաջացմանը: Այլ էր սփյուռքի քաղաքական ներգրավվածությունը մյուս երկու հիմնախնդիրների՝ Ղարաբաղյան հակամարտության ու Ցեղասպանության ճանաչման հետ կապված:

Արցախյան պատերազմում սփյուռքի ներգրավվածությունը հիմնականում ծավալվեց ռազմական գործողություններին մասնակցությամբ, բարեգործական հիմնադրամներից ստացվող նյութական օգնությամբ, ինչպես նաև լոբբիստական գործունեությամբ: Հայկական լոբբիստական խմբերին հաջողվեց հասնել այն բանին, որ ԱՄՆ-ն սկսեց միջոցներ հատկացնել Լեռնային Ղարաբաղին: Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին ԱՄՆ-ի հատկացրած օգնությունը կազմել է շուրջ 1.6 մլդ դոլար, 1990-ականներին՝ լոբբիստական ջանքերով, տարեկան միջինը 90 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2001-2006 թվականներին՝ մոտ 70 մլն²⁰⁶:

Արժե դիտարկել խնդրի լուծման հարցում սփյուռքի քաղաքական մասնակցության ձևերը: Սկզբնական շրջանում

²⁰⁶ Armenian Americans & US Foreign Aid Policy <https://anca.org/us-aid/>.18.12.17.

ԱՄՆ հայ համայնքի լոբբիստական ջանքերով ԱՄՆ Կոնգրեսում ընդունվեց Ազատության աջակցության ակտի 907 բանաձևը, որով սահմանափակվում էր ԱՄՆ-ի կառավարության կողմից Ադրբեջանին օգնության տրամադրումը²⁰⁷: Այնուամենայնիվ վերջին տարիներին դարաբաղյան խնդրով հայկական լոբբիստական գործունեությունը սահմանափակվում է քարոզչական բնույթ ունեցող միջոցառումների կազմակերպմամբ և խնդրի վերաբերյալ արված հրապարակումներով, որոնք հիմնականում ծավալվում են փոխադարձ հանդիպումների, ուղերձների և համացանցային արշավների շրջանակներում: Նման բնույթ էր կրում ԱՄՆ Կապիտոլիումի բարձունքին Կոնգրեսի Հայկական հարցերով հանձնախմբի կողմից Արցախի անկախության 25-ամյակի առթիվ կազմակերպված միջոցառումը, որն իրականացվեց՝ չնայած ադրբեջանական լոբբիստական խմբերի ակտիվ հակաազդեցությանը²⁰⁸: Այնուամենայնիվ, Ղարաբաղյան հարցով սփյուռքի ներգրավվածության ընդհանրական պատկերը ցույց է տալիս, որ ֆինանսական և նյութական օժանդակությունից զատ, քաղաքական համատեքստում սփյուռքի արդյունավետ գործունեության ձևերը խնդրի կարգավորման հարցում էական չեն եղել: Հակամարտության սկզբնական տարիներին լոբբիստական կարճաժամկետ հաջողությունը՝ 907 բանաձևի ընդունումը, դարաբաղյան խնդրով սփյուռքի քաղաքական գործունեության առաջին և, թերևս, վերջին նշանակալի հաջողությունն էր: Դրան հաջորդած շրջանում սփյուռքի առնչությունը դարա-

²⁰⁷ Նույն տեղում:

²⁰⁸ Artsakh's 25th Anniversary Marked with Capitol Hill Celebration. December 7, 2016

<https://anca.org/press-release/artsakhs-25th-anniversary-marked-capitol-hill-celebration/>. 18.12.17

բաղյան խնդրին սահմանափակվում է հայտարարություններով և հրապարակումներով:

Բնականաբար, սփյուռքը ակտիվ գործունեությունը ունեցել է Ցեղասպանության ճանաչման գործընթացում: Դրանով, հիմնականում, զբաղվել է Հայ դատի հանձնախումբը, որի գործունեության արդյունքում մի շարք երկրներ ընդունել են ցեղասպանության ճանաչման բանաձևեր, իսկ որոշներն էլ ցեղասպանության մերժումը քրեականացնող բանաձևեր: Այդուհանդերձ, Ցեղասպանության ճանաչման հարցում հայկական լոբբինգի հաջողությունների մասին պետք է խոսել որոշ վերապահումներով: Ամերիկայի հայ համայնքը իր լոբբիստական գործունեության ընթացքում քաղաքական լուրջ հաջողություն, այնուամենայնիվ, չի գրանցվել: Միաժամանակ, հայկական լոբբին կարողացել է որոշակի արդյունքներ գրանցել գործունեության այլ մակարդակներում: Մասնավորապես, 2006 թվականին Վաշինգտոնը որոշեց ետ կանչել Հայաստանում Ամերիկայի դեսպան Ջոն Էվանսին, քանի որ վերջինս հրապարակայնորեն հղում էր կատարել Հայոց Ցեղասպանությանը: Նախատեսվում էր Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան նշանակել Ռիչարդ Հոգլանդին, ով ոչ միայն ժխտողական վերաբերմունք էր ցուցաբերում ցեղասպանության ճանաչման հարցում, այլ նաև կասկածի տակ էր դնում վերջինիս կարևորությունը: Այս հանգամանքը մեծ վրդովմունք առաջացրեց Ամերիկայի հայ համայնքի շրջանում և Հայ Դատի գրասենյակի գործունեության արդյունքում Հոգլանդը չնշանակվեց դեսպան: Արդյունքում, դեսպան նշանակվեց Մարի Յովանովիչը, ով առավել դիվանագիտական մոտեցում էր ցուցա-

բերում Ցեղասպանության հարցին²⁰⁹: Հայկական լոբբինգը հաջողության հասավ մեկ այլ ոլորտում, երբ 2002 թվականին հաջողվեց Հայաստանը բացառել ահաբեկչության հնարավոր աղբյուրներ հանդիսացող երկրների ցուցակում ընդգրկվելուց²¹⁰: Մեկ այլ նշանակալի իրադարձություն էր Կոնգրոսի 306 բանաձևի ընդունումը, որում պահանջ էր ներկայացված առ այն, որ Թուրքիան անվերապահորեն վերադարձնի քրիստոնեական եկեղեցու ողջ ունեցվածքը, թույլատրի կրոնական արարողությունների իրականացումը և եկեղեցու ունեցվածքի վերականգնումը²¹¹: Այդուհանդերձ, ցեղասպանության ճանաչման խնդրով սփյուռքի ներգրավվածության գործնական օրինակների դիտարկումը վկայում է, որ շոշափելի և տևական արդյունքներ չեն գրանցվել, իսկ լոբբիստական հաջողությունները ծառայել են կարճաժամկետ նպատակների իրականացմանը:

Քաղաքական հարցերում հայրենիք-սփյուռք հարաբերությունների վրա զգալի հետք թողեց 2009 թվականին Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման փորձը, որը միանշանակ չընդունվեց սփյուռքում: Արձագանքը բացասական էր, ինչի արդյունքում կրկին վտանգվեց Հայաստան-սփյուռք միասնականությունը: Թեև հարաբերությունների կարգավորմամբ Հայաստանի իշխանությունների շահագրգռվածությունը միանգամայն հասկանալի է, սակայն ի վերջո հաստատվեցին այդ գործընթացի հետ կապված

²⁰⁹ Zarifian J., The Armenian-American Lobby and its Impact on U.S. foreign Policy. Social science and modern society. Simposium: America in the World. Springer Vol. 51, No 5, 2014, pp. 503-512.

²¹⁰ Նույն տեղում:

²¹¹ H.Res.306 - Urging the Republic of Turkey to safeguard its Christian heritage and to return confiscated church properties. 112th Congress (2011-2012), <https://www.congress.gov/bill/112th-congress/house-resolution/306/text>, 17.12.17

մտավախությունները²¹² և հարաբերությունների կարգավորումը տապալվեց:

Հայրենիք-սփյուռք հարաբերությունների համատեքստում նշանակալի իրադարձություն էր 2008 թվականին ՀՀ Սփյուռքի նախարարության ստեղծումը, որը նպատակ ուներ համակարգելու հայրենիք-սփյուռք հարաբերությունները՝ փոխըմբռնման, փոխվստահության և գործընկերային հարաբերությունների հիման վրա: Նախարարության ստեղծումը կարևոր քայլ էր սփյուռքի հետ կապերի ինստիտուցիոնալացման համար: Անցած տասը տարիների արդյունքների ու գործունեության սկզբունքների վերլուծությունը վկայում է, որ կառույցը կարևոր առաքելություն ունի, որի իրականացման համար պահանջվում է աշխատանքի սկզբունքների ու բովանդակության արդիականացում, քանի որ արդի համազգային խնդիրների լուծման համար, հաշվի առնելով դրանց բարդությունը, անհրաժեշտ է և հայրենի կառավարության, և սփյուռքի գործունեության արմատական վերանայում և արդյունավետության մեծացում: Որևէ կողմի թերացումը հղի է ճակատագրական զարգացումներով թե հայության, թե Հայաստանի համար:

Հայկական սփյուռքի քաղաքական ուղղվածություն ունեցող կառույցների գործունեության արդյունքները գնահատելիս պետք է արձանագրել, որ առավել ակտիվն ու գործունը եղել է ՀՅԴ-ն: Այդուհանդերձ, այդ կառույցների ընդհանուր արդյունքները չեն կարող գոհացուցիչ լինել, քանի որ սփյուռքում ազգային ինքնության պահպանության հարցում էական բարելավումներ չեն արձանագրվել, իսկ այլ համազգային հարցերի հետ կապված, թեև համասփյուռքյան

²¹²Թորոսյան Ս., Հարավային . . . , էջ 49-62:

կառույցների գործունեության ընթացքում եղել են առանձին լոբբիստական հաջողություններ, չեն արձանագրվել էական տեղաշարժեր առկա հիմնախնդիրների համար: Մփյուռքի ներգրավման հնարավորությունները սահմանափակվել են իրավիճակային և կարճաժամկետ հեռանկար ունեցող լուծումներով: Ջարգացած չէ սփյուռքի քաղաքական խոշորագույն կառույցների ցանցային համագործագությունը, ինչը քաղաքական խնդիրների լուծման հարցում համատեղ գործունեությունը դարձնում է անկարելի: Մփյուռքի քաղաքական լուրջ կառույցները կենտրոնացած են հիմնականում ԱՄՆ-ում, ինչը հանգեցնում է սփյուռքի որոշակի բևեռացվածության: Մինչդեռ ամենամեծ՝ Ռուսաստանի հայկական համայնքը չի դրսևորում քաղաքական որևէ ներուժ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մփյուռքների ձևավորման, գործունեության և հայրենիքների ու ընդունող երկրների կառավարությունների հետ համագործակցության հարցերին նվիրված ուսումնասիրությունների, ինչպես նաև հայկական սփյուռքի վիճակի ու խնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ

- Վերջին 3-4 տասնամյակների ընթացքում գլոբալացման խորացման աննախադեպ արագության և հաղորդակցման միջոցների ու հնարավորությունների արմատական կատարելագործման արդյունքում որակապես փոխվել են գրեթե բոլոր հասարակական գործընթացների ու երևույթների թե արագությունը, թե բովանդակությունը: Մասնավորապես, էապես փոխվել է ոչ միայն սփյուռքների աշխարհագրությունն ու կառուցվածքն, այլև հայրենիքի ու ընդունող երկրի հետ փոխազդեցության ձևերն ու հնարավոր հետևանքները:

- Վերջին տասնամյակների գլխավոր փոփոխությունը սփյուռքների գործունեության մեջ պայմանավորված է երկու հանգամանքով. այն դարձել է շատ ավելի դինամիկ և մեծ կարևորություն է ստացել քաղաքական բաղադրիչը: Միջազգային հարաբերություններում սփյուռքները դարձել են «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» եռանկյան բոլոր գագաթների և դրանց միջև հարաբերությունների կարևոր գործոն: Որպես հետևանք, զգալիորեն մեծացել է թե ընդունող երկրում, թե հայրենիքում տեղի ունեցող գործընթացների վրա սփյուռքների ազդեցության հնարավորությունների ուսումնասիրության և կատարելագործման նկատմամբ ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական շրջանակների հետաքրքրությունը:

- Մփռուքների ավանդական դասակարգման շրջանակներում հայկական սփյուռքը համարվում է դասական դեպք, ինչպես հրեականն ու հունականը, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ անցած դարասկզբին Օսմանյան կայսրության իրականացրած ցեղասպանությունը եղել է ժամանակակից հայկական սփյուռքի ձևավորման ամենաազդեցիկ գործոնը: Առավել ևս, որ որևէ սփյուռքի ինստիտուցիոնալ ներուժն ու գործընթացների վրա ազդեցության հնարավորություններն ու կարողությունները գնահատելու տեսակետից առանցքային են վերջին հարյուր տարվա ընթացքում տեղի ունեցած իրադարձություններն ու ձևավորված հատկանիշները:

- ԽՍՀՄ փլուզումից հետո էապես փոխվեցին հայկական սփռուքի ինչպես կառուցվածքն, այպես էլ հատկանիշները: Որպես հայկական սփյուռքի գլխավոր հատկանիշները ձևավորող գործոններ առանձնանում են երկուսը: Վերջին հարյուրամյակի ընթացքում հայկական սփյուռքը ձևավորվել է հիմնականում երկու ստվար հոսքերի՝ Ցեղասպանության և ԽՍՀՄ փլուզումից հետո սկսված արտագաղթի արդյունքում: Դրանք ունեն միանգամայն տարբեր բնույթներ, որոնցով են պայմանավորված ոչ միայն սփյուռքի տարբեր հատվածների ներքին լարվածություններն, այլև այդ հատվածների վերաբերմունքը հայրենիքի նկատմամբ ու գործունեության շրջանակներն ընդունող երկրներում:

- Արդի հայկական սփյուռքի երկու գլխավոր հատվածների հատկանիշների տարբերությունները պայմանավորված են ոչ այնքան ձևավորման երկու գլխավոր հոսքերի ժամանակային մեծ տարբերությամբ (գրեթե մեկ դար) կամ այդ հոսքերի դրդապատճառների տարբերությամբ (առաջինը Ցեղասպանության հետևանք էր՝ «գոհ-սփյուռք»

բնորոշմամբ, երկրորդն ուներ երկու բաղադրիչ՝ նույն բնորոշումն ուեցող աղբբեջանահայության հոսք և հայրենիքից արտագաղթողների հոսք՝ «աշխատանքային սփյուռք» բնորոշմամբ), որքան այդ հոսքերը ձևավորող մարդկանց կենսավորձը, արժեհամակարգը և անձնային ու խմբային հատկաբիշներ ձևավորող այլ գործոններ:

• Հայկական սփյուռքի բնույթը, հատկանիշները, կառուցվածքն ու կարողությունները պայմանավորող հիմնական առանձնահատկություններից է նաև այն հանգամանքը, որ առաջին մեծ հոսքի ինստիտուցիոնալացումը գրեթե ամբողջությամբ տեղի ունեցավ 1921 թվականին Հայաստանի Հանրապետության անկումից հետո, երբ երկրում կոմունիստական վարչակարգի հաստատման հետևանքով հիմնական կուսակցություններն արտագաղթեցին և սփյուռքում դարձան համակարգաստեղծ կառույցներ: Ձևավորվեց ավանդույթ, որի համաձայն գրեթե ցանկացած նորաստեղծ՝ քաղաքական, մշակութային, մարզական, լրատվական կամ այլ բնույթի, կառույց այս կամ այն չափով կապակցված էր երեք կուսակցություններից (ՀՅԴ, ՌԱԿ, ՄԴՀԿ) որևէ մեկի հետ: Եթե այդ հանգամանքը սկզբնական շրջանում ուներ դրական ազդեցություն՝ առկա կուսակցական կառույցներն արագ բյուրեղացում էին ապահովում ինստիտուցիոնալացման բարդ գործընթացի համար, ապա հետագայում դարձավ լուրջ միջոցների փոշիացման պատճառ, ինչպես նաև խոչընդոտ արդյունավետ գործունեության համար: Կառույցների տեսակների յուրաքանչյուրից ստեղծվում էր երեքը (մեկական՝ յուրաքանչյուր կուսակցության համար), որոնց համար շատ հաճախ գլխավոր նպատակ էր դառնում ոչ այնքան սեփական զարգացումն ու գործունեության արդյունավետությունը, որքան մյուսների նկատմամբ գերազանցությունը:

• Հայկական սփյուռքի կոնսուլիդացիայի և հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործման հիմնական խոչընդոտներից են նաև ձևավորման երկրորդ խոշոր հոսքի՝ ԽՍՀՄ փլուզումից հետո սկիզբ առած արտագաղթի արդյունքում առաջացած ներսփյուռքյան (վերջին երկու խոշոր ալիքների ներկայացուցիչների միջև) լարվածություններն ու շատ հարցերում մոտեցումների էական տարբերությունները, մասնավորապես, հայրենիքի նկատմամբ: Ավանդական սփյուռքի ներկայացուցիչների պատկերացումները և վերաբերմունքը հայրենիքի նկատմամբ հաճախ առասպելականացված են՝ տևական ժամանակահատված պետականության բացակայության և ԽՍՀՄ-ի և Թուրքիայի վարչակարգերի բնույթով պայմանավորված հայրենիքի երկու հատվածների խիստ սահմանափակ մատչելիության հետևանքով: Վերջին ալիքի ներկայացուցիչների վերաբերմունքը հայրենիքի նկատմամբ ձևավորվել է այնտեղ հետխորհրդային շրջանում ապրած տարիների դժվարությունների, առկա բացասական երևույթների, ինչպես նաև ներքին խռովքը մարելու՝ պետականության վերականգնումից հետո հայրենիքը լքելու քայլն ինչ որ կերպ արդարացնելու ձգտման ազդեցությամբ:

• Հայկական սփյուռքի գործունեության արդյունավետության մեծացման մյուս դժվարությունը կապված է այն հանգամանքի հետ, որ սփյուռքյան համայնքները տարածված են մեծ թվով երկրներում և առանձին խմբեր պահանջում են միանգամայն առանձնահատուկ մոտեցումներ: Կարելի է առանձնացնել նման չորս խմբեր՝ ռուսաստանյան, եվրոպական, ամերիկյան և մերձավորարևելյան, որոնք, պայմանավորված հյուրընկալող երկրի առանձնահատկություններով, ունեն միմյանցից էականորեն տարբերվող հատկանիշներ, պատկերացումներ ու մոտեցումներ հայրենի և հյուրընկալող

երկրների հիմնախնդիրների, դրանց լուծման ուղիների, իրենց դերակատարության և այլ առանցքային հարցերի վերաբերյալ:

- Էական փոփոխություններ են տեղի ունեցել նաև սփյուռքում ավանդական կուսակցությունների ազդեցության շրջանակների հետ կապված, սակայն դա սփյուռքի ինստիտուցիոնալացման վրա լուրջ ազդեցություն չի ունեցել: Արդյունքում, սփյուռքյան զգալի հատվածներ դուրս են մնացել ներսփյուռքյան կարողությունների զարգացման ու կոնսոլիդացիայի գործընթացներից, քանի որ չեն ցանկացել ներգրավվել կուսակցական կառույցներում կամ դրանց ազդեցությունը կրող ինստիտուտներում: Նրանք գրեթե ներգրավված չեն նաև հայրենիք-սփյուռք և ընդունող երկիր-սփյուռք փոխհարաբերություններում: Հասկանալի է, որ այդ փոխհարաբերությունները շարունակվում են այն կառույցների հենքի վրա, որոնք ձևավորվել են Հայաստանի անկախության չգոյության պայմաններում: Ներսփյուռքյան խնդիրների արդյունավետ լուծման, ինչպես նաև հայրենիք-սփյուռք և ընդունող երկիր-սփյուռք հարաբերությունների արդյունավետության մեծացման համար անհրաժեշտ է հաղթահարել սփյուռքում առկա ներքին լարվածությունները, արդիականացնել սփյուռքի ինստիտուցիոնալ ներուժը՝ մեծացնելով ավանդական հաստատությունների ընդգրկումն ու գործունեության արդյունավետությունը, օգտագործել բոլոր՝ այդ թվում և հայրենիքի, հնարավորություններն ինքնության պահպանման նպատակով:

- Ինչպես սփյուռքների ուսումնասիրության տեսական խնդիրների, այնպես էլ հայկական սփյուռքի գործունեության ուսումնասիրությունները վկայում են, որ գործընթացների արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ են միջգիտակարգային ծավալուն հետազոտություններ՝ հաշվի

առնելով ժամանակակից միտումներն ու ազդեցիկ գործոն-ները: Այս աշխատանքը կարելի է դիտարկել որպես դրա համար անհրաժեշտ ներածություն, որը ներկայացնում է ընդհանուր իրավիճակը, դրանից բխող խնդիրները և վերջինների լուծման հաջողված դեպքերն ու դրանց նախադրյալները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն: Եր.: Ջանգակ-97, 2004, 288 էջ:

Եղիազարյան Ա., Անանյան Մ., Հովհաննիսյան Ա., Հովհաննիսյան Է., Հովսեփյան Մ., Վարդանյան Հ., Հայրենիք-սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը: Եր.: ԵՊՀ հրատ., 2017, 244 էջ:

Եորդեկյան Հ., ՀԲԸՄ հարյուրամյա ազգային ծառայություն, <http://www.agbu.am/am/about-2/agbu-history-1>, (21.12.17):

Թորոսյան Ս., Լեռնային Ղարաբաղ և Կոստվոկ

Հակամարտություններ, Բանակցություններ,

Աշխարհաքաղաքականություն: Եր.: Տիգրան Մեծ հրատ., 2012, 408 էջ:

Թորոսյան Ս., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Եր.: Գիտություն հրատ., 2006, 424 էջ:

Թորոսյան Ս., Հարավային Կովկասը օգոստոսյան պատերազմից հետո. Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, հայթուրքական հարաբերություններ, Եր., Տիգրան Մեծ հրատ., 2009թ.:

Կիրակոսյան Ա. Ջ., Հայկական հարցը եվ հայերի ցեղասպանությունը (պատմաիրավական եռալեզու տեղեկանք). - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2006:

Հակոբյան Հ. Հ., Հայկական սփյուռքը հարավոփոխ աշխարհում: Եր.: Հեղ. Հրատ., 2017, 652 էջ:

Համշխարհային հայկական կոնգրեսի պատմություն, <http://armcongress.am/պատմությունը>, (21.12.17):

Հայ Դատի Հանձնախումբ, http://ancnews.info/?page_id=837, (20.12.17):

Հայ հեղափոխական Դաշնակցություն, <http://www.arfd.info/hy/?p=175>, (20.12.17):

Հայ սփյուռք հանրագիտարան: Եր.: Հայկական Հանրագիտարան հրատ., ՊՈԱԿ, 2003, 730 էջ:

Հայ Օգնության Միություն, <http://arsarmenia.org/պատմություն>, (21.12.17):

Հայ օգնության ֆոնդ, <http://farusa.org/about/>, (21.12.17):

Հայաստան համահայկական հիմնադրամ,

<http://www.himnadram.org/en/our-mission>, (21.12.17):

Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., 546 էջ:

Հայոց Խորհրդարանների Պատմություն (համառոտ ակնարկ) «Կանոնագիրք Հայոց»,

<http://www.parliament.am/parliament.php?id=parliament>, (21.12.17):

Մելիքսեթյան Հ.Ու., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը: Եր., ԵՊՀ հրատ., 1985, 476 էջ:

Հովհաննիսյան Պ., Հայրենադարձության պատմության պատմագրությունը, 1946-1948թթ. Հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր:

Համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու: Եր., Լիմուշ, 2009, 406 էջ:

Մելքոնյան Է., Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Պատմություն: Եր.: Մուղնի Հրատ., 2005, 584 էջ:

Մելքոնյան Է., Հայաստանի երրորդ Հանրապետության և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, «Սփյուռքագիտություն. տեսության և պատմության հարցեր» տարեգիրք: Եր., ԵՊՀ հրատ., 2012, 298 էջ:

Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Եր., Նոյան Տապան, 1999, 201 էջ:

Մինասյան Է., Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն: Եր., ԵՊՀ հրատ., 2013, 624 էջ:

Յազրճյան Գ., Սփյուռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991, ընտրանի): Եր., Հեղինակային հրատ., 2016, 352 էջ:

Սարգսյան Հ., 1946-1948 թթ. Հայրենադարձության աշխարհագրությունը և Ժողովրդագրությունը: 1946-1948 թթ.

Հայրենադարձությունը եւ դրա դասերը. հայրենադարձության

- հիմնախնդիրն այսօր: Համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու: Եր., Լիմուշ, 2009, 406 էջ:
- Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն, <http://www.hunchak.org.au/aboutus/intro.html>, (20.12.17):
- Վիրաբյան Ա., Մեծ Հայրենադարձության հիմնահարցեր և խնդիրներ: 1946-1948 թթ. Հայրենադարձությունը եւ դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր: Համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու: Եր., Լիմուշ, 2009, 406 էջ:
- Վրացյան Ս., Խոսք ընդ ուսուցչի. Տ. Տ. Գևորգ Զ սրբ. Կաթողիկոսին: ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», Եր., 2009:
- Adamson F. B., Demetriou M., Remapping the boundaries of “state” and “national identity”: Incorporating diasporas into IR theorizing, *European Journal of International Relations*, 2007, 13, 4.
- Adamson F. B., The growing importance of Diaspora politics, *Current history*, NY, November 2016.
- Ahmed, S., Castaneda, C., Sheller M. F., Uprootings/regrounds: Questions of home and migration, NY, Berg, 2003, 304 p.
- Anderson B., Imagined Communities: Reflections on the Origins and Spread of Nationalism. London, 1983.
- Ang I., Together-in-Difference: Beyond Diaspora, Into Hybridity, 2003, 27, 2.
- Anteby-Yemini L., Berthomière W., Diaspora: A Look Back on a Concept, *Bulletin du Centre de recherche français à Jérusalem*, 2005, 16.
- ARF ban lifted by Justice Ministry Following the resignation of President Ter-Petrosian, ARF News, February 1998, 3.1(9), <https://web.archive.org/web/20091029113947/http://arf.am:80/English/ARFNews/09/0901.htm>, (20.12.17).
- Armenian Americans & US Foreign Aid Policy, <https://anca.org/us-aid/>, (18.12.17).
- Armenian Assembly of America, <https://armenian-assembly.org/about/>, (20.12.17).

- Armstrong J., Mobilized and Proletarian Diasporas, *The American Political Science Review*, 1976, 70, 2.
- Artsakh's 25th Anniversary Marked with Capitol Hill Celebration. December 7, 2016, <https://anca.org/press-release/artsakhs-25th-anniversary-marked-capitol-hill-celebration/>, (18.12.17).
- Avakian Sh., Nagorno-Karabagh: Legal Aspects, 3rd ed., Yerevan 2010.
- Bauböck R., Cold constellations and hot identities: Political theory questions about transnationalism and diaspora, Bauböck R., Faist T., (eds.), *Diaspora and Transnationalism: Concepts, Theories and Methods*: Amsterdam University Press 2010.
- Boumoutian G., *A Concise History of The Armenian People*, Mazda Publishers, Inc. Costa Mesa California 2006, 499 p.
- Boyle M., Kitchin R., Ancien D., *The NIRSA Diaspora Strategy Wheel & Ten Principles of Good Practice*, NUI Maynooth, 2009.
- Brubaker R., The 'diaspora' diaspora, *Ethnic and racial Studies*, 2005, 28, 1, 1-19.
- Bruneau M., *Diasporas et espaces transnationaux*. Anthropos-Economica. Paris, 2004.
- Bruneau M., *Diasporas*, Montpellier, GIP Reclus, 1995.
- Bruneau M., *Diasporas, transnational spaces and communities*, Bauböck R., Faist T., (eds.), *Diaspora and Transnationalism: Concepts, Theories and Methods*, Amsterdam University Press, 2010.
- Butler K. D., Defining Diaspora, Refining a Discourse, *Diaspora*, 2001, 10, 2, 2001.
- Canclini G., 'The state of war and the state of hybridisation', Gilroy P., Grossberg L., McRobbie A., (eds), *Without guarantees: In honour of Stuart Hall*, London, 2000.
- Catherine N., *Of Irish Descent: Origin Stories, Genealogy, and the Politics of Belonging*, Syracuse University Press, 2008, pp. 33-50.
- Chiang Chih-Yun, *Diasporic Theorizing Paradigm on Cultural Identity*, *Intercultural Communication Studies*, 2010, 19, 1.

Chun A. J., Pariah Capitalism and the Overseas Chinese of Southeast Asia: Problems in the Definition of the Problem, *Ethnic and Racial Studies*, 1989, 12.

Clifford J., Diasporas, *Cultural Anthropology*, 1994, 9, 3.

Cohen R., Diaspora: Beyond the Jewish Experience. The 15th Jacob Gitlin Memorial Lecture Public Lecture for the Jacob Gitlin Library, Cape Town 8001, South Africa, 2003.

Cohen R., Diasporas and The State: From Victims to Challengers. *International Affairs*, 1996, 72, 3.

Cohen R., Global diasporas. An introduction. Second ed., Routledge, 2008, 219 p.

Cohen R., New Roles for Diasporas in International Relations. *Diaspora*, 2005, 14, 1.

Cohen R., Seeds, roots, rhizomes and epiphytes: botany and diaspora. *Diasporas Reimagined Spaces, Practices and Belonging*. Oxford Diasporas Programme, 2015, 231 p.

Connor W., The Impact of Homelands upon Diasporas, *Modern Diasporas in International Politics*, ed. Sheffer G., NY: St. Martin's, 1986, 349 p.

Countries with the largest number of overseas Chinese.

<https://www.statista.com/statistics/279530/countries-with-the-largest-number-of-overseas-chinese/>, (18.12.17).

De Zayas A. , The Genocide Against The Armenians 1915-1923 And The Relevance of The 1948 Genocide Convention, *The European Armenian Federation for Justice and Democracy*, 2005, 55.

Department of Foreign Affairs and Trade: Statement of Strategy 2016-2019.

Department of Foreign Affairs and Trade, <https://www.dfa.ie/about-us/what-we-do/our-strategy-and-guiding-principles/>, (14.12.17).

Ding S., Sons of the Yellow Emperor Go Online: The State of the Chinese Digital Diaspora, *Global Migration and Transnational Politics*, Working Paper No. 13, 2010.

Dufoix S., *Diasporas*. The Regents of the University of California, 2008, 160 p.

- Ed Snitkoff R., Secular Zionism, http://www.myjewishlearning.com/israel/Jewish_Thought/Modern/Secular_Zionism.shtml, (20.12.17).
- Elazar D. J., The Jewish people as the Classic Diaspora: A Political Analysis, Jerusalem Center for Public Affairs. <http://www.jcpa.org/dje/articles2/classicdias.htm>, (20.12.17).
- Ember M., Carol R., Skoggard I., Encyclopedia of Diasporas: Immigrant and Refugee Cultures around the World. NY, Springer, 2004, 1242 p.
- Enterprise Ireland, <https://www.enterprise-ireland.com/en/About-Us/>, (18.12.17).
- Fazal S., Tsagarousianou R., Transnational Cultural Practices and Communicative Spaces, *Javnost/The Public*, 2002, 9, 1.
- Fitzpatrick D., "Emigration, 1871–1921", in A New History of Ireland, vol. 5: Ireland under the Union, 2, 1870–1921, (ed.) Vaughan W. E., Oxford, 1996, 1016 p.
- Fleshler D., Transforming America's Israel Lobby: The limits of its Power and the Potential for Change. Washington: Potomac Books, 2009, 230 p.
- Gamlén A., Cummings M., Vaaler P.M., Rossouw L., Explaining the Rise of Diaspora Institutions, IMI Working Paper No. 78, University of Oxford. 2013. Zimmermann K.F., Constant A.F., Diaspora economics: New perspectives, Maastricht Economic and social Research institute on Innovation and Technology (UNU.MERIT), Working paper No. 042, 2016.
- Gilmartin M., White A., Migrations: Ireland in a Global World, Manchester University Press. 2013, 256 p.
- Gilroy P., Against Race: Imagining Political Culture beyond the Color Line, Cambridge, MA: Harvard University Press, 2000, 416 p.
- Gilroy P., The Black Atlantic: Modernity and Double Consciousness, London, 1993, 280 p.
- Global Irish. Ireland's Diaspora Policy. Department of Foreign Affairs and Trade. March 2015,

- Gordon M., *Assimilation and American Life: The Role of Race, Religions and National Origins*. NY: Oxford University Press, 1964, 272 p.
- H.Res.306 - Urging the Republic of Turkey to safeguard its Christian heritage and to return confiscated church properties. 112th Congress (2011-2012). <https://www.congress.gov/bill/112th-congress/house-resolution/306/text>, (17.12.17).
- Hall S., *Cultural identity and diaspora*. Rutherford J., (ed.), *Identity: community, culture, difference*, London: Lawrence & Wishart, 1990, 239 p.
- Hall S., *New ethnicities*. 1996, Chen K. H., Morley D., (eds.), *Critical dialogues in cultural studies*, London: Routledge, 2005, 541 p.
- History of Irish Diaspora*. <https://www.yourirish.com/history/19th-century/irish-diaspora>, (16.12.17).
- Huntington S. P., *The clash of civilizations and the remarking of world order*, NY, 1996.
- IDA Ireland Annual Report & Accounts, 2016.
- Irish citizenship through birth or descent*. http://www.citizensinformation.ie/en/moving_country/irish_citizenship/irish_citizenship_through_birth_or_descent.html, (17.12.17).
- Jewish National Fund. <https://www.jnf.org/menu-2/our-vision>, (13.12.17).
- Kingsley A., White N., *Global Diaspora Strategies Toolkit: Diaspora Matters*, Dublin, 2011.
- Koinova M., *Autonomy and Positionality in Diaspora Politics*. *International Political Sociology*, 2012, 6, 1.
- Koinova M., *Can Conflict-Generated Diasporas be Moderate Actors during Episodes of Contested Sovereignty? Lebanese and Albanian Diasporas Compared*. *Review of International Studies*, 2011, 37, 1.
- Koinova M., *Diasporas and international politics: Utilising the universalistic creed of liberalism for particularistic and nationalist purposes*. Bauböck R., Faist T., (eds.), *Diaspora and Transnationalism: Concepts, Theories and Methods*, Amsterdam University Press, 2010.

- Lainer-Vos D., Diaspora-Homeland Relations as a Framework to Examine Nation-Building Processes, *Sociology Compass*, 2010, 4, 10.
- Liu H., Dongen V., *The Chinese Diaspora*. Oxford Bibliographie, 2013, <http://www.oxfordbibliographies.com/view/document/obo-9780199920082/obo-9780199920082-0070.xml>, (18.12.17).
- Medam A., Diaspora / Diasporas. Archétype et typologie, *Revue Européenne des Migrations Internationales*, 1993, 9, 1.
- Min Z. and Rennie L., Traversing Ancestral and New Homelands: Chinese Immigrant Transnational Organizations in the United States, *Asian and Pacific Migration Journal*, 2013, 647, 1.
- OCA/Organization of Chinese Americans – Asian Pacific American Advocates, <https://www.ocanational.org/mission/>, (19.12.17).
- O'Grady, Shared Meaning and Choice as Components of Armenian Immigration Adaptation, *Anthropological Quarterly*, 1981, 54.
- ORT, <https://www.ort.org/about-us/history/>, (14.12.17).
- Roth A., The role of diasporas in conflict, *Journal of International Affairs*, 2015, 68, 2.
- Safran W., Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return, *Diaspora*, 1991, 1.
- Sanjyan A., Armenians in the Middle East. Symposium on “Minorities in the Middle East”. Florida State University. April 3-4, 2008.
- Schwartz R., Israel and its Diaspora: A Case-Study. Prepared for GFMD ROUNDTABLE 3.2, Policy and Institutional Coherence on Migration and Development within Government. Center for International Migration and Integration, Jerusalem October, 2008.
- Shain Y., Role of Diasporas in Conflict Perpetuation or Resolution. *SAIS Review*, 2002, 22, 2.
- Shain Y., The Mexican-American diaspora's impact on Mexico, *Political Science Quarterly*, 2000, 114, 4.
- Sheffer G., *Diaspora Politics: At Home Abroad*, NY, Cambridge University Press, 2003.
- Sheffer G., *The Diaspora Phenomenon in the 21st Century: Ideational, Organizational and Behavioral Challenges: Opportunity*

Structures in Diaspora Relations: Comparisons in Contemporary Multi-level Politics of Diaspora and Transnational Identity, Center for Basque Studies, University of Nevada, 2007.

Starovoitova G., Sovereignty after Empire. Self determination Movements in the Former Soviet Union. Institute of Peace (USA), 1996, Peaceworks No. 19.

Stephen A. B., The Irish Diaspora and the Creation of an Irish-American Heritage.

<http://www.heritage.umd.edu/chrsweb/Ireland/ireland.htm>, (17.12.17).

Terrazas A., Batalova J., Chinese Immigrants in the United States. Migration Policy Institute, 2010.

<https://www.migrationpolicy.org/article/chinese-immigrants-united-states-0/>, (18.12.17).

The Armenian National Committee of America (ANCA), <https://anca.org/about-anca/profile/>, (20.12.17).

The Chinese Consolidated Benevolent Association (CCBA). <http://www.ccbany.org/eaboutus.html>, (18.12.17).

The Global Irish Network, <https://global.irish/GlobalIrishNetwork.aspx>, (17.12.17).

The Irish Diaspora, <https://www.americanhistoryusa.com/topic/irish-diaspora/>, (18.12.17).

The Jewish Agency, <http://www.jewishagency.org/inside-jewish-agency/content/4916>, (15.12.17).

The National Association of Chinese-Americans NACA, <https://www.naca-atlanta.org/about/>, (18.12.17).

The World Zionist Organization, <http://www.wzo.org.il/Mission-Statement>, (23.12.17).

Torosyan T., Conflict Resolution in the Framework of International Law: Case of Nagorno-Karabakh, Tigran Mets Publ. House, 2010.

Torosyan T., Vardanyan A., The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, Geopolitics, 20(3): 1-24.

- Tölölyan K., Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment, *Diaspora: A Journal of Transnational Studies*, 1996, 5, 1.
- Tölölyan Kh., Armenian Diaspora, Encyclopedia of Diasporas, Springer US, 2005.
- Tölölyan Kh., The Nation States and Its Others: In Lieu of a Preface. *Diaspora*, 1991, 1, 1.
- Trends in total migrant stock: The 2005 revision, <http://esa.un.org/migration>, (15.11.17).
- Tsagarousianou R., Rethinking the concept of diaspora: mobility, connectivity and communication in a globalised world, *Westminster Papers in Communication and Culture*, 2004, 1, 1.
- Van Hear N., Spheres of diaspora engagement, *Diasporas Reimagined Spaces, Practices and Belonging*. Oxford Diasporas Programme, 2015.
- Vital Statistics: Jewish Population of the World, <http://www.jewishvirtuallibrary.org/jewish-population-of-the-world#europe>, (15.12.17).
- Waterbury M. A., Bridging the divide: Towards a comparative framework for understanding kin state and migrant-sending state diaspora politics. Bauböck R., Faist T. (eds.), *Diaspora and Transnationalism: Concepts, Theories and Methods* Amsterdam University Press, 2010.
- Weinar A., Instrumentalising diasporas for development: International and European policy discourses. Bauböck R., Faist T. (eds.), *Diaspora and Transnationalism: Concepts, Theories and Methods* Amsterdam University Press, 2010.
- World Chinese Entrepreneur Association, <http://www.wcec-secretariat.org/en/>, (18.12.17).
- World Jewish Congress, <http://www.worldjewishcongress.org/en/about>, (14.12.17)
- Yuan Z., Guo J., Zhu H., Confucius Institutes and the limitations of China's global cultural network.
- Zapata-Barrero R., Gabrielli L., Sánchez-Montijano E., Jaulin Th., The political participation of immigrants in host countries: An

interpretative framework from the perspective of origin countries and societies, INTERACT RR 2013/07, Robert Schuman Centre for Advanced Studies, San Domenico di Fiesole (FI): European University Institute, 2013.

Zarifian J., The Armenian-American Lobby and its Impact on U.S. foreign Policy. Social science and modern society. Simposium: *America in the World*. Springer, 2014, 51, 5.

Авдашкин А. А., Проблема диаспор в зарубежной и отечественной литературе: вторая половина XX – начало XXI в., *Вестник Южно-Уральского Профессионального Института*, 2013, 12, 3, 4-12.

Арутюнов С.А., Козлов С. Я., Диаспоры: скрытая угроза или дополнительный ресурс, *Независимая газета*, 23 ноября, 2005.

Дятлов В., Мелконян Э., Армянская диаспора: очерки социокультурной типологии. Ер., Институт Кавказа, 2009, 207 с.

Жуджунь Д., Ковалев М., Новик В., Феномен экономического развития Китая, Минск, Издательский центр БГУ, 2008, 446.

Колосов В. А., Галкина Т. А., Куйбышев М. В., География диаспор на территории бывшего СССР, *Общественные науки и современность*, 1996, 5.

Левин З. И., Менталитет диаспоры (системный и социокультурный анализ). М., Издательство "Крафт+", 2001, 170 с.

Лошкарёв И.Д., Эволюция понятия «диаспора» в политической науке, *Этносоциум и межнациональная культура*, 2017, 106, 4.

Лурье С.В., Историческая этнология. М., Аспект Пресс, 1997, 448с.

Мыльников М.А., Современные диаспоры в глобальном коммуникационном пространстве. Вестник московского университета, 2007,18, 2.

Полоскова Т. В., Современные диаспоры (внутриполитические и международные аспекты). М., 2002, 252 с.

Попков В. Д., Феномен этнических диаспор. М., 2003, 340.

- Попков В.Д., Некоторые основания для типологии диаспор, <http://lib.socio.msu.ru/1/library?e=d-000-00---0kongress>, (19.09.2017).
- Сведенцов В. Л., Политика КНР в отношении китайской диаспоры в странах Юго-Восточной Азии, *Проблемы национальной стратегии*, 2016, 5 (38).
- Тишков В. А., Исторический феномен диаспоры. Национальные диаспоры в России и за рубежом в XIX-XX вв. Сб. ст. под ред. Полякова Ю.А. и Тарле. Г.Я., М., 2001.
- Тоценко Ж.Т., Чаптыкова Т.П., Диаспора как объект социологического исследования, *Социс*, 1996, 12.
- Шеффер Г., Диаспоры в мировой политике, *Диаспоры*, 2003, 1.